# ԷՋՄԻԱԾԻՆ



Բ - Գ
2001

Ам146

ֆգ

ԾԷ ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ
ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Փետրուար-Մարտ
2001

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարքի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Բրիտանական Գրադարանում հայ հոգևոր մշակույթի ցուցահանդեսի բացմանը՝ նվիրված Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն ընդունելու 1700-ամյակին . . . . . . . . . . . . . . 3

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահատանքի գիրը Նիկոզիայի (Կիպրոս) ՀԲԸՄ Մելքոնյան Կրթական Հաստատությանը . . . . . . . 6

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահատանքի գիրը Լոս Անջելեսի ՀԲԸՄ Մանուկյան-Դեմիրճյան վարժարանին . . . . . . . . . . . . 8

Հայրապետական պարգևաբաշխություններ . . . . . . 10

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Վրաստանի կառավարական պատվիրակությանը . . . . . . . . . . 11

Միաբանական համագումար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում . . 12

Գարեգին Բ Կաթողիկոսը ներկա գտնվեց ուղղափառ խորհրդարանականների միջազգային կոնֆերանսի բացմանը . 13

Գարեգին Բ Կաթողիկոսը պաշտոնական այցելությամբ մեկնեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի պաշտոնատեղի՝ Ժնև . . . . . . . . . . . . . . . . . . . . . 14

ԵԱՀԿ գործող նախագահ Միրչա Ջոանան այցելեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին . . . . . . . . . . . . . . . . . . 15

Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց երկաթուղային ճանապարհների ղեկավարների երևանյան նիստի մասնակիցներին . . . . . . . . . . . . . . . . 16

Գարեգին Բ Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը հայ կանանց՝ Մարտի 8-ի առիթով . . . . . . . . . . 16

Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց հայ-ամերիկյան միջկառավարական աշխատանքային խմբի պատվիրակությանը . . . . 17
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Կիպրոսի Ներկայացուցիչների Պալատի նախագահ Սպիրոս Կիպրիանուին . . . . . . . . 18
Գարեգին Բ Կաթողիկոս. «Ս. Էջմիածինն է խանդավառել և ուղենշել նրանց առաջելության ճանապարհը» . . . . . . . . 19
Ժողովներ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում . . . . . . . . . . 21
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Վրաստանի արտաքին գործերի նախարարին . . . . . . . . . . . . . . . . . . 22
Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում . . 23
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի և Ուկրաինայի կոմունիստական կուսակցությունների ղեկավարներին . . . 25

## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

**ՀԱՅԿ ԴՊԻՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ** - Հանդիսություն՝ նվիրված Վարդանանց ճակատամարտի 1550-ամյակին . . . . . . . . 26
**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍՐԿ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ** - Վարդապետական աստիճանի տվչություն Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում . . . . . . . . . . . . . . . . . . . . 32
Տ. Եզրաս վարդապետ Ներսիսյան . . . . . . . . . . 34
Տ. Դերենիկ վարդապետ Դավթյան . . . . . . . . . . 36
Տ. Արշակ վարդապետ Խաչատրյան . . . . . . . . . . 38
Քահանայական ձեռնադրություն և վեղարի տվչություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում . . . . . . . . . . . . . . 40
Տ. Իգնատիոս աբեղա Մալխասյան . . . . . . . . . . 42
Տ. Հարություն քահանա Ծատուրյան . . . . . . . . . 43
Տ. Զենոն քահանա Բարսեղյան . . . . . . . . . . . 44
Տ. Թաթուլ քահանա Գասպարյան . . . . . . . . . . 45
Տ. Ղևոնդ քահանա Մայիսյան . . . . . . . . . . . 46
Հաղորդագրություն . . . . . . . . . . . . . . . 48

## ԿՐՈՆԱԿԱՆ

Տ. Կոմիտաս վարդապետ Հովնանյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում . . . . . . . . . . . 49
Տ. Արտակ վարդապետ Տիգրանյանի խոսքը միաբանական համագումարի բացման առիթով . . . . . . . . . 53

## ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

**ՌԻՄԱ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՄԻՐՈՒՄՅԱՆ** - Օրենքի և կառավարության բնական (աստվածային) խորհուրդը Հովհաննես Տերոյենցի պատմափիլիսոփայության մեջ . . . . . . . . 55

**ԼԻԼԻԹ ՍԵՅՐԱՆՅԱՆ** - Աստվածամարդությունից մինչև աստվածերգություն . . . . . . . . . . . . . . 63

## ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

**ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ** - Որո՞նք են Բագրատունյաց դարաշրջանի «Հայոց իրավունք» հուշարձանները . . . . . . . . 79

**ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ** - Մակար Եկմալյանի ուսումնառությունը Պետերբուրգում . . . . . . . . 86

**ՊԵՏՐՈՍ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ** -Արժեքավոր վավերագիր Մայր Աթոռի 1920-ական թվականների կացության վերաբերյալ . . . . . . . . . . . . . . . . 96

**ԱՆԱՀԻՏ ՄՈՒՐԱԴՅԱՆ** - Հայ պարբերական մամուլի պատմությունից . . . . . . . . . . . . . 105

## ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

**ԱՐՏԱՇԵՍ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ** - «Ացախի գանձերը» . . . . . . 110

60-ամյակ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 116

Եկեղեցական բեմ. լուրեր . . . . . . . . . . . . . . . . 118

"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата . 121

"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin . . . . . . . . . 124

"Etchmiadzine" organe officiel du Saint-siège d'Etchmiadzine . . . . 127

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՋԵՅԹՈՒՆՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала "Эчмиадзин"
Rédaction de la revue "Etchmiadzine", Etchmiadzine, Arménie

ԴԱՍԻՉ՝ 77764

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆԱՒ

# Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԲԱՑՄԱՆԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ 1700-ԱՄՅԱԿԻՆ

(Լոնդոն, 1 մարտի 2001 թ.)

Հարգելի և սիրելի ներկաներ.

Սիրով և հոգու բերկրանքով ողջունում և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում Ձեզ բոլորիդ Բրիտանական մեծահռչակ ու ավանդաշատ Գրադարանում հայկական եկեղեցական արվեստի այս հրաշալի ցուցահանդեսի բացման հանդիսավոր առիթով:

Բրիտանական Գրադարանը տարիներ շարունակ մեկտեղում, կողք-կողքի համադրում ու պահպանում է մշակութային անհամար գանձեր՝ հետամուտ համամարդկային արժեքներով սերունդներ կրթելու և մարդկության կյանքում հոգևորի կարևորման առաքելությանը: Հավատարիմ իր վսեմ կոչմանը, Գրադարանն այսօր բազմահազար այցելուների ներկայացնում է հայոց հոգևոր մշակույթի արժեքները՝ գնահատելի ընծա մատուցելով հայ ժողովրդին ու Հայոց Եկեղեցուն Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի կապակցությամբ:

Ի նշանավորումն ազգային մեր կյանքի մեծագույն իրադարձության այս դարակազմիկ հոբելյանի՝ հայ հոգևոր արժեքների ցուցադրություններ կազմակերպվել են աշխարհի մի շարք մեծ քաղաքներում, սակայն յուրաքանչյուր ցուցահանդես միշտ

առանձնահատուկ է, ինչպես առանձնահատուկ են մարդկային հոգիները և միշտ եզակի՝ նրանց հանդիպումը:

Այսօր այստեղ հայ ժողովուրդը ներկայանում է բազմադարյա իր մշակույթով. մտածումներով ու ապրումներով, բարու և գեղեցիկի ընկալումով ու ճաշակով: Ցուցանմուշները, որոնք մեր առջև են, հայ հոգու մարմնավորումներն են՝ արտահայտելով քրիստոնյա մեր ժողովրդի հավատն ու սերը առ Աստված, խաղաղության ու ստեղծարար աշխատանքի նրա երազները:

Հայ հոգուց պոկված այս գանձերը կրում են նաև իրենց ստեղծող ժողովրդի տառապագիր ճակատագրի կնիքը: Հաղթահարելով ժամանակ ու տարածություն, այսօր նրանք մեկտեղվել են կարոտի երկխոսության: Ունկնդիր լինենք նրանց զրույցին, ու մեր հոգիները բաց կլինեն սիրո, հավատի ու հույսի այն մշտանորոգ լույսի առջև, որով ծնունդ են առել այս արժեքները:

Սիրելի ներկաներ.

Արդարև, հայ ժողովուրդը Քրիստոսի՝ մարդուն պարգևած փրկության լույսն ընդունողների մեջ առաջին շնորհընկալներից է: Արարատի շուրջ սփռված պատմական իր Հայրենիքում մեր ժողովուրդը 301 թ. առաջինը պետական կրոն հռչակեց քրիստոնեությունը և այսօր էլ, 17 դար հետո, շարունակում է լինել քրիստոնեության հիմնամուր բերդն Արևելքում: Իր լինելությունը քրիստոնեությամբ իմաստավորելով է հայն ապրել ու արարել, փորձությունների մեջ անվարան հռչակել «Մահն իմացյալ անմահություն է» կարգախոսը և նահատակությամբ բազմիցս վկայել իր հավատարմությունը Քրիստոսին ու քրիստոնեական համեղբայրությանը:

Այսօր հայ ժողովուրդը վերագտել է իր Հայրենիքի ազատությունն ու անկախությունը: Անկախ պետականության իրողությունը ընդունելով որպես Աստծո մեծագույն շնորհ մեր հավատքի ամրության համար, նաև համոզված, որ մեր բոլոր հաջողություններն ու ձեռքբերումները շարունակությունն են 301 թ. հրաշալի դարձի, մեր ժողովուրդը ջանում է վերակառուցել ազատ իր Հայրենիքը, կերտել բարեշեն և օրինահարգ երկիր, որի դիմագիծը ստեղծարար աշխատանքն է ու եղբայրական սերը բոլոր ժողովուրդների նկատմամբ: Մենք փառք ենք առաքում առ Աստված, որ մեր օրերում բաց են դռները քրիստոնեական Եկեղեցիների՝ եղբայրաբար գրկախառնվելու, միասնաբար աղոթելու և մեկտեղ գործելու: Փառք Բարձրյալին, որ իր անկախությունը վերահաստատած Հայաստանը և Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորությունը ներկայիս հարաբերություններ ունեն իրենց դեսպանությունների մակարդակով՝ ի շահ երկու պետությունների արդյունավետ համագործակցության:

Մեր երկու քրիստոնյա ժողովուրդների եղբայրության մի նոր վկայություն է այս ցուցահանդեսը, քանզի հայ-անգլիական առնչությունները դարերի խորքից են գալիս: Փառավոր ավանդույթներով այս երկրում մեր ժողովրդի զավակները ապահով հանգրվան են գտել հարյուրամյակներ առաջ և այսօր էլ, վայելելով Բրիտանական կառավարության ու ժողովրդի բարի կամեցողությունը, ազատ են ազգային-եկեղեցական իրենց կյանքով ապրելու՝ որպես լիիրավ, վստահելի ու հարգարժան քաղա-

քացիները իրենց երկրորդ Հայրենիքի: Հայկական հնագույն գաղթօջախներից մեկի և Հայոց հոգևոր կյանքի վարչական միավորի՝ Թեմի առկայությունն այս օրհնյալ հողում այն հիմերն են, որով այսօր առավել սերտ պիտի դառնան ու ընդլայնվեն մեր երկու՝ Հայ Առաքելական ու Անգլիկան Եկեղեցիների և մեր ժողովուրդների հարաբերություններն ու համագործակցությունը: Բրիտանական Գրադարանում բացված այս ցուցահանդեսը նույնպես մեկ վստահելի ճանապարհ է մեր մշակույթների մերձեցման, մեր ժողովուրդների փոխադարձ ճանաչման, վստահության ու եղբայրական հարաբերությունների արգասավորման համար: Արդարև. միմյանց համար ընդունելի լինելու ավելի զորեղ, միաժամանակ և ավելի հիասքանչ միջոց չկա, քան հոգու շռայլումով միմյանց ընդառաջ գնալը:

Այս հանդիսավոր և բերկրաշատ առիթով Մեր խորին գնահատանքն ենք բերում Գրադարանի պատվարժան Տնօրինությանն ու նրա հայկական բաժնի աշխատակիցներին, որոնց ազնիվ նախաձեռնությամբ ու անդուլ ջանքերով այսօր հնարավոր է դառնում ցուցահանդեսի բացումը: Վերստին Մեր առանձնակի գնահատանքն ենք հայտնում լոնդոնաբնակ հայորդի, մեր Եկեղեցու մեծազնիվ զավակ, մեծանուն ազգային բարերարներ Տեր և Տիկին Վաչե և Թամար Մանուկյաններին, որոնք հովանավորն են ինչպես այս, այնպես և նախորդ՝ Վատիկանում բացված ցուցահանդեսների, նաև՝ շատ այլ ազգաշահ ու եկեղեցաշեն ձեռնարկումների: Փառք Բարձրյալին, որ, հանձին հայ բարերարների, հայության կյանքում արթուն է բարեգործության արարող ոգին, որ, հավատավոր գործերի փոխված, զորացրել է մեր ժողովրդին և պատմության քառուղիներում օգնել դիմակայելու բազում փորձությունների:

Համայն հայության հավատի կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, որպես Հայրապետ Ամենայն Հայոց, Մեր սերն ու օրհնությունն ենք բերել ցուցահանդեսի կազմակերպիչներին, բոլոր այստեղ ներկաներին, Անգլիո մշակութասեր ժողովրդին և ցուցահանդեսի բոլոր այցելուներին: Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ Տիրոջ օրհնությամբ ցուցահանդեսը ծառայի կյանքի՝ հոգևորով իմաստավորման, ժողովուրդների սիրո ու բարեկամության իր առաքինի նպատակին:

Թող Տերը հաճությամբ ընդունի քրիստոնեական եղբայրության այս վկայությունը և հաստատուն ու պայծառ պահի Հայ Առաքելական ու Անգլիկան Եկեղեցիները, Իր հովանու ներքո միշտ շեն, բարգավաճ ու ապահով պահպանի Մեծ Բրիտանիան և զորացնի համագործակցությունը մեր երկու բարեկամ ժողովուրդների ու պետությունների միջև:

Թող Բարձրյալի օրհնությունը իջնի համայն աշխարհին, և խաղաղ ստեղծագործելու աստվածային շնորհը ունենանք մենք և հավետ ունենանք մեր կյանքի ընթացքը:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ

ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ՆԻԿՈՋԻԱՅԻ (ԿԻՊՐՈՍ) ՀԲԸՄ ՄԵԼՔՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆԸ

## ԱՌ ՀԲԸՄ ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆ, ՈՐ Ի ԿԻՊՐՈՍ, ՆԻԿՈՍԻԱ

Սիրելի զաւակներ Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու.

Գոհունակ սրտով տեղեկացանք, որ փրկչական 2001-րդ թուականը՝ ազգային մեր կեանքում հոգեւորդ Հայոց Մեծ Դարձի 1700-ամեակի խորհրդով, յոբելեանական է նաեւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Մելգոնեան Կրթական Հաստատութեան համար, որը բոլորում է իր շնորհակալ գործունէութեան 75-րդ տարեդարձը:

Այս բերկրաշատ առիթով Լուսոյ Խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր ողջոյնն ու սրտաբուխ շնորհաւորանքներն ենք յղում Կրթական Հաստատութեան բոլոր երախտաւորներին՝ տեսչական եւ դասախօսական կազմերին, Հոգաբարձու Խորհրդի անդամներին ու բարերարներին, բոլոր շրջանաւարտներին ու ներկայ սիրասուն սաներին, որ մէկտեղուած այսօր, մեծահանդէս նշում էք յիշարժան տարեդարձը հարազատ ու սիրելի կրթօջախի: Հայրապետական Օրհնութեան այսու Գրով մասնակից ենք Ձեր տօնին, կիսում ենք Ձեր անսահման ուրախութիւնը եւ բերում Ձեզ Մեր սէրն ու օրհնութիւնը:

Սիրելիք Մեր. 75 տարիների հեռուից այսօր ականատես ենք, որ Կիպրոսի օրհնեալ հողում հիմնուած Կրթական Հաստատութիւնը, շնորհիւ իր պատասխանատուների ամենօրեայ խնամքի ու հոգածութեան, արդարացրել է իր հետ կապուած՝ մեր

ժողովրդի զաւակաց բոլոր յոյսերն ու լաւագոյն սպասումները: Տասնամեակներ շարունակ աշխարհասփիւռ հայութիւնը վայելում է ազգին ու Եկեղեցուն մատուցած Մելգոնեան վարժարանի բարի պտուղները: Նրա շրջանաւարտները, սփռուած աշխարհի չորս ծագերում, անխոնջ ծառայում են հայ մշակոյթին, նուիրւում արուեստի, գրականութեան ու գիտութեան զարգացմանը եւ իրենց կեանքով ու հայրենաշէն գործերով պատիւ յաւելում սփիւռքաբար մեր ժողովրդին:

Արդարեւ, երիցս փա՛ռք հաստատութեան փեսիլքն ունեցած եւ այն կեանքի կոչած բոլոր հայորդեաց:

Մեծազնիւ փոխօրէնուհի Մելգոնեան Հաստատութեան, մեծայարգ ուսուցիչներ, հոգաբարձու եւ բարերար հայորդիք. Մենք հաւատում ենք, որ կրթօջախի 75-ամեայ յոբելեանի այս փոնակատարութիւնը նոր կորով պիտի հաղորդի ձեր սիրառատ ու նուիրեալ հոգիներին, որպէսզի շարունակէք վառ պահել կրթութեան լուսառատ ջահը հայութեան կեանքում, եւ Մելգոնեան Վարժարանը իր նորանոր բազմապատիկ արգասիքներով հարստացնի հայոց հնագոյն մշակոյթի սրբազան անդաստանը:

Վարժարանի սիրելի սաներ. Հայրական Մեր յորդորն ու պատգամն է Ձեզ, որ նախանձախնդրութեամբ կրէք աւանդաշատ կրթօջախի բարեհամբաւ անունը, ինչպէս ազնուարմատ տունկ սնուէք ու զօրանաք հայրենական աւանդներով, Ձեր նորաբողբոջ հոգիներում անթեղէք Աւետարանի կենսահաստատ լոյսը եւ Ձեր ուսումնատենչ հոգով ամբարած գիտելիքներն ու արժէքները միշտ ծառայեցնէք ի շահ մեր ժողովրդի ու Եկեղեցու, հանուն երջանկութեան, բարու եւ բարիքի արդիւնաւորման աշխարհում:

Հայոց Հայրապետիս աղօթքն ու հայցն է, որ Բարձրեալն Աստուած Իր հանապազ օրհնութեան ներքոյ խաղաղութիւն եւ անշրջելի առաջընթաց պարգեւի Կիպրոսի պետութեանն ու հիւրընկալ ժողովրդին, հաստատուն ու շէն պահի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնն ու նրա Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը՝ յարաճուն յաջողութիւններ պարգեւելով նրա նուիրեալ բոլոր սպասաւորների եւ փրաջան սաների ջանքերին ու ծրագրերին:

«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան
ի 7-ն Փետրուարի յամի Տեառն 2001
եւ ի թուին հայոց ՌՆԾ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 131

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՀԲԸՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ-ԴԵՄԻՐՃՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

## ԱՌ ՀԲԸՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ-ԴԵՄԻՐՃԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆ, ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, ԱՄՆ

ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Յովսէփեանից գոհունակութեամբ տեղեկացանք, որ ազգային մեր կեանքում յոբելեանական 2001 թուականին լրանում է Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան Մանուկեան-Դեմիրճեան վարժարանի հիմնադրման 25-ամեայ տարեդարձը, եւ արժանայիշատակ այս առիթով մարտի 4-ին կազմակերպուած է խափուկ հանդիսութիւն:

Բերկրաշատ այս առիթով համայն հայութեան հոգեւոր նուիրական կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սրտաբուխ շնորհաւորանքներն ենք բերում Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան բոլոր անդամներին, Մանուկեան-Դեմիրճեան վարժարանի Հոգաբարձութեանը, Տնօրէնութեանը, Ուսուցչական կազմին ու բոլոր նուիրեալներին, որոնց ջանքերով եւ նախանձախնդիր ծառայութեամբ արդէն քառորդ դար ԱՄՆ օրհնեալ հողում գործում է ազգային կրթօջախը եւ գիտելիքներ մատուցելու հետ մէկտեղ իր սաների հոգիներում սերմանում սիրոյ ու հաւատարմութեան բարի հունդեր՝ հանդէպ Մայր Եկեղեցին, հայրենի երկիրն ու ժողովուրդը մեր:

Արդարեւ, ի սփիւռս աշխարհի տարածեալ մեր ժողովրդի զաւակների համար ազգային կեանքի հիմքն են Մայր Եկեղեցին եւ հայ դպրոցը: Կրթօջախն առաջին ու հիասքանչ հանգրուանն է, ուր կերտւում է ընդհանուրի մի մասնիկը լինելու գիտակցութիւնն ու երջանիկ զգացումը, որ եւ առաջին քայլն է դէպի հայրենասիրութիւն ու մարդասիրութիւն:

Սիրելիներ, քաղցրութեամբ ենք յիշում տարիներ առաջ Մեր առաջին այցը Մանուկեան-Դեմիրճեան համբաւաշատ վարժարան՝ որպէս Արարատեան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ: Մեր հոգում ապրում են կրթօջախի եռանդով, սիրով ու նուիրումով լեցուն կեանքի պատկերները եւ այսօր էլ համակում Մեզ անկեղծ խանդավառութեամբ:

Յարգարժան հիմնադիրներ Մանուկեան-Դեմիրճեան Կրթական հաստատութեան, Մեծարգոյ Տնօրէն եւ ուսուցիչներ, հոգաբարձու եւ բարերար զաւակներ. արդարեւ օրհնութեան եւ բարձր գնահատանքի են արժանի յանուն վարժարանի եւ մեր սիրասուն զաւակների ներդրած Ձեր ջանքերը, որ բարի պտուղներ են տալիս ի շահ ազգի, հայրենիքի եւ Եկեղեցու: Վարժարանում իշխող քրիստոնէական-ազգային բոցավառ ոգու վկայութիւնը եղաւ վերջերս Կրթօջախի սանուց ազնիւ մասնակցութիւնը Արցախի ճանապարհաշինութեան նպատակով կազմակերպուած հեռուստամարաթոն-դրամահաւաքութեանը:

Ժրաջան սաներ Մանուկեան-Դեմիրճեան վարժարանի. նշանակալի այս յոբելեանի առիթով Մեր պատգամն է Ձեզ, որ հպարտ լինէք մեր ժողովրդի հնագոյն պատմութեամբ, հարուստ աւանդութեամբ, չվարանէք երբէք ժրաջան ուսանելու. Ձեր հոգիներում ու մտքերում որպէս թանկ գանձեր անթեղելու գիտութեան ու Ձեր հայրերի սրբազան հաւատի առաջնորդող լոյսը:

Գնահատանաց եւ Օրհնութեան այսու Գրով մասնակից Մանուկեան-Դեմիրճեան վարժարանի յոբելեանական հանդիսութեանը ու Ձեր ուրախութեանը, ի խորոց սրտի մաղթում ենք, որ Աստծոյ Զօրաւոր Աջը հովանի լինի կրթօջախին, որպէսզի հաստատութիւնը իր շնորհակալ գործունէութեամբ եւ մնայուն ձեռքբերումներով շարունակի լինել վահան ամրութեան հայ կեանքի եւ լոյսի տուն՝ հաւատի ու գիտութեան՝ ծառայելով ամերիկահայ համայնքին ու համայն մեր ժողովրդին:

Թող Բարձրեալն Աստուած հաստատուն եւ շէն պահի Մանուկեան-Դեմիրճեան Կրթական հաստատութիւնը եւ Իր օրհնութեան ներքոյ՝ նրա բոլոր նուիրեալներին ու սիրասուն սաներին:

«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալք ի Մէնջ. ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան
ի 20-ն Փետրուարի յամի Տեառն 2001
եւ ի թուին հայոց ՌՆԾ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 134

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2001 թվականի փետրվար-մարտ ամիսների ընթացքում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի Կոնդակով «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվել է՝

Տիկին Հռիփսիմե Ալեքսանյանը (Լոնդոն, Մեծ Բրիտանիա):

Ամենայն Հայոց Հայրապետի Կոնդակով «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրվել է՝

Տիկին Նելլի Անդրիասյանը (Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն):

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Օրհնության և գնահատանքի գրերով պարգևատրվել են՝

Տ. Նշան քահանա Պեյլերյանը՝ Ավագ քահանայության պատիվ (ԱՄՆ Արևելյան թեմ)

Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի Թեմական Պատգամավորական Ժողովի անդամները ( Սիդնեյ, Ավստրալիա),

Տիկին Սոնիա Ջոնը (Կալկաթա, Հնդկաստան):

# ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

## ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 17 փետրվարի 2001 թ.:**

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վրաստանի պետնախարար Գեորգի Արսենիշվիլու գլխավորած կառավարական պատվիրակությանը:

Նորին Սրբությունը ուրախությամբ հիշատակեց Վրաց Ուղղափառ Եկեղեցու գահակալ Իլիա Երկրորդ Կաթողիկոս-Պատրիարքի և Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեի հետ ունեցած եղբայրական ու ջերմ հանդիպումները, որ տեղի ունեցան անցած տարի՝ Հայոց Հայրապետի գահակալության առաջին իսկ տարում Վրաստան կատարած այցի ընթացքում: Այս առիթով Նորին Սրբությունը գնահատանքով ու գոհունակությամբ անդրադարձավ վրաց նախագահի և իշխանությունների պատրաստակամությանը՝ ուշադրության կենտրոնում ունենալու հայկական պատմական հուշարձաններն ու մասնավորապես Խոջիվանքը: Հայոց Հայրապետը գոհունակությամբ ու գնահատանքով նշեց նաև Հավլաբարի Կարմիր Ավետարան հայոց եկեղեցու վերականգնումն իրականացնելու վրաց իշխանությունների մտադրությունը:

«Դարավոր մեր բարեկամությունը չի կարող խաթարել և ոչ մի անցանկալի միջադեպ: Գիտակցում ենք, որ հավատքով եղբայրացած մեր երկու ժողովուրդները մշտապես պիտի կարողանան նեցուկ և զորավիգ լինել միմյանց»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Պրն Գ. Արսենիշվիլին, Նորին Սրբությանը ներկայացնելով հայաստանյան իշխանությունների հետ ունեցած հանդիպումների արդյունքները, վստահություն հայտնեց, որ դրանք իրենց բարի պտուղները կունենան երկու հարևան երկրների բարեկամությունն առավել ամրապնդելու համար:

# ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 20 փետրվարի 2001 թ.:**

Փետրվարի 19-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում իր աշխատանքն սկսեց միաբանական համագումարը: Համագումարին հրավիրված Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Հայաստանի և արտերկրի 65 կուսակրոն եկեղեցականներից ներկա էր 51-ը: 10-ամյա ընդմիջումից հետո գումարված հավաքը կոչված է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բոլոր միաբանների համախմբմամբ հնարավորություն ստեղծել միասնաբար խորհելու և քննարկելու Հայ Եկեղեցու կյանքում առկա դժվարություններն ու մարտահրավերները և նոր ուղիներ որոնելու Եկեղեցու առաքելության արդյունավետ իրականացման համար:

Հավաքը բացվեց Վեհափառ Հայրապետի օրհնության պատգամով: Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ երիտասարդ միաբանները, մտահոգ Հայ Առաքելական Եկեղեցու առջև ծառացած խնդիրներով, համատեղ ջանքերով պիտի կարողանան վերարժևորել իրենց դերն ու առաքելությունը, որով և կկարողանան ժողովրդին վերադարձնել եկեղեցի, նրան առաջնորդել Քրիստոսի Ավետարանի պատգամներով: Անդրադառնալով Հայ Առաքելական Եկեղեցու առջև ծառացած դժվարություններին, որոնք սկսվում են եկեղեցականների պատրաստության խնդիրներից և ավարտվում համայնքային կյանքի ձևավորման հետ կապված հարցերով, Նորին Սրբությունը համոզմունք հայտնեց, որ դրանք հաղթահարելի կդառնան միայն սիրո, նվիրումի և հանձնառության մթնոլորտում:

Ժողովականներին իր խոսքն ուղղեց նաև համագումարի կազմակերպման ընդհանուր պատասխանատու Տ. Նարեկ վրդ. Պերպերյանը՝ նշելով, որ Հայ Եկեղեցու հոբելյանական տարում հրավիրված այս հավաքը յուրաքանչյուր հոգևորականի համար կդառնա ուխտի նորոգության գեղեցիկ մի առիթ:

Տ. Զարեհ ծ. վրդ. Պառոնյանի և Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանի ատենապետությամբ համաժողովն իր աշխատանքը կշարունակի մինչև փետրվարի 21-ը:

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՆԵՐԿԱ ԳՏՆՎԵՑ ՈՒՂՂԱՓԱՌ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԲԱՑՄԱՆԸ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 21 փետրվարի 2001 թ.:**

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀՀ Ազգային Ժողովում ներկա գտնվեց Ուղղափառների եվրոպական միջխորհրդարանական վեհաժողովի շրջանակներում Ուղղափառ ժողովուրդների միասնության միջազգային հիմնադրամի կողմից կազմակերպված «Եկեղեցին, պետությունը, հասարակությունը և աշխարհի վերակառուցման հայեցակարգի ճգնաժամը» թեմայով միջազգային կոնֆերանսի բացմանը:

Նորին Սրբությունը ողջունեց կոնֆերանսին մասնակից ավելի քան 20 եվրոպական երկրների խորհրդարանների ուղղափառ պատգամավորներին և Ուղղափառ ժողովուրդների միասնության միջազգային հիմնադրամի ներկայացուցիչներին:

Վեհափառ Հայրապետը խորհրդանշական նկատեց, որ Եկեղեցու, պետության ու հասարակության առնչությունների վերաբերյալ կարևորագույն հարցադրումով այս կոնֆերանսը տեղի է ունենում Հայաստանում, մի երկրում, ուր աշխարհիկ իշխանությունը, քրիստոնեությունը ճանաչելով որպես պետական կրոն, դեռ 1700 տարի առաջ փաստեց Եկեղեցի-պետություն համագործակցության անհրաժեշտությունը:

Նորին Սրբությունը հատկապես կարևորեց Վեհաժողովի և Հիմնադրամի գործունեությունը՝ անդրադառնալով 20-րդ դարում Արևելյան Եվրոպայի բազմաթիվ երկրներում ծավալված հակաեկեղեցական բռնություններին ու անաստվածությանը, որն իր աղետալի հետևանքներն ունեցավ հասարակության հոգևոր կյանքում:

«Մենք Ուղղափառ խորհրդարանականների ներկայության կարևոր առաքելությունն ենք նկատում առկա այն միտումների կանխումը, որոնք համամարդկային արժեքները ենթարկում են քաղաքական ինչ-ինչ նկատառումների, այդ արժեքներից դուրս նետում դրանց հոգևոր, Աստվածատուր իմաստը, և որոնց հետևանքն է ընտանիքի քայքայումը, բարոյականության անկումը, դաժանության ու բռնության անսքող դրսևորումը, տկարի նկատմամբ անտարբերությունը, այսպես կոչված «զանգվածային մշակույթի» համատարած քայքայիչ ներխուժումը, գլոբալիզացիայի այն բացասական արտահայտությունները, որ փաստորեն հանգեցնում են հասարակական կյանքում հոգևոր-ազգային արժեքների ստորադասմանը»,- ասաց Գարեգին Բ Կաթողիկոսը՝ միաժամանակ իր ուրախությունը հայտնելով, որ Հայաստանի օրենսդիր մարմինը մշտապես մասնակից է ուղղափառ խորհրդարանականների ներկայություններին ու հավաքներին:

Միջազգային կոնֆերանսի մասնակիցներին ողջունեց նաև ՀՀ ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանը: Ընթերցվեցին նույնպես Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Երկրորդի, ՌԴ Պետդումայի նախագահ Գենադի Սելեզնյովի, ՌԴ փոխվարչապետ Վալենտինա Մատվիենկոյի ողջույնի ուղերձները:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՄԲ ՄԵԿՆԵՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՇՏՈՆԱՏԵՂԻ՝ ԺՆԵՎ

### Մարտի 1-ին Բրիտանական գրադարանում Վեհափառ Հայրապետը ներկա եղավ «Գանձերը՝ տապանից» ցուցահանդեսի բացմանը

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 23 փետրվարի 2001 թ.:**

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը անդրանիկ պաշտոնական այցով մեկնեց Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կենտրոնատեղի:

Ժնև մեկնելիս Նորին Սրբությունը երկօրյա կանգառ ունեցավ Մոսկվայում, որի ընթացքում առիթ ընձեռվեց անձամբ շնորհավորելու Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Երկրորդին՝ Պատրիարքի անվանակոչության օրվա առիթով: Վեհափառ Հայրապետը հանդիպեց նաև մոսկվահայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Ժնևում, լինելով ԵՀԽ-ի պաշտոնական հյուրը, Հայոց Հայրապետը հանդիպումներ ունեցավ ԵՀԽ գլխավոր քարտուղար Կոնրադ Ռայզերի, ԵՀԽ ընդհանուր քարտուղարության, ինչպես նաև ԵՀԽ-ում Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչների հետ:

ԵՀԽ գլխավոր քարտուղարը բազմաթիվ անգամներ է այցելել Մայր Աթոռ Ս. Էջմիածին, որի հետ համատեղ ԵՀԽ-ն բազմաթիվ սոցիալական և բարեսիրական ծրագրեր է իրականացնում Հայաստանում: Այսօր էլ Ս. Էջմիածնում հաջողությամբ գործում են ԵՀԽ երկու գրասենյակներ:

Ժնևից Նորին Սրբությունը մեկնեց Լոնդոն՝ ներկա լինելու մարտի 1-ին Բրիտանական գրադարանում «Գանձերը՝ տապանից» ցուցահանդեսի բացմանը՝ նվիրված

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին: Վաչե և Թամար Մանուկյանների հիմնադրամի մեկենասությամբ կազմակերպված ցուցահանդեսում ներկայացվեց հայ եկեղեցական արվեստի նմուշներ Մայր Աթոռի, ինչպես նաև աշխարհի այլ թանգարաններից:

Հայոց Հայրապետին ուղեկցում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը և Տ. Ավետիս աբեղա Սահակյանը:

# ԵԱՀԿ ԳՈՐԾՈՂ ՆԱԽԱԳԱՀ ՄԻՐՉԱ ՋՈԱՆԱՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 28 փետրվարի 2001 թ.:**

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց ԵԱՀԿ գործող նախագահ, Ռումինիայի արտաքին գործերի նախարար Միրչա Ջոանայի գլխավորած պատվիրակությունը: Պատվիրակությանն ընդունեցին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը և Ռումինիայի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանը:

Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունից ջերմորեն ողջունելով հյուրերին՝ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը անդրադարձավ Վեհափառ Հայրապետի անցած փարվա այցելությանը Ռումինիա, որտեղ Նորին Սրբությունն արժանացավ Ռումինիայի ազգային բարձրագույն պարգևին՝ «Ռումինիայի աստղ» շքանշանին: Սրբազան Հայրը նշեց, որ Վեհափառ Հայրապետը այս տարի ևս կայցելի Ռումինիա՝ ռումինահայ թեմի կազմավորման 600-ամյակի առիթով:

Հայ Առաքելական և Ռումին Օրթոդոքս Եկեղեցիների միջև մշտապես սերտ հարաբերություններ են եղել, որի արտահայտություններից մեկը Ռումին Օրթոդոքս Եկեղեցու պետ, Նորին Սրբություն Թեոկտիստ Պատրիարքի այցն էր Հայաստան 1997 թվականին: Հայ ժողովուրդը խոր սեր և հարգանք է տածում ռումին ժողովրդի և Ռումին Օրթոդոքս Եկեղեցու հանդեպ:

Բարձր գնահատելով պարոն Ջոանայի առաքելությունը, Սրբազան Հայրը մաղթեց նրան հաջողություն, իսկ աշխարհին՝ վնական խաղաղություն:

Պարոն Միրչա Ջոանան իր ուրախությունն ու երախտագիտությունը հայտնեց հայոց հոգևոր կենտրոն այցի և այնտեղ ջերմ ընդունելության համար: Նա նշեց, որ Հայաստանում քրիստոնեության որպես պետական կրոն հռչակման 1700-ամյա հո-

բեյյանն ըստ արժանվույն կնշվի նաև Ռումինիայում, և այդ առիթով Ռումինիա կհրավիրվեն աշխարհի այլ երկրներում ապրող ռումինահայեր:

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՆԻՍՏԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 6 մարտի 2001 թ.:**

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց նախկին ԽՍՀՄ հանրապետությունների և Բուլղարիայի երկաթուղային ճանապարհների ղեկավարներին, որոնք համատեղ նիստի են հավաքված Երևանում:

Նորին Սրբությունը, ողջունելով հյուրերին, վստահություն հայտնեց, որ նրանց համատեղ աշխատանքը կնպաստի ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդմանը և երկրների սոցիալ-տնտեսական զարգացմանը, քանզի երկաթուղային ճանապարհները կյանքի ճանապարհ են յուրաքանչյուր պետության համար: Այս առիթով Վեհափառ Հայրապետը ցավով անդրադարձավ վերջին տարիներին տարբեր երկրների կողմից իրականացվող ճանապարհային շրջափակումներին, որոնք իրենց բացասական կնիքն են դնում պետությունների զարգացման վրա:

Հյուրերի խնդրանքով Հայոց Հայրապետն անդրադարձավ նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատմությանն ու Հայ Եկեղեցու ներկա խնդիրներին:

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ՝ ՄԱՐՏԻ 8-Ի ԱՌԻԹՈՎ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 9 մարտի 2001 թ.:**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մարտի 8-ի Կանանց միջազգային տոնի առիթով հետևյալ շնորհավորական ուղերձն է հղել հայ կանանց:

«Հայոց Դարձի 1700-ամյակի փառակատարությամբ խորհրդանշված 2001 Փրկչական թվականին հոգու առանձնակի բերկրանքով ենք ողջունում բոլոր կանանց ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի ապրող հայուհիներին և բերում Մեր շնորհավորանքներն ու բարեմաղթանքները Մարտի 8-ի Կանանց տոնի առիթով:

Պատմությանը հայտնի է, թե «փիկնայք փափկասունք Հայոց աշխարհի» իրենց նվիրումով, ծառայասիրության և արիության ոգով որքան անփոխարինելի դերակատարություն ունեն ազգային մեր կյանքում, մասնավորաբար՝ մեր ընտանիքների ամրությունն ու ջերմությունը պահպանելու, հայրենի սուրբ ավանդներով զավակներ կրթելու շնորհակալ առաքելության մեջ: Ինչպես բնորոշել է երջանկահիշատակ մեծանուն մեր Հայրապետներից Գարեգին Հովսեփյանը՝ «Հայ ընտանիքը եկեղեցի է, որի սրբազան քահանան հայ կինն է»: Այսօր էլ, երբ աշխարհասփյուռ մեր ժողովուրդը վճռորոշ ժամանակներ է ապրում, կանգնած հայրենաշինության, հոգևոր կյանքի վերարթնության լայնահուն ճանապարհին, հայ մայրերը, դուստրերն ու քույրերը Աստվածաշնորհ սիրով ու առաքինությամբ պարտ են հավատարիմ լինել մեր կյանքում Տերունական պատգամների ու ազգային արժեքների կենսավորման և հայ հոգիները կամրջելու իրենց կոչմանը:

Այս զգացումներով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր սերը, գնահատանքն ու Հայրապետական օրհնությունն ենք հղում հայ փիկնանց և օրիորդաց՝ ի խորոց սրտի աղոթքով, որ Տերը Իր Աջի հովանու ներքո միշտ անխռով, երջանիկ ու կենսախինդ պահի բոլոր հայուհիներին և շնորհազարդի՝ ի պայծառություն և ի բարօրություն համայն մեր ժողովրդի»:

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 7 մարտի 2001 թ.:**

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց հայ-ամերիկյան միջկառավարական բանակցություններ անցկացնելու նպատակով Հայաստան ժամանած ամերիկյան պատվիրակությանը՝ Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Մայքլ Լեմոնի ընկերակցությամբ:

Հանդիպման ընթացքում պատվիրակության ղեկավար ԱՄՆ պետդեպարտամենտի ԱՊՀ երկրների գծով ամերիկյան օգնությունը համակարգող Ուիլյամ Թեյ-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

լորը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց հայ-ամերիկյան ներդրական բանակցությունների արդյունքները, իսկ ԱՄՆ-ի պետքարտուղարի ԱՊՀ երկրների գծով գլխավոր փոխօգնականի պաշտոնակատար Քլիֆ Բոնդս անդրադարձավ տարածաշրջանի ամերիկյան դեսպանների թբիլիսյան հանդիպմանը:

Վեհափառ Հայրապետն իր շնորհակալությունը և ուրախությունը հայտնեց, որ ամերիկյան պետությունն, ինչպես նախորդ տասը տարիների ընթացքում, այնպես էլ այժմ, նախանձախնդրորեն շարունակում է օգնության ձեռք մեկնել Հայաստանին և տարածաշրջանի մյուս երկրներին: Վեհափառ Հայրապետը վստահաբար նշեց, որ ամերիկյան կառավարության բոլոր ջանքերն ու ներդրումներն առաջին հերթին նպաստում են տարածաշրջանում խաղաղության ու փոխհասկացողության մթնոլորտի ձևավորմանը, ինչն էլ կարևոր երաշխիք է տարածաշրջանի երկրների տնտեսական զարգացման ու առաջընթացի համար: Այս առումով Վեհափառ Հայրապետը նաև հույս հայտնեց, որ կհաղթահարվեն բոլոր այն դժվարությունները, որոնք այսօր խոչընդոտ են հանդիսանում ներդրումային ծրագրերի համար:

Հանդիպմանը ներկա էր ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության տնօրեն Կիթ Սիմմոնսը:

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԿԻՊՐՈՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՍՊԻՐՈՍ ԿԻՊՐԻԱՆՈՒԻՆ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 17 մարտի 2001 թ.:**

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կիպրոսի Հանրապետության Ներկայացուցիչների Պալատի նախագահ Սպիրոս Կիպրիանուի գլխավորած պատվիրակությանը ՀՀ ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանի ուղեկցությամբ:

Նորին Սրբությունը, ողջունելով պատվիրակության այցը հայոց հավատքի նվիրական կենտրոն, մասնավորապես իր ուրախությունը հայտնեց, որ պրն Կիպրիանուն ներկայացուցիչն է հույն ազգի, որի հետ հայերը կապված են դարավոր բարեկամությամբ ու եղբայրությամբ, հաճախ կիսում են նաև պատմական նույն ճակատագիրը: Այս առիթով Վեհափառ Հայրապետն իր մասնավոր շնորհակալությունը հայտնեց պրն Կիպրիանուին, որի շնորհիվ առաջին անգամ ՄԱԿ-ի ամբիոնից հնչեցվել է Հայոց ցեղասպանության մասին: Նորին Սրբությունն իր երախտագիտու-

թյունը հայտնեց նաև Կիպրոսի իշխանություններին այն հյուրընկալ ոգու համար, որ դարասկզբից ի վեր ցուցաբերում են հանդեպ կիպրահայ համայնքը: Արդեն 75 տարի Կիպրոսում գործում է հայկական Մելքոնյան վարժարանը, որտեղ ուսանած աշխարհասփյուռ հայորդիք ապրում են երախտագիտության նույն զգացումներ:

Կիպրոսի խորհրդարանի ղեկավարն իր հերթին բարձր գնահատեց կիպրահայության ներդրումը երկրի առաջընթացի գործում կիպրահայ համայնքին կոչելով Կիպրոսի հասարակության զարդը:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը հեփաքրքրվեց հայ-կիպրական ներկա հարաբերություններով, գոհունակությամբ նշեց, որ դրանք շարունակում են սերտանալ ու զորանալ:

Պատվիրակության կազմում էին Հայաստանում Կիպրոսի Հանրապետության դեսպանը, Կիպրոսի խորհրդարանի գլխավոր քարտուղարը, ինչպես նաև հայազգի պատգամավոր. Կիպրոսի խորհրդարանում հայ համայնքի ներկայացուցիչ Պետրոս Գալաջյանը: Հանդիպմանը ներկա էր ՀԲԸՄ նախագահ տիկ. Լուիզ Սիմոն Մանուկյանը:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ. «Ս. ԷՋՄԻԱԾԻՆՆ Է ԽԱՆԴԱՎԱՌԵԼ ԵՎ ՈՒՂԵՆՇԵԼ ՆՐԱՆՑ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ»

### Վեհարանի դահլիճում նշվեց Մխիթարյան միաբանության հիմնադրման 300-ամյակը

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 26 մարտի 2001 թ.:**

Մարտի 24-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վեհարանի դահլիճում տեղի ունեցավ հանդիսություն՝ նվիրված Վենետիկի Մխիթարյան միաբանության հիմնադրման 300-ամյակին:

Ս. Էջմիածնի հոգևորականաց դասի հետ մեկտեղ հանդիսությանը ներկա էին Մխիթարյան միաբանության անդամները, Վրաստանի և Արևելյան Եվրոպայի հայ կաթոլիկե համայնքի առաջնորդ Տ. Ներսես արքեպս. Ներսեսյանը, մտավորականներ, հյուրեր:

Ինչպես նշեց Վեհափառ Հայրապետը. հանդիսության նպատակը Մխիթարյան
մեծերի ժառանգության ամփոփումը չէր. այլ գեղեցիկ մի առիթ՝ գլուխ խոնարհելու և
հարգանք մատուցելու Մխիթարյան միաբանության 300-ամյա վաստակին:
«Մխիթարյան հայրերի եկեղեցասիրության և հայրենասիրության ոգին, որ եր-
բեք չի նվազել ու փարատվել. սնունդ է առել այն նույն աղբյուրից, այն նույն ակուն-
քից, որից ուժ են առել հայրենիքի մեջ ապրող ու ստեղծագործող մեր նախնիք:
Նրանց հոգու մեջ ճառագել է Լույսը Լուսավորչի կանթեղի: Ս. Էջմիածինն է խանդա-
վառել և ուղենշել նրանց առաքելության ճանապարհը: Համոզված եմ. որ այսօր
բերկրում են երկնքում հոգիները Մխիթարյան հայրերի. որովհետև իրականություն է
դարձել փեսիլքը. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեջ, Հայոց Հայրապետանոցում Մխի-
թարյան հայրերն իրենց հոգևոր եղբայրների՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանու-
թյան հետ միասնաբար արժևորում են անցյալի հայրենական մեր արժեքները», - ա-
սաց Վեհափառ Հայրապետը:

Օրվա բանախոսները, անդրադառնալով միաբանության բազմամյա վաստակին,
մեկ անգամ ևս փաստեցին, որ, գտնվելով հեռավոր ափերում, Մխիթարյան միաբա-
նությունը ապրել է հայրենիքի տեսիլքով, պահպանելով իր հայկականությունը,
մշտապես մնալով հայ՝ ժամասացությամբ ու ծիսակատարություններով:

Հայտնելով իր երախտիքը Հայոց Հայրապետին, Մխիթարյան միաբանության
ընդհանուր աբբահայր Տ. Եղիա ծ. վրդ. Քիլաղբյանը մեծ պատիվ համարեց Վեհա-
րանում կազմակերպված հանդիսությունը՝ հույս հայտնելով, որ միաբանությունը Ս.
Էջմիածնի հովանու ներքո կկարողանա ստվար հանդիսանալ հայրենիքին ու հայ
ժողովրդի լուսավոր ապագայի կերտումին:

Հանդիսության ավարտին Նորին Սրբությունը միաբանության անդամներին
նվիրեց Ս. Էջմիածնի հարթաքանդակը, որպեսզի Վենետիկի հեռավոր կղզյակում
նրանց հետ լինի Ս. Էջմիածնի օրհնությունը:

Հանդիսության ընթացքում իրենց գեղարվեստական հայտագրով մխիթարյան-
ներին ողջունեցին նաև Գևորգյան Հոգևոր Ճեմարանի և Վազգենյան Դպրանոցի
սաները, Ս. Էջմիածնի Հայորդյաց տների փոքրիկ երաժիշտներն ու ազգագրական
երգի համույթը:

# ԺՈՂՈՎՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

## Սկսվեց 1700-ամյակի եկեղեցական հանձնախմբի գործադիր մարմնի հերթական նիստը

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 27 մարտի 2001 թ.:**

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում սկսվեց Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի եկեղեցական հանձնախմբի գործադիր վարչության հերթական նիստը:

Արդեն իսկ մեկնարկված են Հայ Եկեղեցու 1700-ամյա մեծ հոբելյանին նվիրված հանդիսությունները, որոնց սկիզբն ազդարարվեց դեկտեմբերի 31-ի պարեմուտի գիշերը Խոր Վիրապից Մայր Աթոռ Ս. Էջմիածին բերված Ս. Գրիգոր Լուսավորչի Լուսավառ Կանթեղի լույսից փարածված սրբազան մոմավառությամբ:

Նորին Սրբությունը բարձրորեն գնահատեց գործադիր մարմնի ջանքերը ուղղված հոբելյանական փոնակատարությունների կազմակերպմանը, շեշտելով, որ 1700-ամյակը լավագույնս պետք է օգտագործվի հոգևոր նորոգության և հոգևոր կյանքի վերարթնության համար, նշելով նաև, որ դրանք պետք է լինեն առավել ընդգրկուն և համակարգված: Որպես այդպիսի միջոցառում կարող է դառնալ մարտի 31-ին Արարատի մարզի գյուղերի օրհնության արարողությունը, որ թեմակալ առաջնորդների և հոգևորականների օրհնությամբ կշարունակվի նաև մյուս թեմերում և մարզերում:

Վեհափառ Հայրապետը միաժամանակ որոշ մտահոգություններ հայտնեց: Մասնավորապես անդրադառնալով հրապարակչական ծրագրերին, Նորին Սրբությունը հորդորեց առավել բծախնդիր մոտեցում ցուցաբերել հրապարակվող գրքերի ընտրության հարցում:

Նիստի ընթացքում ժողովականները ծանոթացան անցած տարվա նոյեմբերին Անթիլիասում տեղի ունեցած վերջին նիստի ատենագրությանը: Ապա Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը ներկայացրեց 1700-ամյակին նվիրված առաջիկա ծրագրերն ու միջոցառումները Հայաստանում և Հայաստանից դուրս: Դրանց թվում են զանազան հանդիսություններ, գիտաժողովներ, այլ միջոցառումներ: Առանձնակի կարևորվեց երիտասարդական ուխտագնացությունների և երեխաների հոգևոր դաստիարակության ծրագրերը:

Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանի և Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանի ատենապե-
տությամբ ժողովն իր աշխատանքը կշարունակի մինչև մարտի 28-ը:

* * *

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում իր աշխատանքն սկսեց Եկեղեցիների Հա-
մաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կլոր Սեղանի ղեկավարների տարեկան ժո-
ղովը: Նիստից առաջ Կլոր Սեղանի մասնակիցներին ընդունեց և արդյունավետ աշ-
խատանք մաղթեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Նորին Սրբությունն իր երախտագիտությունը հայտնեց միջազգային եկեղեցական կազմակերպությանը, որ արդեն մի քանի տարի կրթական, վարկային ու գյուղատնտեսական ծրագրեր է իրականացնում Հայաստանում իր նպաստը բերելով ժողովրդի զարգացմանը:

Կարևորելով միջեկեղեցական հարաբերությունների անհրաժեշտությունը, Նորին Սրբությունը ուրախությամբ նշեց, որ Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարություններին իրենց մասնակցությունը կբերեն նաև բոլոր Եկեղեցիների ներկայացուցիչները:

Կլոր սեղանը եռօրյա նիստերի ընթացքում կքննարկի անցած տարվա աշխատանքները, կհաստատի գրասենյակի 2001 թ. ծրագիրը:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 28 մարտի 2001 թ.:**

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վրաստանի արտաքին գործերի նախարար Իրակլի Մենաղարիշվիլու գլխավորած պատվիրակությանը:

Վեհափառ Հայրապետը վրաց բարձրաստիճան հյուրերի այցելությունը Հայաստան և հայոց հոգևոր կենտրոն նկատեց իբրև երկու հարևան ժողովուրդների դարավոր բարեկամության արտահայտություն:

Նորին Սրբությունն իր գոհունակությունն ու գնահատանքը փոխանցեց Վրաստանի կառավարությանը՝ վրացահայության և Վրաստանում հայկական հոգևոր ու ազգային արժեքների հանդեպ ցուցաբերած հոգատար վերաբերմունքի համար, ուրա-

խությամբ նշելով վրաց իշխանությունների կողմից Թբիլիսիի Կարմիր Ավետարան եկեղեցու և Խոջիվանքի վերականգնման մասին:

Շնորհակալություն հայտնելով հայրենի կառավարությանը փված ցնահապանքի համար, պրն Մենադարիշվիլին հավաստիացրեց, որ չնայած ֆինանսական դժվարություններին, արվում է հնարավոր ամեն բան հայկական արժեքների պահպանության համար:

Զրույցի ընթացքում արտահայտվեց այն երկկողմանի համոզմունքը, որ երկու հարևան ժողովուրդները բոլոր դժվարությունները պետք է կարողանան հաղթահարել փոխհամագործակցությամբ՝ հոգևոր միասնության հենքով: Այս առիթով հատկապես կարևորվեց Եկեղեցիների դերը, որոնք կրողն ու փարածողն են բարոյական արժեքների, առանց որի չկա զարգացում և փնական խաղաղություն:

# ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 29 մարտի 2001 թ.:**

Մարտի 28-ի երեկոյան Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ, իր աշխատանքն սկսեց Գերագույն Հոգևոր Խորհրդի այս տարվա անդրանիկ ժողովը: Տերունական աղոթքին հետևեց Վեհափառ Հայրապետի ողջույնի խոսքը, որից հետո Նորին Սրբությունը ԳՀԽ-ի ուշադրությանը ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վերջին 8 ամիսների գործունեության հաշվետվությունը:

Մարտի 29-ի օրակարգի առաջին հարցը նվիրված էր քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի հոբելյանական տոնակատարություններին: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը ժողովականներին ներկայացրեց սեպտեմբերի 21-23-ը կայանալիք գլխավոր հանդիսությունների ծրագիրը: Սեպտեմբերի 22-ին Ս. Էջմիածնում կօրհնվի Սրբալույս Մյուռոնը: Տեղի կունենա նաև էկումենիկ արարողություն՝ հանդիսություններին հրավիրված քույր Եկեղեցիների հոգևոր պետերի մասնակցությամբ: Սեպտեմբերի 23-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու Ս. Սեղանի օծումից հետո տաճարում կմատուցվի անդրանիկ Պատարագ:

Եկեղեցական այս աննախընթաց տարեդարձի առիթով հոբելյանական տարում սպասվում են նաև Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու պետ Հովհաննես Պողոս Բ Պա-

պի և Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք Բարդուղիմեոս Ա-ի պաշտոնական այցերը Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

1700-ամյակի գլխավոր հանդիսություններից է նաև ապրիլի 24-ին Ամենայն Հայոց Հայրապետի և հանրապետության նախագահի ուխտագնացությունը Տեր Զոր:

Անդրադառնալով Հայ Եկեղեցու կանոնադրության հարցին, որոշվեց կանոնադրության նախագծի վերաբերյալ մինչև հունիսի 1-ը թեմերից ստացված առաջարկները վերատեսության ենթարկել ԳՀԽ-ում և ապա ներկայացնել վերջնական հաստատման:

Քննարկվեցին նաև մայիսին Վեհափառ Հայրապետի՝ ԱՄՆ և Կանադա կատարելիք հովվապետական այցերին առնչվող հարցեր:

Ժողովն իր աշխատանքը կավարտի մարտի 30-ին: Վերջին նիստի ընթացքում կքննարկվեն թեմական, ինչպես նաև նվիրապետական Աթոռների և Եկեղեցի-պետություն հարաբերություններին վերաբերող հարցեր:

ԳՀԽ-ի զույգ ատենապետերի՝ Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի և Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի բացակայության պատճառով նիստը ատենապետում են ժողովին ներկա խորհրդի ավագագույն անդամները՝ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը և Տ. Գյուտ արքեպս. Նագգաշյանը :

* * *

Նիստի ավարտից հետո Վեհարանում տեղի ունեցավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի շրջանավարտներին դիպլոմների հանձնման արարողություն: Ձեռամբ Վեհափառ Հայրապետի և ԳՀԽ անդամների դիպլոմներ ստացան ավարտական թեզեր պաշտպանած 26 ճեմարանավարտներ:

Շնորհավորելով շրջանավարտներին, Նորին Սրբությունը մաղթեց նրանց նվիրյալ ծառայությամբ արժևորել հոգևոր դպրոցի գիտելիքները:



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՒ ՆՈՐԸՆՏԻՐ ԳԵՐԱԳՈՅՆ
ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 30 մարտի, 2001 թ.:**

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՌԴ կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Գենադի Զյուգանովին և Ուկրաինայի կոմունիստական կուսակցության ղեկավար Պյոտր Սիմոնենկոյին:

Ողջունելով հյուրերին, Վեհափառ Հայրապետը նշեց, որ Հայ Եկեղեցին, դարեր շարունակ լինելով հայ ժողովրդի առաջնորդը ոչ միայն հոգևոր, այլև աշխարհիկ կյանքում, կարևոր դերակատարություն է ունեցել նաև հայ և ռուս ժողովուրդների բարեկամության հաստատման գործում: Նորին Սրբությունը ուրախությամբ արձանագրեց շարունակվող այդ բարեկամությունը, որն իր արտահայտությունն է գտնում նաև երկու Եկեղեցիների եղբայրական հարաբերություններում:

Զրույցի ընթացքում առանձնակի կարևորվեց հավատքի դերը մարդկային բարոյական արժեքների, արդարության հաստատման գործում: Ուրախությամբ նկատելով, որ հավատքը կարևոր դեր է զբաղեցնում կոմունիստական կուսակցության նոր հայեցակարգում, Նորին Սրբությունը մեկ անգամ ևս հաստատեց, որ հավատքն է մարդկային երջանկության երաշխիքը:

«Հավատքով կառուցված երկիրը, հավատքով կառուցված տունն է լինում միայն ամուր ու հաստատուն»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

# ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 1550-ԱՄՅԱԿԻՆ

*«Եւ ոչ բարձրութիւն, եւ ոչ խորութիւն, եւ ոչ այլ ինչ արարած կարէ մեկնել զմեզ ի սիրոյ անտի Աստուծոյ, որ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր»:*

(Հռոմ. Ը 39)

Փետրվարի 22-ին, հինգշաբթի օրը, տոնն էր «Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց հազար երեսուն եւ վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմի»:

Մեր ազգային-եկեղեցական մեծ տոների շարքում Ս. Վարդանանց տոնը բացառիկ տեղ է գրավում որպես հայ ժողովրդի դարավոր ազատագրական պայքարի պատմության համաժողովրդական հերոսամարտ, որը դարեր ի վեր մեր ժողովրդի սիրտը լցրել է կրոնական ու հայրենասիրական զգացումներով:

Չկա մի հայ, որ խորին երկյուղածությամբ և անհուն երախտագիտությամբ չարտասանի Մեծն Վարդանի և նրա զինակիցների՝ մեր իսկ պատմությամբ նվիրագործված անմահ անունները:

Նրանք Ավարայրի ճակատամարտից մինչև այսօր մեր ժողովրդի համար եղել են հոգևոր անկախության, խղճի ազատության հավերժ կենդանի խորհրդանիշները:

Վարդանանց հերոսամարտի ոգեկոչումը սոսկ միայն արիական դրվագ չէ հայ ժողովրդի պատմության փառահեղ էջերից, այլ ավելին՝ ոգեշնչող, ապրեցնող, անժամանակյա, բայց միշտ ներկա մի մեծ ուժ է, ոգի, պատգամ և անքակտելի սրբազան ուխտ՝ Հայոց Աստուծո հետ:

Ավարայրը եղել և մնում է լուսավորչաժառանգ ժողովրդի համազգային ազատագրական և կրոնական պայքարի պանծալի բարձունքներից մեկը, որտեղ դրսևորվեցին մեր քրիստոնյա ժողովրդի հավաքական, ազգային գիտակցության, բարոյական կորովի, եկեղեցական ուխտապահության վեհ գաղափարները:

Այդ փառապանծ տոնի առթիվ Մայր Տաճարի Ավագ Ս. Սեղանին հանդիսավոր Սուրբ Պատարագ մատուցեց Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը: Պատարագին ներկա էին Ամենայն Հայոց Հայրապետը, Մայր Աթոռի միաբանությունը, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաները և մեր Եկեղեցու հավատավոր զավակները:

Համազգային տոնը կրկնակի մեծ էր, քանզի այն համընկնում էր նաև Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնի հետ, և այդ պատճառով խորհրդավոր Պատարագի վերջում Իջման Ս. Սեղանի առաջ հավուր պատշաճի կատարվեց Հայրապետական մաղթանք:

Պատարագից հետո եկեղեցում հավաքվածները Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ առաջնորդվեցին Վեհարանի հանդիսությունների դահլիճ, որտեղ հուշ-երեկույթով մեկ անգամ ևս նշվեց Վարդանանց հիշատակը:

Հանդիսությունը սկսվեց «Տերունական աղոթք»-ով և Հայաստանի Հանրապետության օրհներգով ու Հոգևոր Ճեմարանի քայլերգով:

Բացման խոսքով հանդես եկավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Եղիշե ավագ քհն. Սարգսյանը.

«Վեհափառ Տեր,

Գերաշնորհ, Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր և շատ սիրելի լսարան:

Այս տարի լրանում է Վարդանանց պատերազմի 1550-ամյակը, որը բազմախորհուրդ է և ցայտուն ապացույցը մեր ժողովրդի բարձր նկարագրի: Վարդանանց պատերազմը հոգևոր առաքինության և հավաքական հերոսության փայլուն օրինակ է մեր պատմության մեջ: Ճիշտ 50 տարի առաջ երանաշնորհ Գևորգ Զ Հայրապետը մեր ժողովրդի համար անսահման նվիրական այս տոնի 1500-ամյակի առիթով, որը լրացավ 1951 թվականին, սրբապատ իր Կոնդակով հավերժացրեց «նորահրաշ պսակավորներին», քանզի խորախորհուրդ 451 թվականի պատերազմում, գիտակցված մահով անմահության գնացող մեր նախապապները, որոնք խորհուրդ և փայլ են տվել մեր պատմական անցյալին, լավագույնս գնահատվել են մեր Սրբազան Հայրապետների կողմից, որպես ամենազգայուն զարկերակը և շարժիչ ուժը մեր պատմության:

Զարմանալի իմաստությամբ մեր Սրբազան Հայրապետները մեր ազգային և եկեղեցական պատմության համար մեծարժեք այդ դեպքերն ու թվականները, որոնք բախտորոշ են եղել ազգի և Եկեղեցու համար, իրենց սրբապատ Կոնդակներով հավերժացրել են նշանավոր պատմական թվականները:

Երկրորդ հազարամյակի վերջին հարյուրամյակը, որը սկսվեց 1901 թ., 1903 թ. լրացավ Միածնաէջ Մայր Տաճարի ն Հայոց Հայրապետության 1600-ամյակը: Այդ առթիվ Խրիմյան Հայրիկ Կաթողիկոսը սրբապատ Կոնդակով հավերժացրեց հիշարժան պատմական այդ թվականը:

Այդպես վարվեց Գևորգ Ե Հայրապետը, երբ դարասկզբին հայագետների հավաստմամբ 1912 թ. համարվեց հայոց տառերի գյուտի թվական: Նվիրական այդ

տոնի 1500-ամյակի կապակցությամբ Երանաշնորհ Հայրապետը այդ իրադարձու-
թյունը նվիրագործեց իր սրբապատ Կոնդակով:
Նույն իմաստությամբ վարվեցին Երանաշնորհ Տ. Գևորգ Զ և Տ. Վազգեն Ա Հայ-
րապետները:

1958 թ. լրացավ մեր օրերի Վարդանանց՝ Սարդարապատի փառապանծ հաղթանակի 50-ամյակը: Այդ օրերի հայորդիները շատ լավ գիտեին, որ Սարդարապատը փակ թեմա էր և նրանով զբաղվել հնարավոր չէր: Եթե ինչ-որ ձևով խոսվել կամ գրվել է, ցավոք այն ներկայացվում էր ծուռ հայելու մեջ: Այստեղ նորից Մայր Աթոռն էր, որ Վազգեն Ա Երանաշնորհ Հայրապետի սրբապատ Կոնդակով ոչ միայն ճիշտ գնահատեց հերոսական այդ ճակատամարտը, այլև խրախուսեց մեր գիտնականներին անցնել գործի և վեր հանել մեր նորագույն պատմության աքանչելի էջերից մեկը: Վարդանանց հերոսամարտով ոգևորվել են բոլոր դարերում: Վարդանանք և Ղևոնդյանք մեզ հետ են եղել Սարդարապատում և Արցախյան պատերազմներում:

Երրորդ հազարամյակի առաջին Ս. Ծննդյան օրը մենք բոլորս Մայր Տաճարում ականջալուր եղանք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Հայրապետի սրբապատ Կոնդակի ընթերցմանը, որով կոչ էր ուղղված աշխարհասփյուռ իր զավակներին և աշխարհի բարի կամքի տեր ժողովուրդներին, որ ողջ 2001 թ. հայտարարվում է հոբելյանական, Հայաստանյայց Եկեղեցու պետականորեն ճանաչման 1700-ամյակի առիթով: Այսօր, սիրելի ներկաներ, անվանակոչությունն է նաև մեր սիրելի Վեհափառ Հայրապետի, որի ծննդյան 50-ամյակն ու քահանայության 29-ամյակն է լրանում հոբելյանական այս տարում:

Թույլ տվեք բոլորի անունից մեր սրտի խոսքն ուղղենք առ Աստված, որ երկար և առողջ տասնամյակների կյանք և երջանիկ հովվապետություն պարգևի Ազգիս Սրբազնագույն Հայրապետին, որպեսզի մեր Սուրբ Եկեղեցին առաջնորդի 3-րդ հազարամյակում»:

Այնուհետև երգչախմբի կատարմամբ հնչած ոգեշունչ «Նորահրաշ» շարականը բոլոր ներկաներին ներշնչեց այն ավարայրական ոգով, որով 1550 տարի առաջ մեր մարտիրոսները, մի ձեռքում սուր և մյուսում՝ խաչ, դիմեցին դեպի գիտակցված ստույգ մահ՝ դեպի անմահություն:

Վարդանանց հերոսամարտի նախատակների հիշատակին նվիրված գրական-գեղարվեստական ցերեկույթին, օրվա տոնի խորհրդի և ազգային-եկեղեցական նշանակությանը նվիրված ներածական և ամբողջական ճառով, հանդես եկավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հարգարժան դասախոս պրն Պետրոս Հովհաննիսյանը, որն էլ նշեց Հայ Եկեղեցու բացառիկ դերն Ավարայրում և նրա ապագա պետականության կայացման մեջ.

Մենակատար Հարություն սրկ. Տերտերյանը կատարեց Մ. Եկմալյանի «Լռեց» երգը, որից հետո Ե լսարանի սան Դավիթ Մարգարյանն ասքումով արտասանեց Ռ. Պատկանյանի «Հիմի՞ էլ լռենք» բանաստեղծությունը:

Ուսանողության անունից իր խոսքը և որդիական երախտագիտությամբ շնորհավորանքը Վեհափառ Հայրապետին ուղղեց Ե լսարանի սան Մհեր Ծատուրյանը.

«Շնորհազարդ Հայրապետ Ամենայն Հայոց.

Ձեր թույլտվությամբ այսօր, Սրբոց Վարդանաց տոնի կապակցությամբ, համայն ուսանողության Գևորգյան Հոգևոր Ճեմարանի ցանկանում եմ պարզ խոհերս և, ինչո՞ւ չէ, նաև հորդորներս ուղղել բոլոր ներկաներին:

Այսօր, սիրելինե՛ր, հավաքվել ենք՝ միահոյլ ապրելու և մեր մեջ զգալու Վարդանանց խորհուրդը: Շատ անգամներ են այստեղից հնչել պերճաշուք խոսքեր, որոնցով փորձել են պանծացնել հայ քաջորդիների հիշատակը: Բայց ի՞նչ է, արդյո՞ք միայն պիտի բավարարվենք ասդադակելով ու հայտարարելով, թե «քաջերը քաջերի դեմ ելնելով՝ երկու կողմերն էլ պարտվեցին»: Արդյո՞ք նրանց անունը լոկ հիշատակություն պետք է լինի մեր մտքում: Իհարկե՝ ո՛չ:

Վարդանանք պարզապես հիշողություն չեն, որ շուտով մոռացվեն և անհետանան այս ապրվածամերժ աշխարհում: Սրբոց Վարդանանց պատերազմը ոչ թե մահվան, այլ կյանքի խորհրդանիշ է, նրանց նահատակությունը դեռ վաղուց իր դրոշմն ու կնիքը պիտի ունենար մեր սրտերում՝ իբրև խաչյալ, բայց միևնույն ժամանակ՝ հարուցյալ ազգի կերպար: Շատ քիչ է հարուցյալ լինելը, անհրաժեշտ է պահպանել այդ հարուցյալ վիճակը և մնալ իբրև այդպիսին: Քանզի չենք կարող ապրել միայն պատմության հիշողություններով, առավել ևս չպիտի կարողանանք մխիթարվել անցյալի վառ ու պայծառ հաջողություններով, եթե այսօր իսկ չլինենք կնրտողն ու վերստին կյանքի կոչողը մեր նույն դարագնաց և Աստծո ներկայությունն իր մեջ ունեցած ու ապրած պատմության: Դեռ միջնադարում ծնված, բայց արարչագործությունից սկիզբ առած Նարեկյան աղոթքներով ու Տաթևյան աստվածահայաց մտածողությամբ այս «փոքր ածու»-ն կարողացավ իր մարմնից դուրս գալ և առսկ հոգի մնալ: Այսօր, ավա՜ղ, նա խախտել է իր հայրերի ուխտն Աստծո հետ և կրկին դարձել մարմին: Իսկ ի՞նչը մեզ պիտի վերստին մեր նախկին փառքին դարձնի. հավատքը, հույսը և սերը միայն: Մեր նախնիների արյունը՝ թափված Ավարայրի դաշտում, այդ է մեզ հուշում: «Անցյալն անցած չէ»,- բազմիցս սիրում էր կրկնել Գարեգին Ա Ամենայն Հայոց Գերիմաստ Կաթողիկոսը: Եվ հենց այդ ոչ անցած անցյալում հայ նահատակաց սուրբ արյունը թողել է իր հետքը՝ մեր պարտականությունների ճանապարհը գծելով: Ճանապարհ, որը միշտ մեզ համար եղել է լի խոչընդոտներով ու տառապանքներով, բայց որն էլ մեզ խոստանում է խաղաղության նավահանգիստ հասցնել:

Եվ այժմ, ո՛վ Սրբազնագույն Եպիսկոպոսապետ Ամենայն Հայոց, այս մտորումներով խանդավառված՝ թույլ տվեք մեր շնորհավորանքներն ուղղել Ձեզ՝ Ձեր անվանակոչության օրվա առիթով: Պիտի ցանկանայինք, որ աստվածահամբույր այս վայրում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ձեր հայրապետական տարիները լինեին արգասաբեր, ծառայեին «վասն լուսաորութեան եւ վերանորոգութեան Եկեղեցւոյ

Հայաստանեաց», և դուք՝ իբրև մերօրյա նոր Ղևոնդ երեց, քաջ հովվի պես առաջնորդեիք ողջ հայ ժողովրդին «ի կենաս Ձեր ուղիղ վարդապետութեամբ»:

Այս մաղթանքներով թույլ տվեք ավարտել խոսքս՝ «մաղթելով ի համբոյր Ձերդ Սրբութեան Միռոնաշող Աջոյն»»:

Ամբողջ դահլիճով հնչեց Մ. Եկմալյանի «Ով Հայոց Ասպված» քաղցրալուր, հոգեհարազատ երգը: Գ լսարանի սան Արման Հարությունյանը, Վարդանանց արիության ոգով լցված, արտասանեց Վ. Թեքեյանի «Խորհուրդ Վարդանանց» գեղեցիկ բանաստեղծությունը: Եղիշեի պատմությունից «Որոց ոգիքն թուլացեալ են» հատվածը խանդավառությամբ արտասանեց Գ լսարանի սան Անդրանիկ Հակոբյանը:

Այնուհետև ուսանողական երգչախումբը, մենակատարությամբ Զ լսարանի սան Արթուր սրկ. Կարապետյանի, հնչեցրեց Մ. Եկմալյանի «Տէր. կեցո Դու զՀայս» հոգեպարար երգը:

Հ. Սահյանի «Ախր ես ինչպե՞ս վեր կենամ, գնամ» ոտանավորը մեծ հուզմունքով արտասանեց Գ լսարանի սան Էդիկ Հակոբյանը, որին հետևեցին Մ. Եկմալյանի «Պլպուլն Ավարայրի» և Բ. Կանաչյանի «Զեյթունցիներ» ստեղծագործությունները երգչախմբի կատարմամբ:

Այդ վեհ պահին, երբ բոլորի վրա սավառնում էին նահատակների ոգիները, Վեհափառի լուսեղեն կամարներից ներս տեղի ունեցան ևս երեք ուշագրավ իրադարձություններ: Նախ Հայոց Հայրապետը վարդապետական լանջախաչեր շնորհեց Եզրաս վրդ. Ներսիսյանին, Դերենիկ վրդ. Դավթյանին և Արշակ վրդ. Խաչատրյանին, որոնք նույն օրը Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, Շահե արքեպս. Աճեմյանի բարձր տնօրինությամբ, ստացել էին վարդապետական իշխանություն: Այնուհետև Մնանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի շատ սիրելի դասախոս Սանդրո Բեհբուդյանի կուրծքը զարդարվեց «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» պատվավոր շքանշանով և մրցանակներ շնորհվեցին հանրակրթական դպրոցների 10-րդ դասարանի այն փաղանդավոր աշակերտուհիներին, որոնց շարադրությունները լավագույնն էին ճանաչվել «Վարդանանքի խորհուրդ»-ը խայտարարված մրցույթում:

Վարդանանց ճերտասամարտի 1550-ամյակին նվիրված հուշ-ցերեկույթն ավարտվեց Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքով:

Վեհափառ Հայրապետը, անդրադառնալով Վարդանաց տոնի խորհրդին, նշեց, որ հայ իրականության մեջ այդ տոնը եղել է մեր ժողովրդի ինքնության ու ոգին կերտող մի իրադարձություն: Այսօր էլ Ավարայրի այդ ոգին հրաշագործում է մեր կյանքում, մեր անձերից ներս, որով կարողանում ենք մերօրյա պարտադրյալ զրկանքներով, տառապանքներով, կորուստներով, արյուն-արցունքով ձեռք բերած հայոց պետականությունը զորեղ ու հաստատուն դարձնել:

Վեհափառ Հայրապետը խորհորեց արարել անմահության մնայուն գործեր, որոնք նպատակաուղղված լինեն վասն Հիսուսի և վասն հայրենյաց:

Մեր պատմությունը հարուստ է պայծառ մտքի փայլատակումներով, հավատքի ու ազատության համար մղված բուռն պայքարի ու վեհապանծ կյանքի վկայություննե-

րով: Հայ գիրը և Վարդանանց հերոսամարտը հայ մարդուն բերեցին իր հոգի և հավատքի գիտակցությանը, նրանց միջոցով քրիստոնեական կրոնը դարձավ մերը, ազգային ոճ զգեցավ:

Մեսրոպյան փառքը փրկեցին հայ լեզուն, հայ մշակույթը բյուզանդական խառնարանի մեջ առւզվելուց, իսկ Վարդանանց մերկացրած սրերը մեր հոգու հավատը և այդ նույն հավատի ազատության ինքնուրույնությունը:

Ինչպես երեկ, նույնպես և այսօր թող միշտ վառ ու պայծառ մնան Ս. Վարդանանց հերոսները մեր հոգիներում: Բյուր օրհնություն Ս. Վարդանանց հերոսների ու նահատակների խնկելի հիշատակին:

*ՀԱՅԿ ԴՊԻՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ*
*Գևորգյան Հոգևոր Ճեմարանի*
*Բ լսարանի սան*

# ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ ՕՇԱԿԱՆԻ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

*«...Երիտասարդ երեք այս վարդապետների նոր ծնունդը վկայում է Հայ Եկեղեցու կյանքի շարունակության, իրական «զարմանալի փառքն է Հայ Եկեղեցու կյանքի շարունակության, իրական «զարմանալի բողբոջումի» և Մեսրոպյան սրբազան ավանդության հավերժության»* ահա այս խոսքերով Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը այս թվականի փետրվարի 22-ի վաղ առավոտյան դիմեց Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում ներկա հոգևորականաց դասին, հավատացյալներին և հյուրերին:

Արագածոտնի լեռնային եղանակին բնորոշ ցրտաշունչ, սակայն պայծառ և լուսավոր մի առավոտ է: Թվում է, թե գյուղը սովորականի նման շարունակում է իր բնականոն և հանդարտ կյանքը, սակայն առաջնորդանիստ եկեղեցում այսօր զգալի աշխուժություն է տիրում: Գրեթե բոլոր պաշտոնյաները, սարկավագներն ու դպիրները, Հոգեշնորհ Հայր Վազգենի գլխավորությամբ, ձեռնամուխ են եղել յուրահատուկ մի պատրաստության: Ահա երևում են առաջին հյուրերը և այցելուները: Եկեղեցուն են մոտենում մի խումբ երիտասարդ հոգևորականներ, որոնցից երեքը այսօր հատուկ և նվիրական մի օրհնություն պետք է ստանային ու վերահաստատեին իրենց հոգևոր ուխտը՝ ընդունելով Հայ Առաքելական Եկեղեցու վարդապետական չորս մասնավոր աստիճանները:

Նախորդ օրը, փետրվարի 21-ին, Գևորգյան Հոգևոր Ճեմարանում տեղի էր ունեցել վարդապետական թեզերի պաշտպանություն, որի ընթացքում սույն երեք աբեղա Հայրերը գերազանց առաջադիմությամբ պաշտպանել էին իրենց գիտական աշխատությունները և քննիչ հանձնաժողովի որոշմամբ արժանացել բարձր գնահատանքի և վարդապետական աստիճանի: Սույն եռյակն էին կազմում Ռուսաստանի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Եզրաս աբղ. Ներսիսյանը, Տավուշի մարզի հոգևոր հովիվ Տ. Դերենիկ աբղ. Դավթյանը և Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ աբղ. Խաչատրյանը:

Ս. Մեսրոպ հնամենի եկեղեցու կամարների ներքո և Սուրբ Ուսուցչի անմահ հոգու հովանավորությամբ նրանք ծնրադրել էին համեստ աշակերտների օրինակով, իրենց վեղարները խոնարհած՝ ստանալու համար Վարդապետության մասնավոր չորս աստիճանները: Հնչեցին դարերի ընթացքում մեր եկեղեցական հայրերի կողմից սահմանված աղոթքները, ընթերցվեցին ավետարանական համապատասխան հատվածներն ու սաղմոսները, երգվեցին հոգենորոգ շարականները: Նախագահությամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, Գերա-

շնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի և Հոգեշնորհ Տ. Արարատ ծ. վրդ. Գալթագճյանի հոգևոր վկայությամբ, նրանք ստացան վարդապետական գավազան:

Սրբազան Հոր պատգամում ևս մեկ անգամ շեշտվեց, որ երիտասարդ հոգևորականները, այս աստիճանը ստանալով, այսուհետև առավել զորացած իրենց հավատքի մեջ, պիտի անցնեն իրենց ծառայության դաշտ՝ ունենալով սակայն ավելի մեծ պատասխանատվություն իրենց վստահված հոտի համար, և գիտակցելով այս երրորդ հազարամյակի նպաստավոր և թերի կողմերը՝ լինեն մշտապես խորագետ, հետևեն միմիայն Աստվածային ճշմարտությանը:

Հանդիսավոր արարողության ավարտին նորընծա վարդապետներն իրենց առանձնական աղոթքը կատարեցին Ս. Մեսրոպ Մաշտոցի շիրիմի առջև: Այս ներկաները հյուրընկալվեցին տեղի Առաջնորդարանում, ուր սիրո համեստ սեղանի շուրջ յուրաքանչյուր անձ իր սրտի խոսքն ուղղեց այս գեղեցիկ առիթով:

Վարդապետական տվչության արարողությունն առաջինն էր երրորդ հազարամյակի շեմին և, բնականաբար, այն մեծ ուրախությամբ և հոգեհարազատ հուշերով լցրեց այս օրերին Մայր Աթոռում գտնվող ավագ և բարձրաստիճան հոգևորականների սրտերը, իսկ երիտասարդ սերունդների և համայն հավատացյալների հոգիներում օրինակելի հավատքի և առաքինասեր պատասխանատվության գիտակցություն արթնացրեց:

*ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍՐԿ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*



**Տ. ԽԶՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՆԵՐՄԻՍՅԱՆ**
(ավազանի անունը՝ Մկրտիչ)

Ծնվել է 1959 թ. հոկտեմբերի 3-ին Էջմիածնի շրջանի Ոսկեհատ գյուղում:

1977 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1978 թ. մեկնել է զինվորական ծառայության: Զորացրվելուց հետո, 1980 թ., ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1983 թ. դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոսի տոնի օրը, Տ. Ներսես եպս. Պոզապալյանի ձեռամբ ձեռնադրվել է սարկավագ:

1984 թ. ավարտել է Հոգևոր Ճեմարանը և պաշտպանել «Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու «Ձեռնադրության Մաշտոցի» զարգացումը Ժ-ԺԴ դդ.» թեմայով ավարտաճառը՝ արժանանալով «գերազանց» գնահատականի:

1985 թ. սեպտեմբերի 8-ին Ամենայն Հայոց Հայրապետի հրամանով, ձեռամբ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1984-1986 թթ. «Ներածություն Հին Կտակարանի» առարկա է դասավանդել Հոգևոր Ճեմարանում:

1986-1988 թթ. սովորել է Լենինգրադի հոգևոր ակադեմիայում:

1988 թ. նշանակվել է Լենինգրադի հոգևոր հովիվ:

2000 թ. հոկտեմբեր ամսին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական բարձր փնօրինությամբ նշանակվել է Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդի պաշտոնակատար:

2001 թ. փետրվարի 21-ին պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի պատմությունը» թեմայով: Նույն թվականի փետրվարի 22-ին, ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, ստացել է Մասնավոր վարդապետական չորս աստիճան:

2001 թ. ապրիլից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական բարձր փնօրինությամբ նշանակվել է Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ և Մոսկվայի ու Համայն Ռուսիո պատրիարքությունում Հայ Եկեղեցու ներկայացուցիչ:



## Տ. ԴԵՐԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎԹՅԱՆ
(ավազանի անունը՝ Արծվի)

Ծնվել է 1966 թ. ապրիլի 23-ին Կապան քաղաքում:

1973-1983 թթ. սովորել և ավարտել է տեղի № 6 միջնակարգ դպրոցը:

1983-1985 թթ. ընդունվել և ավարտել է Երևանի № 8 Գեղարվեստի ուսումնարանը:

1986-1988 թթ. ծառայել է Խորհրդային բանակում:

1988-1991 թթ. ծառայել է Կապանի շրջանի Գեղանուշ գյուղի Ս. Հռիփսիմե եկեղեցում, որպես դպիր:

1991 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան:

1992 թ. հունվարի 18-ին Ս. Հռիփսիմե վանքում ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի:

1995 թ. ավարտել է Հոգևոր ճեմարանը: Պաշտպանել է ավարտաճառ՝ «Սյունյաց եպիսկոպոսական Աթոռի պայքարը ունիթոռների դեմ 14-15-րդ դդ.» թեմայով՝ արժանանալով «լավ» գնահատականի:

1995 թ. նոյեմբերի 12-ին Մայր Տաճարում ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ. Աստղիկ եպս. Արիսփակեսյանի:

1997 թ. մայիսի 15 Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի հրամանով նշանակվել է Գուգարաց թեմի Իջևանի տարածաշրջանի հոգևոր տեսուչ:

2001 թ. փետրվարի 21-ին պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Թագավորօրհնեքի կանոնը Հայ Եկեղեցում» թեմայով: Նույն թվականի փետրվարի 22-ին, ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, ստացել է Մասնավոր վարդապետական չորս աստիճան:



**Տ. ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ**
(ավազանի անունը՝ Սամվել)

Ծնվել է 1973 թ. օգոստոսի 5-ին Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղում:

1979-1990 թթ. ընդունվել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1990-1996 թթ. ընդունվել և ավարտել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը:

1996 թ. մայիսի 19-ին Մայր Տաճարում ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի:

1996-1997 թթ. աշխատել է Վեհարանում որպես քարտուղար:

1997 թ. հոկտեմբերի 30-ին Գևորգյան Հոգևոր Ճեմարանում պաշտպանել է ավարտաճառ՝ «Հնդկահայ գաղութը և Մայր Աթոռի նվիրակությունը Հնդկաստանում» վերտառությամբ՝ արժանանալով «գերազանց» գնահատականի:

1997 թ. դեկտեմբերի 14-ին, ձեռամբ Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանի, Մայր Տաճարում ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ նշանակվելով Մայր Աթոռի պաշտոնյա:

1999 թ. մարտի 1-ին Կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի կողմից ծառայության է կոչվել «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում որպես գլխավոր խմբագրի պաշտոնակատար:

2000 թ. հունվար 1-ին նորընտրյալ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրամանով նշանակվել է նորաստեղծ «Մայր Աթոռ - Թեմեր» գրասենյակի վարիչտնօրեն, 2001 թ. փետրվար 12-ի Հայրապետական տնօրինությամբ ստանձնել է Մայր Աթոռի դիվանապետի պարտականությունները:

2001 թ. փետրվարի 21-ին պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Հայ Եկեղեցու նվիրակությունը» թեմայով: Նույն թվականի փետրվարի 22-ին, ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, ստացել է Մասնավոր վարդապետական չորս աստիճան:

# ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՂԱՐԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

*«Գնացէք այսուհետեւ, աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»:*

(Մատթ. ԻԸ 19)

Սույն թվականի փետրվարի 19-ին, Սրբոց Ղևոնդյանց քահանայից տոնին մատուցված Ս. Պատարագի ընթացքում, կատարվեց քահանայական ձեռնադրություն և օծում: Օրվա պատարագիչն էր Գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը: Ավետարանից հետո քահանայական ձեռնադրության ընծայացուները Սուրբ Խորանի առաջ դրվեցին և Սրբազան հայրը, ըստ Մաշտոցի, ...

Ձեռնադրության նախորդ օրը, երեկոյան ժամերգության ավարտին, տեղի ունեցավ Վաղարշակ, Արսեն, Սահակ, Արամ և Սերժ սարկավագների քահանայական կոչման արարողությունը: «Նայեաց ի մեզ» հոգեպարար շարականի երգեցողության ներքո ընծայացուները ծնկեցին Մայր Տաճարի Ավագ դռան մոտ և աստիճանաբար, սաղմոսասացների ու դպիրների երգեցողության ներքո, խարտավիլակ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանի ուղեկցությամբ, մոտեցան Իջման Սուրբ Սեղանի առջև բազմած ձեռնադրող Սրբազանին՝ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանին, որը, ըստ Ձեռնադրության Մաշտոցի, հարցեր ուղղեց խարտավիլակ Հայր Սուրբին և քահանայացուներին: Կատարվեց ընծայացուների հավատքի, կրթության և գիտության մասին վկայություն, որին հաջորդեցին ավետարանական ընթերցվածքները:

Այնուհետև կատարվեցին Սուրբ Երրորդության մասին ուղղափառ հավատքի և դավանության, Քրիստոսի մարդեղության մասին քննություն և խոստովանություն: Մեկ առ մեկ մերժվեցին և նզովվեցին բոլոր հերետիկոսներն ու հերձվածողները: Վերջում ընծայացուները բարձրաձայն կարդացին հավատքի խոստովանությունը:

«Հայր մեր» և «Պահպանիչ» աղոթքներով ավարտվեց կոչման կարգը:

Հաջորդ օրը, փետրվարի 20-ին, հընթացս Ս. Պատարագի կատարվեցին Վաղարշակ, Արսեն, Սահակ, Արամ և Սերժ սարկավագների քահանայական ձեռնադրու-

թյունն ու օծումը՝ ձեռամբ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանի և խարտավիլակությամբ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանի:

Պատարագը շարունակվեց մինչև «Զի ողորմած եւ մարդասէր ես, Աստուած...» մաղթանքը: Այնուհետև ծունկի եկած ընծայացուները, սաղմոսների և շարականների երգեցողության ներքո, բարձրացան Ս. Խորան: Ընթերցվեցին քարոզներ, աղոթքներ Սուրբ Մաշտոցի, որոնց հաջորդեց հրաժարման պահը: Քահանայացու սարկավագները դառնալով արևմուտք, ձեռքերը վեր բարձրացրած, «Աստուածային եւ երկնաւոր շնորհ» երգի ներքո հրաժարվեցին աշխարհից և աշխարհիկ կյանքից, որից հետո Սրբազան Հայրն իր աջը դնելով նվիրյալների վրա՝ ասաց. «Ես դնեմ զձեռս ի վերայ սոցա, եւ դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցին սոքա զաստիճան քահանայութեան՝ անարատ պահել առաջի սեղանոյն Տեառն Աստուծոյ»:

Այնուհետև Ձեռնադրության Մաշտոցից կարդացվեցին օրվա ճաշու ընթերցվածքները, և Պատարագը շարունակվեց մինչև «Ողջոյն»-ի պահը: Այստեղ ընդհատվեց Պատարագը, և դպիրները շարունակեցին երգել ձեռնադրության շարականները: Աղոթքների ընթերցմամբ փոխվեցին քահանայական զգեստները, և ընծայացուները փակ վարագույրի հետևում, «Խորհուրդ խորին» շարականի երգեցողության ներքո, զգեստավորվեցին պատարագչի հանդերձանքով:

Ապա կատարվեց ձեռնադրյալ քահանաների օծման արարողությունը: Սրբազան Հայրը երգելով «Առաքելոյ աղաւնոյ» շարականը՝ հեղեց Սուրբ Մյուռոնը բթնոցի (փոքրիկ բաժակ) մեջ, որից հետո դրոշմեց նրանց ճակատը, աջ և ձախ ձեռքերը՝ տալով նրանց քահանայական անուններ. Վաղարշակ սարկավագը վերանվանվեց Տ. Հարություն, Արսեն սարկավագը՝ Տ. Զենոն, Սահակ սարկավագը՝ Տ. Թաթուլ, Սերժ սարկավագը՝ Տ. Ղևոնդ, Արամ սարկավագը՝ Տ. Իգնատիոս: Հետո Սրբազանը նրանց հանձնեց Սուրբ Սկիհը, մաղթման «հանդերձ կենարար Մարմնով եւ Արեամբ»՝ տալով Սուրբ Պատարագ մատուցելու իշխանություն:

«Պահպանիչ» աղոթքով ավարտվեցին Ձեռնադրությունն ու Օծումը, և Սրբազան Հայրը նորընծաներին ուղղեց իր հայրական պատգամը՝ հիշեցնելով պոնի խորհուրդը, Ղևոնդյանց քահանայից անձնազոհությունը:

Նույն օրը, երեկոյան, տեղի ունեցավ նորընծա Տ. Իգնատիոս քահանայի աբեղայական օրհնության կանոնը: Ձեռնադրող Տ. Եզնիկ եպիսկոպոսը Մաշտոցից աղոթքներ կարդալով՝ իր օծյալ աջը դրեց նորընծայի գլխին՝ հայցելով Տիրոջ օգնությունը, Սուրբ Հոգու էջքը և շնորհը: Սրբազան Հայրն ընթերցեց նաև Սուրբ Երրորդության յուրաքանչյուր Անձին ուղղված աղոթքները:

Արարողության վերջում կատարվեց վեղարի օրհնության կարգ: Վեղարը դրվեց նորընծայի գլխին՝ իբրև կուսակրոն քահանայության խորհրդանիշ:

Թող Աստված հաստատ պահի նորընծաներին իրենց կարգի մեջ և արժանացնի՝ լինել «մշակք առանց ամօթոյ»:



## Տ. ԻԳՆԱՏԻՈՍ ԱԲԵՂԱ ՄԱԼԽԱՍՅԱՆ

(ավազանի անունը՝ Արամ)

Ծնվել է 1976 թ. նոյեմբերի 17-ին Երևան քաղաքում:

1983 թ. ընդունվել է տեղի № 30 միջնակարգ դպրոց, որն ավարտել է 1993 թ.:

1993 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան և ավարտել 1999 թ.:

1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան եպս. Գալփաքյանի:

2000 թ. դեկտեմբերի 15-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Էջեր խորհրդային կարգերի օրոք Հայ Եկեղեցու և պետության փոխհարաբերությունների պատմությունից» թեմայով:

2001 թ. փետրվարի 20-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանի:



## Տ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՔԱՀԱՆԱ ԾԱՏՈՒՐՅԱՆ

(ավազանի անունը՝ Վաղարշակ)

Ծնվել է 1975 թ. հոկտեմբերի 6-ին Արարատի մարզի Խոր Վիրապ գյուղում:

1982 թ. ընդունվել է տեղի № 5 միջնակարգ դպրոց, որն ավարտել է 1992 թ.:

1993 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան և ավարտել 1999 թ.:

1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան եպս. Գալփաքյանի:

2000 թ. դեկտեմբերի 27-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Խոր Վիրապի վանքը» թեմայով:

2001 թ. փետրվարի 20-ին ձեռնադրվել է քահանա՝ ձեռամբ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանի:



## Տ. ՁԵՆՈՆ ՔԱՀԱՆԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ
(ավազանի անունը՝ Արսեն)

Ծնվել է 1975 թ. դեկտեմբերի 17-ին Երևան քաղաքում:

1982 թ. ընդունվել է փեղի Գրիգոր Զոհրապի անվան միջնակարգ դպրոց, որն ավարտել է 1992 թ.:

1993 թ. ընդունվել է Սնանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց և ավարտել 1998 թ.:

1998-1999 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Զ լսարանում:

1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ոսկան եպս. Գալփաքյանի:

2000 թ. դեկտեմբերի 15-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Խրատք ժամապետաց» թեմայով:

2001 թ. փետրվարի 20-ին ձեռնադրվել է քահանա՝ ձեռամբ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանի:



## Տ. ԹԱԹՈՒԼ ՔԱՀԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ
(ավազանի անունը՝ Սահակ)

Ծնվել է 1975 թ. նոյեմբերի 15-ին Արտաշատ քաղաքում:

1982 թ. ընդունվել է Մասիսի № 15 միջնակարգ դպրոց, որն ավարտել է 1992 թ.:

1993 թ. ընդունվել է Մ. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան և ավարտել1999 թ.:

1999 թ. մայիսի 23-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Ռուսկան եպս. Գալփաքչյանի:

2000 թ. դեկտեմբերի 15-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Այրիվանք կամ Գեղարդավանք» թեմայով:

2001 թ. փետրվարի 20-ին ձեռնադրվել է քահանա՝ ձեռամբ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանի:



## Տ. ՂԵՎՈՆԴ ՔԱՀԱՆԱ ՄԱՅԻԼՅԱՆ

(ավազանի անունը՝ Մերժ)

Ծնվել է 1950 թ. Երևանում:

Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, 1966 թ., ընդունվել է ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետ, որն ավարտելուց հետո երկար տարիներ ֆիզիկա և մաթեմատիկա է դասավանդել միջնակարգ դպրոցներում:

1976 թ. սկսած աշխատել է Երևանի հաշվողական կենտրոններից մեկում՝ որպես ինժեներ-ծրագրավորող:

1988 թ. երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով աշխատել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ս. Գրքի արևելահայերեն առաջին հրատարակությունը պատրաստելու հանձնաժողովում:

2000 թ. աշխատում է Մայր Աթոռի Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնի հրատարակչական բաժնում:

Դասավանդում է «Կրոնի պատմություն» և «Ժամանակակից աղանդներ» առարկաներ Գևորգյան Հոգևոր Ճեմարանում և Վազգենյան Դպրանոցում:

Մի շարք կրոնագիտական գրքերի հեղինակ է, որոնցից կարելի է առանձնացնել «Ժամանակակից աղանդները Հայաստանում»՝ նվիրված Հայաստանում առկա կրոնական արդիական ուղղություններին:

2001 թ. հունվարի 14-ին, ձեռամբ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2001 թ. փետրվարի 20-ին ձեռնադրվել է քահանա՝ ձեռամբ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանի:

# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2001 թ. հունվարի 25-ին ՀՀ Եվրոպական Խորհուրդին լիիրավ անդամ դառնալը ողջ հայության համար պատմական մի իրադարձություն դարձավ: Խորհրդի 43 երկրների բնակչությունը միասնաբար կազմում է ութ հարյուր միլիոն:

Եվրախորհրդի մեջ ընդունվելու պաշտոնական արարողությունը սկսեց առավոտյան ժամը 9.00-ին, Ստրասբուրգում: Բացի ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանից և Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանից, հանդիսությանը մասնակցում էին Գերմանիայում ՀՀ դեսպան Աշոտ Ոսկանյանը, բազմաթիվ հայ կազմակերպությունների ներկայացուցիչներ և անհատներ, ինչպես նաև Գերմանիայի հայոց առաջնորդ Տ. Գարեգին արքեպս. Բեքչյանը՝ ընկերակցութեամբ Քյոլնի համայնքի անդամների և Հայ Գործարարների Միության ատենապետ Մուրադ Աքեյուզի:

* * *

Կաթոլիկ Եկեղեցու Ֆիլոքսենիայի անվան միջեկեղեցական կազմակերպությունը, որի ղեկավարն է Համբուրգի կաթողիկե կաճառի փեսուչ Մոնսենյոր Վիլմ Զանտերսը, 2001 թվականի փետրվարի 2-4-ը Սուրբ Անսկար և Սուրբ Բլազիուս Սեբաստացու տոների առթիվ հանդիսություններ էր կազմակերպել՝ նվիրված Հայաստանյայց Եկեղեցու 1700-ամյակին:

*ԴԻՎԱՆ ԳԵՐՄԱՆԻՈ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ*

# ԿՐՈՆԱԿԱՆ



## Տ. ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎՆԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(18 փետրվարի 2001 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Փառք եմ տալիս առ Բարձրյալն Աստված, որ տարիներ հետո նորից հնարավորությունը ունեմ Միածնաէջ այս Սուրբ Խորանից առ Աստված իմ ձայնս բարձրացնելու, աղոթքս առաքելու ձեզ համար, իմ սիրելի հայ ժողովուրդ, հատկապես այս ծանր և դժվար օրերին: Այն ժամանակ, երբ վերջինն էր իմ Պատարագը այստեղ, երկրում հայոց և ազգը հայոց դեռ այս ցավալի վիճակին չէր մատնված: Այն ժամանակ Լուսավորչի Սուրբ Գահին բազմած ունեինք Ամենայն Հայոց Վազգեն Կաթողիկոսը, իսկ այսօր այն զբաղեցնում է այն անձը, որը եղավ մեզ սերնդակից, և որին տրված է կոչումը ձեզ այսօրվա Եգիպտոսի հոգու գերությունից առաջնորդելու, իբրև մերօրյա նոր Մովսես, և այդ անունն է Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոս: Ոչինչ պիտի կարողանա նա անել, եթե մեզանից ամեն մեկը չզինակցի նրան, որպեսզի դժվարության, նեղության այս պատերազմին կարողանանք մենք հաղթել այնպես, ինչպես երբ Մովսեսի զինակիցները նրա ձեռքերը բարձր էին պահում,- ասում է Աստվածաշունչը,- հաղթում էր հրեա ժողովուրդը, երբ այդ ձեռքերը թուլանում էին, պարտվում էր հրեա ժողովուրդը:

Այսօր կարծես պարտվում ենք ոչ թե ռազմադաշտում, այլ հոգու պատերազմի դաշտում: Երբ այս գաղափարները տակավին երեկ իմ մեջ ուզում էի լուծման տողերի վերածել, Ս. Գրքի էջերից հանդիպեցի սաղմոսերգուի հետևյալ տողերին. «Աստուած մերժեցեր եւ աւերեցեր զմեզ, շարժեցեր զերկիր եւ խռովեցեր զնա». Տեր Աստված, մերժեցիր մեզ, շարժեցիր մեր երկիրը և խռովեցրիր բոլորին: Այսօր շարժված է մեր երկիրը, խռովված ենք բոլորս, որովհետև այն, ինչ սկսեցինք երեկ խանդավառությամբ, ոգևորությամբ, ինչ-որ տեղ հասցրեց մեզ հիասթափության: Ինչո՞ւ: Միա այս «ինչու»-ի պատճառն է, որ կուզեմ այս պահին ձեզ հետ միասին գտնել: Թերևս այս բոլորի պատճառը այն էր, որ տասնամյակներ առաջ սկսած տրամաբանված գործերի արդյունքն է, որ այսօր քաղում ենք, երբ տասնամյակներ շարունակ հայ ժողովուրդը իր իսկ ձեռքով քանդում էր իր իսկ աղոթքի սրբություն սրբոց տները, երբ կործանվում էին ոչ թե շենքերը իբրև կառույցներ, այլ հոգու կառույցն էր քանդվում: Եվ երբ երեկ Երևանում ման էի գալիս, տների խավարը սարսռեցնում էր էությունս. այսօրվա խավարը գալիս է երեկվա ձեր սկսած հոգու խավարից, երբ մենք սկսեցինք մերժել ինքներս մեզ, ինքներս մեր էությունը, մեր հավատքը, հայոց Աստծուն և հայոց Քրիստոսին, այն Քրիստոսին, որը 1700 տարիներ առաջ իջավ այստեղ՝ կնքելու մեր հավատքը, դրոշմելու մեր քրիստոնյա լինելու վկայագիրը: Այդ անում էր Նա, Ով խոստացել էր աշխարհ գալ երկրորդ անգամ գալ դատելու մարդկանց: Նա իր ուխտը չխախտեց մեզ համար, մեր սիրույն համար, այլ եկավ մեր քրիստոնեությունը առավել ևս զորացնելու, և ահա այդ էությունն էր, որ հեռացավ մեզանից, այդ էությունից հեռացած տասնամյակներ շարունակ կերտեցինք այն իսկ դիմագիծը, որից ինքներս իսկ այսօր տառապում ենք: Ով է այսօր մեզ այս վիճակին հասցրել: Կային տարիներ, երբ մեղադրում էինք այս կամ այն ազգերին, ո՞ւմ ենք ուզում այսօր մեղադրել. նրա՞նց, որոնք ծնվել են մեր մեջ, ուզում ենք մեղադրել այն մայրերի՞ն, որոնք երեկ տակավին ձեր մեջ էին և ոչ քրիստոնեական ոգով դաստիարակելով իրենց զավակներին՝ հասցրեցին մեր Եկեղեցին, ազգը այս խեղճ ու կրակ վիճակին: Երբ նայում ես մարդկանց դեմքին, հույսի փոխարեն հուսախաբություն է, երբ մարդկանց դեմքերին ես նայում, հավատքի փոխարեն հուսալքություն է, երբ հարցնում ես՝ Ի՞նչ պիտի անես, նա չի մտածում վաղվա իր երկրի, իր հայրենիքը կառուցելու մասին, այլ մտածում է իր հայրենիքից փախչելու մասին:

Ինչո՞ւ: Կարդանք սաղմոսերգուի խոսքերը. «Աստուծոյ հնազանդ լեր, անձն իմ, զի ի նմանէ է ինձ փրկութիւն». միայն Աստուծո հնազանդ եղիր, ով իմ անձ, և փրկությունը նրանից պետք է լինի: Արդյո՞ք եղանք հնազանդ: Ի՞նչ է նշանակում այսօր Աստուծո հնազանդ լինելը: Արդյո՞ք քրիստոնեություն՝ մոմավառություն է նշանակում, արդյո՞ք քրիստոնեություն՝ պարզապես մատաղ անել է նշանակում, և դրանից հետո ուտել, խմել և զվարճանալ, թե՞ քրիստոնեություն՝ նշանակում է առանց գիտակցելու խաչակնքել երեսը: Ո՛չ: Քրիստոնեություն՝ նշանակում է ապրել Քրիստոսով: Քրիստոս ասում էր. Վերցրու իմ խաչը և արի իմ ետևից: Ո՞ր է արդյոք այդ խաչը, ո՞ր է Քրիստոսի այդ խաչը, որ պետք է մեզ առաջնորդի դեպի փրկություն, դեպի լույս:

Չկար այդ խաչը երեկ, և այսօր մատնված ենք խավարի: Չի լինի այդ խաչը վաղը, և խավարը կմնա մեր հոգու հավիտենականության տանջանքը այնպես, ինչպիսին է այսօր: Այն նաև մեր ֆիզիկականի տանջանքն է: Քրիստոնեությունը մեզ համար ո՛չ միայն պետք է խոսք լինի, ո՛չ միայն տոնակատարություններ նշելու առիթ, ինչպես ոմանք զարմանալիորեն հայտարարում են նույնիսկ պաշտոնական տեղերում, այլ քրիստոնեությունը մեզ համար պիտի լինի կյանքի համոզում, պիտի լինի ընթացք, պիտի լինի ճանապարհ. «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը»: Եթե այդ ճանապարհով չընթանաք դուք, չընթանանք մենք, իբրև հավաքականություն, որի անունն է քրիստոնյա հայ ժողովուրդ, անիմաստ է խաչակնքելը, անիմաստ, որովհետև խաչի խորհուրդը մեզ պիտի չփրկի, անիմաստ է մոմ վառելը, որովհետև Քրիստոսի լույսը մեզ պիտի չառաջնորդի դեպի այդ փրկությունը: Քրիստոնեությունը գիտակցություն է, գիտակցված կյանքի մի ուղի, որի մեջ ոչ թե խոսքն է բախտորոշը, այլ գործը,- ասում էր Պողոս առաքյալը: Ահա, սիրելիներ, այս զգացումներն են իմ մեջ, որ ուզում եմ աղոթք առաքել առ Աստված, աղոթք, որի մեջ ամենաշատը աղերսանք է, խնդրանք, որովհետև սաղմոսերգուն թերևս նույն այդ զգացումներն ուներ իր մեջ, երբ տեսնում էր իր իսկ ազգի ճգնաժամային պահը և աղոթում էր Աստծո՝ ասելով. «Աստված, դու ես իմ Աստվածը, փրկիչը, ապավենը, որովհետև առանց Քեզ առավել պիտի դժվարանա և բարդանա մեր վիճակը»:

Ի՞նչ կարող ես ասել դու, ով իմ ազգ հայոց, այս ծանր պահին, եթե ոչ այս նույն խոսքերը սաղմոսերգուի. «Աստվա՛ծ, դու ես իմ Աստվածս, որովհետև ո՛չ մեկ եհովայի վկա, ո՛չ մեկ մորմոն, ո՛չ մեկ հոգեզալստական կամ արևմուտքից եկած սուտ մարգարեական չակերտյալ աստվածներ պիտի չկարենան քեզ, ով ազգ հայոց, հեռացնել իր իսկ ճշմարիտ արարիչ Աստծուց: Այս Աստծու մասին էր, այն Աստծու, որ քեզ հետ ուխտ արեց Նոյին ուղղյալ և նրա սերնդին այստեղ Արարատ լեռան և Արարատի փեշերին, ուխտ արեց՝ ասելով. «Դու ես իմ ազգն ընտրված»: - Ո՞ր է այսօր այդ ազգն ընտրված, անորոշության մեջ մատնված այնպես, ինչպես երբ Մովսես բարձրացավ փասնաբանյան բերելու, հրեաներն էին մատնվել անորոշության՝ սկսել էին հորթ պաշտել: Հիմա մենք փող ենք պաշտում, հիմա մենք ուրիշ աստվածներ ենք պաշտում, առանց ապավինելու մեր Աստծուն, հայոց արարիչ Աստծուն, որը պիտի լինի մեր միակ փրկությունը: Փրկությունը հայոց իր իսկ ճշմարիտ հավատքի և Եկեղեցու մեջ է: Պատահական չէ, որ Վահան Թեքեյանը պիտի ասեր. «Եկեղեցին հայկական ծննդավայրն է հոգվույս»: Բավական է հեռս դարձնենք այդ Եկեղեցուց, այլևս մենք պիտի հեռանանք մեր ծննդավայրից, մեր օրրանից և դժբախտաբար, եթե շատերը հեռանում են, ապա նրանք նախ հեռացել են իրենց հոգու օրրանից:

Ահա, սիրելիներ, այս մտածումների մեջ ձեզ կոչ եմ անում, այն պահին, երբ մեր դպրաց դասը առ Աստված իր աղոթքը պիտի ուղղի և «Տեր, ողորմյա» պիտի խնդրի Աստծուց, բոլորս ծնկաչոք ողորմություն խնդրենք, առաջինը, որ Աստված մեզ կարողանա հզորացնել մեր հավատքի մեջ, հաստատուն պահել մեր հավատքի մեջ, ու

իրապես գիտակցենք, թե Աստված է մեր Փրկիչը. Աստված է մեր ապավենը: Քաջական է, որ ապավինենք մեր հայոց Արարիչ Աստծուն, և վաղը փրկությունը ոչ խոսքով, այլ գործով պիտի իրականանա ոչ թե մի քանի անձերի համար, այլ ամբողջ ձեր, իմ հայ ժողովրդի համար, և պիտի աղոթենք Նարեկացու խոսքերով ասած. «Ի խորոց սրտի խոսք ընդ Աստուծոյ՝ անելով մեր աղոթքը, որպեսզի կարողանանք իրականացնել այն, ինչ ասում էին մեր հայրերը. «Ձայն բազմաց եղիցի ձայն Աստուծոյ»: Եվ հավատացեք, վաղը այսօրից ձեր բոլորի դեմքերը պիտի լինեն փայլատակած Քրիստոսի լույսով, ձեր հոգիները զորացած նրա հույսի և հավատքի զորությամբ, և Աստված պիտի տա այն, ինչի համար դուք այս պահին աղոթում եք, ինչի համար դուք այս պահին ձեր մոմերը վառեցիք և ձեր երեսները խաչակնքեցիք:

«Սէր աստուածային ընդ ձեզ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն»:

# Տ. ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ԽՈՍՔԸ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(19 փետրվարի 2001 թ.)

Սիրելի՛ հոգևոր եղբայրներ ի Քրիստոս,

Ինձ համար մեծագույն պատիվ է՝ միաբանական մեր հավաքի առաջին օրը ի պաշտոնե ողջունել ձեզ համայն հայության հոգևոր օրրան Սրբություն Սրբոց Էջմիածնում, Մայր Տաճարի հինավուրց այս կամարների ներքո: Միաժամանակ գոհություն եմ հայտնում Բարձրյալին, որ մեզ ի մի բերեց հենց Մեծ Պահքի, ինչպես նաև Վարդանանց հերոսամարտի փառավորման նախաշեմին, որպեսզի մեզանից յուրաքանչյուրը, օրինակ ունենալով Աստվածորդու փորձությունները լի շրջանը, մեկ անգամ ևս անդրադարձ ունենա հոգևորականի իր առաքելությանը և հատկապես այն պարտականությունների արդյունավորմանը, ինչի համար այսօր այստեղ ենք:

Սիրելի՛ք, հայ ժողովրդի հեռավոր անցյալից ժառանգած մնայուն արժեքների մեջ մեզ համար իր կրոնական նվիրականությամբ, իր պատմական նշանակությամբ և իր ազգային կարևորությամբ Աստվածաշրջիմ հաստատություն է Սուրբ Էջմիածինը, որ իրավամբ կոչվել է Սրբություն Սրբոց:

Երկիր մոլորակի վրա չկա որևէ քրիստոնյա ազգին հատուկ մի սրբավայր, որ իր բեղի սրբության ու վաղնջականության արժեքով կարողանա համեմատվել Սուրբ Էջմիածնի հետ: Հայ խանճարի ու հավատքի հրաշակերտն է Մայր Տաճարը և ամեն մի հայ հավատացյալի հավերժական հպարտությունն ու փառքը, որտեղից այսօր մեր աղոթքն առաքեցինք առ Երկնավոր Հայրը՝ հայցելով Նրա բարեգթությունը:

Այն քրիստոնեության անգնահատելի պարգևն է առաջին քրիստոնյա ժողովրդին, որ է հայությունը: Մենք պարտավոր ենք խորին ակնածանքով մոտենալ հոգևոր ու ազգային այն սրբություններին, այն արժեքներին, այն գանձերին, որոնք հայ ժողովրդի իմացական մեծությունն են հռչակում քաղաքակիրթ մարդկության առջև և որոնք փրկվեցին ժամանակի ավերներից, Հայրենիքի ու հայ կյանքի փլուզումներից և պահվեցին Ս. Էջմիածնի լուսաքանդակ կամարների ներքո:

Երկրներ ավերող, ժողովուրդներ ջարդող, աշխարհը երի ու սրի սարսափների մեջ դողացնող լենկթեմուրները, չինգիզխանները, շահաբասներն անգամ խնայեցին Ս. Էջմիածինը՝ նախապատ հայ ժողովրդի արցունքներից խղճահարված:

Թանկագին միաբան եղբայրներ, Ս. Էջմիածինը հավատավոր հայության անգիր Ավետարանն է, ազգիս անգիր պատմությունը, բյուրեղյա հավատքի անմահ խորհրդանիշը, որը մեր հայրերից ավանդվել է մեզ այն պարզ ճշմարտությամբ, թե մեր

առաքելության վեհությամբ ու վարդապետության անաղարտությամբ ու խորությամբ միայն կարող ենք լուսավորել հավատավոր մեր հոտի ճանապարհը: Չափազանցություն մի՛ համարեք և հավատացե՛ք, որ առանց Ս. Էջմիածնի աշխարհի ոչ մի ծագում հնարավոր չէ պահել կամ ունենալ Առաքելական Եկեղեցի:

Առանց Մայր Աթոռի շնորհազարդ գահակալի՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, անկարելի է պահպանել հոգևոր իշխանությունը և ոչ մի ժամանակ: Քրիստոնեությունն ու հայությունը անբաժանելի են, ինչպես անբաժանելի են Քրիստոս և Իր Եկեղեցին, Մայր Աթոռը և իր Գահակալը, Հայաստանը և Արարատը:

Քրիստոնյա հայության համար այսօր չկա այլ մեծություն, այլ վեհություն, այնքան նվիրական այլ սրբություն, քան Մայր Աթոռի Գահակալը, ում բարձր նախագահությամբ պիտի ընթանա մեր եռօրյա հավաքը, ում ներկայությունը ուժ ու խրախույս պիտի ներշնչի մեզանից յուրաքանչյուրին հավասարապես:

Մեր հավաքի բուն առաքելությանն անցնելուց առաջ, սիրելի հոգևոր եղբայրներ, մեկ անգամ ևս բարի գալուստ եմ մաղթում ձեզ և փոքրիկ անդրադարձով կամենում եմ հիշեցնել, որ մարդկային կյանքն ընդհանրապես արտահայտվում է խորհրդով, խոսքով և գործով: Կյանքի դրսևորման այս երեք ազդակների առնչությունը շատ սերտ է, փոխպայմանավորվածությունը՝ բացահայտ: Խոսքն ու գործը ծնվում են խորհրդից: Խորհուրդը մարդկային կյանքի էությունն է, խոսքով մարդիկ արտահայտում են իրենց խորհուրդները, գաղափարներն ու զգացմունքները, սակայն մարդկային դրսևորման ամենաազդու և իրական ազդակը գործն է, տեսանելի օրինակը, առանց որի խորհուրդն ու խոսքը թերի պիտի լինեն: Արդ, եթե այդ երեք ուժերը բարի նպատակի են ուղղվում, ապա մարդկային կյանքը ևս դառնում է բարի:

Քրիստոնյայի կյանքը բարությամբ է առլեցուն, երբ իր խորհուրդները կայծ են ստանում Աստծո բարության ջերմոցից: Պողոս առաքյալը Հռոմեացիներին ուղղված թղթում ասում է. «Մենք թեպետ թվով շատ, սակայն մի մարմին ենք Քրիստոսով, բայց յուրաքանչյուրս... ունենք տեսակ-տեսակ պարգևներ, ըստ այն շնորհների, որ տրված են մեզ. եթե մարգարեության շնորհ է՝ ըստ հավատի չափի, եթե ծառայության՝ թող ծառայի. եթե մեկն ուսուցանում է, թող ուսուցանի, եթե հորդորում է, թող հորդորի...» (ՀՌՈՄ. ԺԲ 5-8):

Մեր ցանկությունն է, որ Աստծո կամոք և Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց շնորհազարդ Հայրապետի բարձր նախագահությամբ եռօրյա մեր այս հավաքը լինի արդյունալից և քրիստոնեական ճշմարտությունների ներթափանցումով դառնա կենսական հզոր ազդակ հատկապես մեզանից հետո եկող հոգևորականների սերնդի համար:

Խոսքս, սիրելի՛ եղբայրներ, ավարտում եմ աղոթքով. «Ո՜վ Տէր երկնի եւ երկրի, աղբիւր իմաստութեան, բաշխող շնորհաց, հայցեմք ի Քէն ի բոլոր սրտէ եւ յամենայն մտաց, ցողեա՛ զիմաստութիւն Քո ի վերայ սպասաւորաց Քոց, զի լինիցիմք հաւատարիմ պաշտօնեայք Բանին Կենաց եւ անձինք նուիրեալք եկեղեցւոյ Քում սրբոյ ի մէջ ժողովրդեանս հայկազնեան. ամէն»:

# ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ



*ՌՈՒՄԱ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՄԻՐՈՒՄՅԱՆ*

## ՕՐԵՆՔԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ (ԱՍՏՎԱԾԱՅԻՆ) ԽՈՐՀՈՒՐԴԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐՈՅԵՆՑԻ ՊԱՏՄԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ
### (մեթոդաբանական տեսանկյուններ)

Աշխարհում դիտարկվող սոցիալական ընթացքների ժողովրդավարականացումը ուղեկցվում է սոցիալական կյանքի խորացող ճգնաժամով: Դրա հետևանքով այժմեականություն է ձեռք բերում ժողովրդավարության արժեքաբանական և բարոյական հիմքերի խնդիրը, որը, սկսած անտիկ շրջանից, հանգեցվում է ընդհանուր բարօրության գաղափարին: Սոցիալական փիլիսոփայության մեջ պահպանվել է Արիստոտելի հիմնադրած ավանդույթը, ըստ որի ժողովրդավարության ցանկացած ձև ենթադրում է դեպի ընդհանուր բարօրության իրականացմանը մարդկանց և իշխանության գործողությունների ուղղվածությունն ու որոշակի արժեքաբանական և բարոյական նորմերի դրանց համապատասխանեցումը: Մինչդեռ, գիտության մեջ գերիշխող հայեցակարգի համաձայն, ժողովրդավարությունը քաղաքական կյանքի ձև է, որի սահմաններում հատուկ նշանակություն է տրվում իշխանության ընտրություններին և տեխնոլոգիաներին: Ավելին. դրանց առկայությունը համարվում է ընդհանուր բարօրության հասնելու միակ պայմանը: Սոցիալական պրակտիկան այսօր գտնվում է լուսավորիչ-մտածող Գ. Լոկի լիբերալական փիլիսոփայության տրամաբանական ավարտը ներկայացնող հիշյալ հայեցակարգի ազդեցության

ներքո: Այդ հանգամանքը հաստատում է այն իրողությունը, որ մարդիկ մոռացության են տվել սոցիալական կեցության անկապտելի բնութագրությունները՝ մի շարք քաղաքացիական առաքելությունները:

Այդ իսկ պատճառով արդի հասարակությունների (այդ թվում նաև՝ ժողովրդավարության գործընթացքների մեջ վերջին տարիներին ներառված հայ հասարակության) համար անհրաժեշտ է այն գիտակցության հասունացումը, որ ժողովրդավարությունը (կյանքի պատշաճ ձևի իդեալը) չի կարող ո՛չ հակասել իր հիմքում ընկած արժեքաբանական և բարոյական նորմերի համակարգին, ո՛չ էլ անտեսել այն: Ուստի դարաշրջանի խնդիրն է՝ «ժողովրդավարություն» հասկացության մեջ ի սկզբանե դրված բովանդակության վերահաստատումը՝ նրա կարևորագույն չափորոշիչների՝ Օրենքի և Կառավարության խորհրդի վերաիմաստավորման միջոցով: Այս առումով ուշագրավ է XIX դարի հայ մտածող Հովհաննես Տերոյենցի պատմափիլիսոփայական հայեցակարգը, ուր ամրագրված հիշյալ հասկացությունները, ի տարբերություն լուսավորչական պատմափիլիսոփայության մոդելին, մեկնաբանվում են կրոնական մտածողության, այսինքն՝ բացարձակ արժեքների տեսանկյունից:

Տերոյենցի պատմափիլիսոփայության հիմքում ընկած է բացարձակ սկզբի՝ Աստծո գոյության հիմնադրույթը: Վերջինիս համաձայն, Աստված է տնօրինում բնության, մարդու և հասարակության գոյությունը: Այդ սկզբունքն իր մեջ ներառում է նաև Աստծո մյուս բոլոր արարածների համեմատ մարդու բացառիկության մասին թեզը (նրան ներհատուկ բանականության և կամքի շնորհիվ): Ընդսմին մարդու կենսագործունեության և պատմական ողջ ընթացքը դիտարկվում է երկու չափումների մեջ՝ իրական սոցիալական և տրանսցենդենտ: Դրա հետ մեկտեղ մարդու սոցիալական գործունեությունը համարվում է նրա հոգևոր աշխարհի ձևավորման և զարգացման միջոցը: Ուստի մարդու պատմական գոյության նվիրական իմաստը՝ առ Աստված նրա բարձրանալու մեջ է:

Պատմության Տերոյենցի բանաձևից բխում է, որ երկրային կյանքում մարդը կոչված է կատարելագործվել որպես հոգևոր էակ, ինչը պայմանավորված է բարոյական օրենքի աղբյուրի և էության նրա ճանաչումով: «Բոլոր ազգերը՝ նոր եւ հին, քրիստոնեա, հրէա, հեթանոս, աղանդատր, բարոյական սկզբունքներու աստուածային հեղինակութիւն մը կ'ուտան, եւ սկզբունքներն ընդհանրապէս մէկ են...»[1]:

Սակայն, ամենամաքուր և հաստատուն բարոյականի հիմքը համարվում է մարդու համար հանդերձյալ կյանքի հնարավորությունը ընդունող քրիստոնեությունը: Քրիստոնեական գաղափարախոսության տեսանկյունից աստվածային (ունիվերսալ) բարոյական օրենքը կապակցվում է մարդու սոցիալական էության հետ:

---

[1] Հ. Տերոյենց, Խորհուրդ ցաղտնի ընկերությանց, ներածություն, էջ ԺԱ, Կ. Պոլիս, 1863:

Մտածողի նման դիրքորոշումը անմիջականորեն ուղղված է լուսավորիչների պատմափիլիսոփայության հիմքում դրված սոցիալական առաջադիմության խորքային իմաստը ներկայացնող՝ անհրաժեշտաբար գործող բնական (բնության) օրենքի դեմ: Նա ելնում է այն նախադրյալից, որ բնական օրենքն այն օրենքն է, որը ծագում է նրան ենթակա եղողի բնության առանձնահատկություններից: Մարդու բնությանը ներհատուկ է հասարակականությունը, ինչը ենթադրում է հասարակության մեջ նրա կեցությունը: Մարդը «ընկերական կենդանի է, ինչ որ ունի նէ, կենաց պահպանութիւնը, բանականութեան զարգացումը, մտաւորական յառաջադիմութիւնը, ինչ որ մարդս զազաններէն կը տարբերէ եւ մարդ ըսուելու արժանի կ'ընէ՝ մարդս անիկայ ընկերութենէն ունի, որով անժխտելի կերպով կ'իմացուի որ մարդոյս համար բնական օրէնքը ընկերական կամ ընտանեկան նուիրական պայմաններէն պիտի ծագի»[2]:

Այս տեսանկյունից ըմբռնելի է լուսավորիչների բնական օրենքի երկու բնութագրությունների նրա քննադատությունը. ա) ըստ շրջանների պատմության բաժանումը, որոնցից առաջինը համարվում է բարբարոսությունը, բ) հասարակությունը՝ մարդկային դաշինքի արդյունքն է, ինչը ծնունդ է տվել Օրենքին և Կառավարությանը: Տերոյենցի պնդմամբ քաղաքակրթությունը[3] պատմության ուշ շրջանի (բարբարոսությանը հաջորդող) ծնունդը չէ, հակառակ դեպքում այն հարկավոր չէր լինի մարդուն, ուստի դրա ստեղծումը բնական չէ մարդու համար: Այս մտքից բխում է, որ մարդը «բնականին վրայ գալ նէ՝ կ'աւրէ»: Հետևաբար, քաղաքակրթված մարդը «մարդկային բնութենէ դուրս ընկած» է, այսինքն՝ մարդ չէ: Սակայն եթե առանց քաղաքակրթության մարդը մարդ չէ, ապա ինչպես այն, ինչը մարդ չէ, գտել է մարդ դառնալու ճանապարհը: Առաջացած անլուծելի հակասությունը մտածողը համարում է լուսավորչական պատմափիլիսոփայության նատուրալականության վկայությունը, որի նպատակն է՝ փիլիսոփայությունից (գիտելիքի ոլորտից) և կյանքից Աստծու և կրոնի վտարումը: Վերջիններիս նկատմամբ լուսավորիչների մերժողական վերաբերմունքի նրա քննադատությունը հանգում է հետևյալին: Կրոնի առաջացումը պայմանավորված է հասարակության առկայությամբ: «Հասարակությունը մարդկային դաշինքի արդյունքն է» բանաձևի ընդունման դեպքում հետևում է, որ կրոնը նույնպես մարդու ստեղծագործության արդյունք է, ուստի դեմ է մարդկային բնությանը: Այս հաստատումից առաջացած երկրորդ անլուծելի հակասությունը Տերոյենցը համարում է լուսավորիչների պատմափիլիսոփայության և դրա հենքի՝ Դարվինի էվոլյուցիոն տեսության թերությունների վկայությունը:

---

[2] Հ. Տերոյենց, Նալբանդեանցի մէկ նամակի վրայ, «Երևակ»,1860, № 87, էջ 91:

[3] «Քաղաքակրթություն» հասկացությունը Տերոյենցը ընկալում է իր դարաշրջանում ընդունված նշանակությամբ՝ հասարակության և մարդկայնության որոշակի աստիճան:

Այդ թերությունները պայմանավորված են նրանով, որ լուսավորիչների համար մարդն առաջին հերթին անհատ է՝ իր կենսաբանական և սոցիալական-մշակութային սկզբների միասնության մեջ: Մինչդեռ Տերոյենցը ըմբռնում է մարդուն, որպես ոգու՝ տրանսցենդենտ սկզբի, կրողի, այսինքն՝ որպես անձնավորություն: Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ մարդն ունի հոգևոր փորձի հնարավորություն, այսինքն՝ ընդունակ է կատարելագործվել որպես հոգևոր էակ:

Այս քանանի տեսանկյունից ընդունելի է Տերոյենցի այն պնդումը, որ Աստված ստեղծել է մարդուն որպես սոցիալական էակ: Մարդու արարման հետ մեկտեղ Աստված ստեղծել է հասարակության գոյության համար անհրաժեշտ երկու ամրակներ՝ մեծի ու փոքրի տարբերությունը և արդարությունը: Ավելին, հասարակության մեջ հնարավոր այլ ամրակները վերաբերվում են հիշյալ ամրակներից որևէ մեկին, որոնցից առաջինը կապվում է կառավարության, երկրորդը՝ Օրենքի հետ: Այդ իսկ պատճառով բնական Օրենքը աստվածային կամքով ստեղծված սոցիական ամրակների պահպանությունն է: «Թէ որ ընկերութիւնը մարդոյս էական հանգամանքն է, եւ առանց ասոր մարդ կատարելութեան չհասնիր նէ, ընկերական կեանքի պայմանները սուրբ պահելու համար տրուած օրէնքէն շեղուող օրէնքը՝ որն որ Նալբանդեանցի գրչին տակը բնական օրէնքի անուն ստացել է, տիրապէս խօսելով անբնական օրէնք կ'ըլլայ, եւ բուն բնական օրէնքը կ'ըլլայ տասնաբանեալ պատուիրանքը, որ ուրիշի իրաւունքի մօտենալը եւ ընկերական կամ ընտանեկան պայմաններին դրժելը կարգի չէ, սակայն այս օրէնքները մարդկային կ'անուանէ Նալբանդեանցը»[4]:

Տերոյենցի մեջբերված դատողությունները ուղղված են բնական օրենքի հայ լուսավորիչ-մտածող Մ. Նալբանդյանի մեկնաբանման դեմ: «Բնական օրենք, վսեմական օրենք - գերագույն բոլոր մարդկային օրենքներից, վաղուց արդեն հասկացուցել է աշխարհին, թե մարդիկ հավասար իրավունքներով դուրս եկան արարչագործ Աստծո ձեռքից: Մարդկային օրենքը դրվեցավ, թեպետև շատ անգամ և շատ դիպվածում շեղվելով բնական օրենքից, ի վերա ամենայնի ընտանեկան կամ ընկերական կյանքի պայմանները սուրբ պահելու համար այդ օրից սկսած, դատապարտության տակ ընկավ նա, որ հանդգնելով մոտենալ ուրիշի իրավունքին, կամ ընտանեկան նվիրական պայմաններին»[5]: Նալբանդյանի մեկնաբանմամբ, բնական օրենքով մարդիկ ստեղծված են հավասար իրավունքներով, որոնց պաշտպանության համար անհրաժեշտ է իրավադատության և օրենսդրության ստեղծումը, ինչը, իր հերթին, կնպաստի մի ազգի սոցիալական (քաղաքական) առաջադիմությանը:

---

[4] Հ. Տերոյենց, Նալբանդեանցի մէկ նամակի վրայ, էջ 91:

[5] Մ. Նալբանդյան, Նամակ «Մեղու»-ի խմբագրին. Երկերի լիակատար ժողովածու, վեց հատորով, Ե, 1982, էջ 269:

Տերոյենցը, ընդհակառակը, գտնում է, որ բնական օրենքը՝ Աստծո իշխանության տակ գտնվող մարդու հասարակականության հիմքն է: Ուստի մարդուն սոցիալական օրենք տվողը Աստված է. «Մարդս ի բնէ ընկերական կենդանի ստեղծուած չըլլար նէ՝ իր մէջը կազմակերպեալ ընկերութիւն եւ ընկերական օրէնքներ եւ կանոններ գտնուիլն անհնար էր...»[6]: Մտածողը, ըստ էության, հակադրվում է անհատապաշտության վրա հիմնված լուսավորիչների բնական-իրավական ուսմունքին և հաստատում, որ սոցիալական կեցության անհրաժեշտ կանոնները բացարձակ (աստվածային, հոգևոր-բարոյական) սկիզբ են կրում:

Բնական (աստվածային) օրենքի առաջին դրսևորման՝ կառավարության էությունը նա դիտարկում է կառավարվողների նկատմամբ կառավարիչների դրսևորած հոգատարության և կառավարիչների նկատմամբ կառավարվողների ցուցաբերած հարգանքի ու ենթարկման մեջ: Մինչդեռ կառավարության հիմքը դիտարկում է մարդկանց միջև գոյություն ունեցող հատկությունների մեջ: Այդ նախադրյալից բխեցվում է, որ «... աշխարհի մէջ նախկին կառավարիչ Հայրն է. Նախկին կառավարութիւն՝ հայրութիւնն է »: Ակնհայտ է, որ Տերոյենցը հառում է դարաշրջանի հայ տեսական մտքի մեջ ձևակերպված սոցիալական-փիլիսոփայական աշխարհայացքին, որի էությունը հանգում է հետևյալին: Սոցիալական կյանքի (որպես մարդու սոցիալական էության արտահայտման) սկիզբն ու հիմքը, սոցիալական կազմակերպության նախնական ձևը ընտանիքն է (նահապետական): Նախնիների պաշտամունքի և տոհմային ավանդույթների վրա հիմնված նահապետական ընտանիքը դառնում է ազգի (պետության) առաջացման աղբյուրը: Այդ բանաձևի մեջ, սակայն, առկա են տարբեր շեշտադրումներ: Հայ լուսավորիչները հանգել են այդ բանաձևին, Դարվինի էվոլյուցիոն տեսության տեսանկյունից ուսումնասիրելով պատմական և ազգագրական նյութեր: Մինչդեռ Տերոյենցը այն բխեցրել է Աստվածաշնչից: Այնուամենայնիվ, նշած բանաձևը ուղղված է Ռուսոյի հասարակական դաշինքի տեսության դեմ, իսկ «նահապետական ընտանիք» հասկացությունը փոխառված է Աստվածաշնչից:

Պետության ծնունդը Տերոյենցը պայմանավորում է օրենքի միջոցով կազմակերպված կառավարության առկայությամբ: «Քաղաքական ընկերութեան հիմքը եւ կազմակերպողը եւ ուղղիչը բնական իրաւունքն է, որ բնութեան հեղինակի եւ արարչի իշխանութեան փակն է...»[7]:

Օրենքի հիմքում դնելով «արդարություն» բարոյական օրենքը, նա օրինաչափ է համարում այն հանգամանքը, որ «օրենք», «իրավունք», «արդարություն» հասկացությունները հին հեղինակները օգտագործել են որպես հոմանիշներ: Մտածողը հաստատում է օրենքի աստվածային խորհուրդը, ուստի հերքում է Ռուսոյի դրույթը,

[6] Հ. Տերոյենց, Իշխանութիւններում ծագումը. «Երևակ», 1864, № 12, էջ 90:

[7] Նույնը:

ըստ որի օրենքը. ժողովրդի կողմից ընդունված և հաստատված, հասարակության գոյության պայմանն է: Այս միտքը Տերոյենցը քննարկում է երկու կողմերից:

1. Ժողովրդի կողմից օրենքի հավանությունը ենթադրում է ժողովրդի միավորումը: Այդ միությունը հենց հասարակությունն է, որը գոյություն չունի առանց կառավարչի: Մինչդեռ կառավարիչը չի կարող առանց օրենքի կառավարել: Դրանից հետևում է, որ օրենքը առաջնային է հասարակության նկատմամբ, քանզի ժողովուրդը չի կարող հաստատել այն, ինչը ստեղծվել է իր միավորումից առաջ:

2. Մարդու կողմից ստեղծված օրենքը չի կարող ապահովել նրա «անքոնաբարելի և անփոփոխելի ըլլալը»: Շեշտադրելով մարդու ստեղծած օրենքի ժամանակավորությունը, հարաբերականությունը և ոչ պարտադիր լինելը, մտածողը գտնում է, որ միայն աստվածային օրենքի ազդեցության ներքո մարդու ստեղծած օրենքը ձեռք է բերում բացարձակ չափանիշ, առանց որի այն ոչ մի արժեք չի կարող ունենալ մարդու և հասարակության համար: «... օրէնք բարեկարգեալ պետութիւններում մէջ անսահման ազատութիւնը, կամ օրինաց պահպանութիւնը իւրաքանչիւր անհատներու կամացը ձեռքը, ... անիշխանութեան և խառնակութեան աղբիւր մը ըլլայ»[8]: Այս համատեքստում է հարկավոր ըմբռնել լուսավորիչների կողմից փառաբանված և այսօր մեր կյանքի կանոնները պայմանավորող «ազատություն» և «հավասարություն» հասկացությունների արժեքաբանական և բարոյական տեսանկյունների Տերոյենցի մեկնաբանումը: Ազատությունը նա համարում է մարդու փափագելի գաղափարներից մեկը, որի մեկնաբանումը, սակայն, պայմանավորված է մարդու (ազգի) քաղաքական դրության հետ: Նշելով այդ գաղափարի բարոյական նշանակությունը, նա գրում է, «որ ազատութիւն ուզող մարդը պէտք է որ գլուխը մէկ բանի մը կապած ըլլայ: Մէկ մեծ մը, մէկ օրէնք մը ճանչնալու է իրեն հրամայող, եւ ինքն այն օրինաց հնազանդելու է»[9]:

Մարդու ազատությունը մտածողը սահմանափակում է աստվածային բնույթ ունեցող օրենքով և գտնում, որ մարդը ազատ է գործել այնպես, ինչպես պետք է գործի և ոչ թե անել ցանկալին: Իրական ազատությունը, ըստ էության, համարվում է մարդու ներքին (հոգևոր) հնարավորությունը: «Ազատութիւնը այն է, որ՝ օրէնքին չի պարտաւորած բանը ընելու դրսէն հարկադիրութիւն մը չըլլայ եւ ինչ բան որ ընելը օրինաց դէմ չէ նէ՝ այն բանը ընելու խափանում ըլլայ: Եւ այս Ազատութեան հակառակն է գերութիւն կամ ծառայութիւն, ինչ պատճառով կ՚ըլլայ նէ ըլլայ»[10]: Ստրկությունն ու բռնությունը, այսպիսով, արտաքին, գործողությունների (բացարձակ) ազատության հետևանք է, ինչը անհրաժեշտաբար ենթադրում է ուրիշի ազա-

---

[8] Նույնը, № 16, էջ 113:

[9] Հ. Տերոյենց, Ազատություն, «Երևակ», 1862, № 128, էջ 225:

[10] Հ. Տերոյենց, Մառ առաջին ժամանակի մարդոց կրօնական եւ բարոյական կրթութեանց վրայ, Պոլիս, 1843, էջ 94:

տության սահմանափակումը: Նման իրավիճակը Տերոյենցը հնարավոր է համարում բոլոր այն ժամանակաշրջանների և երկրների համար, որտեղ խախտվում են աստվածային (բացարձակ) պատգամները: Լուսավորական փիլիսոփայությունը, ըստ մտածողի, այդ պատգամները նենգափոխող գաղափարախոսություն է: «Փիլիսոփայութեան այն նոր դրութիւնը հայեցողապէս բոլոր իշխանութիւններուն քանդումն է, որ է ըսել՝ այն իշխանութիւն ազատութեան ալ՝ ինչպէս որ հիմակուան ազատասէրները կը հասկընան, այսինքն՝ անսահման ազատութեան հետամուտ եղողներուն ուզածն այս է...»[11]:

«Հավասարություն» հասկացության Տերոյենցի մեկնաբանումը նույնպես կառուցվում է այդ հասկացության լուսավորիչների մեկնաբանման քննադատության վրա: Նրա կարծիքով, հավասարությունը լուսավորիչները հանգեցրել են ընչական հարաբերություններին (հավասար գույք ունենալու իրավունքին): Դրա մեջ նա տեսնում է արդարության օրենքի խախտման միտում, քանզի ընդունում է այն միտքը, որ մարդկանց Աստված ստեղծել է տարբեր կարողություններով (ֆիզիկական և մտավոր): Այդ իսկ պատճառով նա գտնում է, որ հավասարությունը ներքին (հոգևոր) խորհուրդ է կրում: «... Միայն մարդկութեամբ հաւասար են (մարդիկ - Ռ. Մ.), ըսել է՝ ընկերական կենդանի ըլլալով»: Նշած բանաձևի համեմատ մարդիկ հավասարապես անկարող են ապրել առանց հասարակության և օրենքի: Օրենքի առկայությունն է ապահովում մարդկանց հավասարությունը՝ ընկերական կենդանի լինելը: Մինչդեռ օրենքի բացակայության դեպքում մարդիկ, ազատորեն գործելով, զորավորի կամքն են առաջ քաշում: Հավասարությունը անհետանում է, ինչը ծնունդ է տալիս բարբարոսությանը:

Տերոյենցը իրավամբ նշում է, որ «ազատություն» և «հավասարություն» հասկացությունները լուսավորիչները կիրառում են այնպիսի երևույթների վերաբերմամբ, որոնք խորթ են այդ հասկացությունների նախնական հոգևոր խորհրդին: Վերջինիս նորոգման անհրաժեշտ միջոցը մտածողը տեսնում է կրոնական (նրա տերմինաբանությամբ՝ ճշմարիտ) փիլիսոփայության մեջ, որը «հաւատին հաւատարմութեամբ կը ծառայէ»:

Նշածի լույսի ներքո է հարկավոր քննարկել ժամանակաշրջանի հայ տեսական մտքի համար արդիական՝ կառավարության ձևի և բովանդակության վերաբերյալ Տերոյենցի դատողությունները: Ինչպես արդեն նշվել է, մարդը, Տերոյենցի ընկալմամբ, ի բնե հասարակության համար է ստեղծված: Սակայն անկարգ հասարակության մեջ նա չի կարող ապրել, քանզի նրա պահպանությունը որոշակի կարգ է պահանջում: Կարգի խախտման դեպքում մարդը կորցնում է իր պահպանության ինչպես կենսաբանական, այնպես էլ բարոյական կարողությունները: Հասարակու-

[11] Հ. Տերոյենց. Իշխանութիւններուն ծագումը, № 13, էջ 98:

թյան մեջ ապրող մարդու կարգը օրենքի հիմք հանդիսացող արդարությունն է, որի առաջին սկզբունքները մարդն առել է Աստծուց: Հասարակությունը, այսպիսով, գոյատևում է այն դեպքում միայն, եթե կառավարիչը օրենքի գործադիրն է. կառավարչի գործողությունների արդարությունը նպաստում է կարգի պահպանմանը: Հակառակ դեպքում կառավարությունը վերածվում է բռնակալության, որի բնական հետևանքն է՝ քաղաքակրթության քայքայումը: Մինչդեռ մարդն իր իրավունքը պաշտպանելու նպատակով որոշակի գործողությունների է դիմում՝ լքում է երկիրը, ապստամբում կամ վերածվում է բռնապետի կեղծավոր ստրուկը:

Բռնակալության դեմն առնելու միջոցը, մտածողի կարծիքով, Սահմանադրությունն է, ուր ամփոփված օրենքների կիրառումը խիստ պարտադիր է կառավարչի համար: Ուստի նա գտնում է, որ կառավարության ցանկացած ձև կարող է լինել սահմանադրական (միապետական, ազնվապետական, ժողովրդավարական): Դրա հետ մեկտեղ նա պնդում է, որ «մարդկային օրէնքը միայն գործոց վրայ է, մտքի եւ խորհրդի վրայ օրէնք ոչ դրած էն մարդիկ, եւ ոչ ալ կրնան դնել: Աստուած միայն է խորհրդոց քննիչ, մինակ անիկայ է սրտագէտ, մարդուն սրտին գաղտնիքը գիտցող, ուստի մինակ անիկայ խորհրդոց վրայ օրէնք դնելով գործոց վրայ դրուած օրէնքը հաստատուն կ'ընէ, վասն զի չարութեան խորհուրդները սրտէն կ'ելլեն եւ անոնց արդիւնքն եղած գործերը արգիլելու համար անոնց աղբիւրը եղող սրտին վրայ տիրելու է, եւ այս տիրապետութիւնը Աստուծմէ զատ մէկի մըն ալ բանը չէ»[12]:

Մեջբերված դատողություններից հնարավոր է բխեցնել, որ, ըստ մտածողի, օրենքի և բարոյականի հիմքը քրիստոնեությունն է:

Տերոյենցը, ըստ էության, վերաիմաստավորում է լուսավորիչների «իրավական պետություն» և «քաղաքացիական հասարակություն» գաղափարները՝ հաստատելով այն իրողությունը, որ անհատապաշտության վրա հիմնված այդ գաղափարների միջոցով անհնարին է իրագործել իրավունքի և հասարակության իրական (աստվածային) խորհուրդը:

[12] Տերոյենց, Դաստիարակութիւն, «Երևակ», 1860, № 88, էջ 114:

*ԼԻԼԻԹ ՄԵՑՐԱՆՅԱՆ*

# ԱՍՏՎԱԾԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՍՏՎԱԾԵՐԳՈՒԹՅՈՒՆ

*Տառապանքով աստվածացած մա՞րդն ես դուն,*
*Թե ոչ՝ Աստված՝ գթությունով մարդացած.*
*Քու ձեռդ ձեռն է մարդուն,*
*Կխորանա քու խորհուրդին մեջ Աստված...*

Վ. Թեքեյան

Աստվածերգությունը, Վահան Թեքեյանի ստեղծագործության կարևոր թեմաներից մեկը լինելով հանդերձ, շատ՝ քիչ է ուսումնասիրվել: Եղած գնահատականներում կա երկու տարամետ ընկալում. միստիկա կամ կատարելության ձգտում, արդարության այլաբանական մարմնավորում:

Լ. Ասմարյանը Թեքեյանի աստվածերգության հիմքում կատարելության ձըգտումն է տեսնում դրան տալով միանգամայն մարքսիստական բացատրություն, ըստ որի կենսական հարցերի պատասխանը կյանքում չգտնելով՝ բանաստեղծը ո-րոնել է կրոնի մեջ: «Աստված այլաբանորեն մարմնավորում է արդարությունը, որը փաստորեն կյանքում գոյություն չունի.- գրում է նա և շարունակում,- ճիշտ է, սկըզբում էլ միստիկական պահերը բանաստեղծի ստեղծագործության մեջ եղել են, բայց քիչ: Եղեռնի ազդեցությամբ, դրան հետևող տարագրի անորոշ վիճակում, բանաստեղծը մի կողմից հայրենասիրական սրտառուչ խոսքի է դիմում, մյուս կողմից ուզում է ելք փնտրել միստիկայի մեջ»[1]:

Իսկ ըստ Ծ. Նարդունու՝ Թեքեյանին միստիկ են անվանում «Տեր» բառի պատճառով, որը շատ է գործածում: «Թեքեյանի «Տերը» ինքն է, և ան ինքզինք կկանչե, ան կփորձե ճշտել դեմքը մեծ անհատին, որ պիտի հաղթե: Ու կմնա անհատապաշտ բանաստեղծ մը»[2]: Վահե Վահյանի որակմամբ, Թեքեյանը հեռու է Աստծո միստիկ ընկալումից. նրա համար «Աստվածը իմացական ու բարոյական կատարե-

---

[1] Լ. Ասմարյան, Վ. Թեքեյան. կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 1971 թ., էջ 148:

[2] «Հոբելյան Վ. Թեքեյանի 40-ամյա գրական գործունեության», Փարիզ, 1933 թ., էջ 62:

լության գերագույն ճղացումն է մարդ էակին… աստվածացումը, թևավորումն է մա-
քուր այն էանյութին, որ կդառնա համապարփակ սեր և արարիչ մղում»[3]:

Բերված կարծիքները ծանրացնում են Աստծո այլաբանական ընկալման նժարը՝ «կատարելության գերագույն ճղացում», արդարության այլաբանական մարմնավորում, մեծ անհատ և այլն…

Թեքեյանն իր բոլոր գրքերում, իրոք, շատ ու շատ սոնետների եթե ոչ նախավերջին, ապա վերջին եռատողում դիմում է Տիրոջը, և ի հակադրություն Օ. Նարդունու բնորոշման՝ այդ Տերը ոչ թե Թեքեյանն ինքն է կամ ուժեղ անհատը, այլ կենդանի, մշտական, անփոփոխ Աստված: Մ. Հ. Անանիկյանը գրում է. «Անիկա իր հավատն է՝ խարսխած Աստուծո մը վրա, որ իրական է և որ կապրի իր ստեղծած աշխարհին մեջ: Այդ Աստվածը հաճախ բանաստեղծը հուսախաբության կմատնե իր սիրույն և նախախնամության երևութական զանցառություններով, իր կարծեցյալ դաժան անտարբերությամբ: Բայց բանաստեղծը զայն չի լքեր բնավ: Ընդհակառակը, Աստված կմնա իր մարդկային և հայրենասիրական իղձերուն գերագույն գործադրիչը»[4]:

Խոսելով «Սեր» ժողովածուի մասին, որն անուրանալիորեն Թեքեյանի բանաստեղծական հասունության վավերաթուղթն է, Ա. Չոպանյանը գրում է. «…քերթողը կնվացերգե իր հոգեկան խոսակցությունը աշխարհի խորհուրդներուն և Աստուծո ստվերին հետ, կզգաս, որ հոն է բուն մարզը այս բանաստեղծին, ինչպես որ ան եղավ միակ մարզը Պոոլերի, Էտկար Փոի և Վերլենի պես անզուգական բանաստեղծներու»[5]: Նույն գրադատի կարծիքով՝ եթե Տերյանը հոգեկան խռովքի նեցուկը ուզեց գտնել «ընկերական հեղափոխության կարմիր տեսիլին մեջ», Թեքեյանը «այդ սփոփն ու նեցուկը (իր այս հատորին մեջ-«Սեր») կթվի փնտրել Աստծո հինավուրց գաղափարին մեջ»[6]:

Եվ այնուամենայնիվ, ի՞նչ է Թեքեյանի համար Աստված: Նրա ողջ պոեզիան հեղեղված է աստվածաշնչյան սիմվոլներով՝ այլազան բանաստեղծական պատկերներում և զգացողություններում և՛ սիրերգության, և՛ մարդերգության, և՛ հայերգության մեջ. հաց և գինի՝ քրիստոնեական լիցքով, կնդրուկ ու բուրվառ, սրբաքույր մատուռ, համատարած խնկարկում, մանանա, լուսեղեն սյուն, ժայռի տակ՝ շատըրվան, մորենի, հարության փող, հարության օր, «անապատին մեջ ինկած ազնիվ հունտ», հոգեբուխ աղոթք, պատարագ ու լուսարար, օրհնված սափոր, բարության գինի, Լուսավորչի կանթեղ, ադամամութ, մեղքի բաժակ, օծյալ վեմ, ուխտի տապանակ և այլն, և այլն: «Հրաշալի Հարություն» ժողովածուի խորագիրը այս իմաստով շատ բնորոշ է. գիրքը «Փա՜ռք հրաշալի Հարության» բնաբանով բացելով՝ վերջաբան-բանալի էլ է տալիս մեզ բանաստեղծը. «…անունը՝ «Հրաշալի Հարություն» գրքին կրոնական իմաստով մը առած է. «Հրաշալին անշուշտ «հրաշքով» կնշանակե, և

---

[3] Վահե Վահյան, Վ. Թ. բանաստեղծը, Թեքեյանի «Հատընտիրի» առաջաբանից, Պեյրութ, 1978 թ., էջ 25:

[4] «Հոբելյան Վ. Թեքեյանի 40-ամյա գրական գործունեության», Փարիզ, 1933 թ., էջ 60:

[5] «Ապագա», 1 հուլիս, 1933 թ.:

[6] Նույն տեղում:

այս Հարությունը «Հարությունն» է անցյալին, ամբողջ հոգիի մը անցյալին, և միայն բանաստեղծությունն է, որ այս հրաշքը կարելի կընե»:

Այս և մյուս սիմվոլները Թեքեյանի բանաստեղծական պատկերներում հայտնըվում են իբրև մարդկային ամենատարբեր ապրումներ, խոհեր, զգացողություններ արտահայտելու ազնիվ առաքելությամբ և շատ հաճախ այնպիսի քերթվածներում, որոնք հոգևոր բովանդակություն բնավ չունեն: Բանաստեղծությունը ենթագիտակցական ոլորտի ծնունդ է, և եթե մարդը աստվածաշնչյան հիշյալ սիմվոլների բառազանձն ունի իբրև արարչանյութ, ուրեմն դրանք հյուսված են իր էությանը, սերտաճած, նույնացած դրա հետ: Նա այդպես է մտածում, զգում, այլ կերպ չի կարող: Եվ ո՞րն է ակունքը:

1913-ին գրված «Ս. Կարապետ Կեսարիո» քերթվածում հայտնվում են դեպի վանք տանող «ծանր, դժվար ճանապարհի» պատկերը, ձյունը... «բլուր բլրի ետևե», սարահարթը, լեռը, խորդուբորդ վերելքը («Կառքեն իջած կքալեմ: Ձիերն հոգնած կհևան», «Ամայության վրա ձյունին կիջնե խորհուրդն իրիկվան») ևահա՝ «Վանքն է հանկարծ...» և նախնիների ստվերներն իր հոգու հայացքի դեմ.

Իմ մեջս դուք եք հիմա, և բազմություն մ'եմ այսօր,
Որ հավաքված դարերեն՝ շղթայաշատ ու հզոր,
Կմոտենա քայլ առ քայլ, առանձին ինքը թափոր,
Նույն տեղերուն, նույն սուրբին և նույն Աստուծույն ուխտավոր...

Ինծի՛ համար այժմ Անոնք, զիս իրենց մեջը առած,
Կթախանձեն, կաղոթեն Սուրբին դըրանը դիմաց,
Որ սատափյա կապտորակ ճաճանչներով ողողված
Իր փեղկերուն ընդմեջեն կտանի՛ միտքս առ Աստված...:

Թեքեյանը կեսարացիների զավակ էր՝ իր արյան թավալումով և ոսկրածուծի բաղադրությամբ: 1925 թվականին տարիների մացառուտներում մոլորված մի միտք, մի երազ, վաղեմի մի իղձ պիտի այցի գա, «համառորեն» բանաստեղծություն պիտի դառնա և հասնի մեզ «Մանկության իղձ մը» խորագրով: «Ինչպե՞ս այս իղձն էր ծներ,- կուզեի սուրբ ըլլալ ես...»: Հետո պիտի գա հիշողությունը այն միակ մեղքի, որ մանուկ Թեքեյանի կարծիքով իրեն պիտի խանգարեր «սրբոց շարքին մեջ դասված»՝ Արքայության մեջ Աստծուն տեսնել, ու դասի պահին ցավից, վախից կուչ եկած՝ լալիս է նա՝ ափերով դեմքը ծածկած: Ապա հայտնվում է հացի տոպրակը ուսից կախ կույր մուրացիկի տեսիլքը, և ինքը, որ շնչասպառ վազում է նրա ետևից («գացի շիտակ իր վրա, քաշեցի ձեռքն ու պագի»):

Կաղոթեի հորս հետ ամեն առտու ու գիշեր,
Կխորհեի ամեն տեղ զալիք կյանքիս, մահվանս ալ,
Տղա էի, կուզեի ես այն ատեն սուրբ ըլլալ...

Թեքեյանը կեսարացիների զավակ էր՝ իր հավատով (թերևս պիտի գրեի՝ երբեմնի, կորուսյալ, վերագտնված... Ո՞րն է բառը, որ կարող է միացնել այս որոշիչների իմաստները, ասել է՝ կարող է վիպել մարդկային Հավատի պատմությունը), իր ջերմեռանդությամբ, իր աստվածավախությամբ, այո, հենց աստվածավախությամբ նախ և առաջ: Աստվածավախությունից մինչև աստվածուրացություն մի քայլ է. ցանկացած ծայրահեղ հոգեվիճակ զարմանալի փոխակերպումով հեշտությամբ կարող է վերածվել իր հակադիր վիճակին, ինչպես որ սրտանց ծիծաղը կարող է լացի փոխվել, ինչպես որ Պողոսը՝ քրիստոնյաների երբեմնի մոլեգին հալածիչը, ինքն է շուտով դառնում բոլոր ժամանակների ամենաջերմեռանդ քրիստոնյաներից մեկը:

Թեքեյանի պարագան շատ բնական է. մանուկ օրերի մեծագույն ցնցումը Տիգրան եղբոր մահն էր 1886-ին, որի բանաստեղծական փղձկումը «Առաջին մահը» արձակ քերթվածն է: Թեքեյանն ինքը վկայում է, որ այս դեպքը շատ է ցնցել իրեն՝ առաջին հարվածը հասցնելով Աստծո հանդեպ իր հավատին: Հիշյալ գործը Թեքեյանը ժամանակին ներկայացրել է Եղիա Տեմիրճիպաշյանի դատին, որն էլ ցնցվել է իր հերթին, սակայն բոլորովին այլ բանից. «Գիրդ սարսափ կազդե ինծի, տղա՛: Ուրկէ՞ առիր այդչափ տխրություն: Երազիդ մեջ Եղիային գերեզմա՞նը համբուրեցիր: Հայրդ Մեփիստոֆե՞լն է: Քանի՞ տարու ես... Գիտե՞ս, թե այդ զգացումը մինչև ուր կտանի քեզ: Մինչև զզվանք, որուն հանդեպ ահա ես իմ բոլոր ուժերս ժողոված կը մաքառիմ տարիներե ի վեր... Պահե՛ վերջին արցունքդ, Վահա՛ն: Ան կիյնա ոչ այն թեթևությամբ, որով ինկած է վաղամեռիկ ընկերդ[7] Տիգրան, այլ կապարի ծանրությամբ և իր ներքև կփշրե սիրտդ»[8]: Ահա այստեղ՝ վերջին արցունքի հետ կապված՝ Տեմիրճիպաշյանը մի նոր Եղիա մարգարե է դառնում,- ավաղ: Վերջին արցունքը պահած և ի վերջո վերջին արցունքի տակ փշրված Թեքեյանի սիրտը աստվածամերձ-աստվածամարտ Թրթռումի փոխվեց հավետ: Նամակագիրը (ի դեպ Տեմիրճիպաշյանի պատասխան-նամակը հրո ճարակ է դարձել Թեքեյանի անձնական շատ ուրիշ թղթերի հետ Պոլսի հերթական հրդեհներից մեկի ժամանակ: Թեքեյանը, սակայն, բովանդակությունը հիշում է գրեթե բառացի) այնուհետև խորհուրդ է տալիս. «Վաղը առտու, Վահա՛ն, եկեղեցի գնա և շապիկ հագիր: Եվ այսուհետև արտասուքդ նվիրե երբեմն մեռելոց, բայց մտածումդ միշտ ողջերուն: Եվ ալ մի գրեր ինծի: Հրանդին[9] եղիր և մնացիր միշտ աշակերտ»[10]: Նրա ազդեցությունը ավելի առողջարար է համարում Տեմիրճիպաշյանը Թեքեյանի համար:

---

[7] Տեմիրճիպաշյանը կարծում է, թե վաղամեռիկ Տիգրանը Թեքեյանի ընկերն է եղել, մինչդեռ իրականում «Առաջին մահը» արձակ քերթվածը պատանի Թեքեյանը գրել է իր Տիգրան եղբոր մահվան ներազդումով:

[8] Ա. Ալպոյաճյան, Վ. Թեքեյան (իբր հանրային մարդ և հրապարակագիր), 1948–49 թթ., Գահիրե, էջ 106-107, ԳԱԹ, Վ. Թեքեյանի ֆոնդ:

[9] Խոսքը Մելքոն Կյուրճյանի մասին է, որին աշակերտել է Թեքեյանը Կեդրոնականում ուսանելու տարիներին:

[10] Ա. Ալպոյաճյան, էջ 106-107:

Ութամյա Վահանը եղբոր հոգեվարքի գիշերը աղոթքով է անցկացնում, հոգեցունց աղոթքով. «Մտքիս ամբողջ պրկումներովը սրտիս ու հոգիիս անդունդները քրքրեցի՝ ջանալով գտնել Անոր գութը շարժող ամենեն աղվոր, ամենեն հաճելի խոսք մը, բառ մը»: Բայց Տիգրանը մահանում է, և «ավելի խոր, քան այն փոսը, ուր հանգչիլ գացիր դուն, ո՛վ Տիգրան, անդունդ մը բացվեցավ իմ պզտիկ հոգիիս առջև, ուր տարակույսի չվաններուն վրայեն ցնորեցուցիչ արագությամբ մը սահեցավ, կորսվեցա՛վ իմ ամբողջ հավատքս»: Ի հետևանք և ի լրումն՝ 1906-ին գրում է «Կասկածը» բանաստեղծությունը՝ «Հավատքս հոն ձգեցի բզիկ-բզիկ, հեռավոր...»: Երբ իրեն լքում է նաև Հույսը...

Ու օր մըն ալ համրաքայլ եկավ Կասկածն ու կեցավ...
Իր կըտուցով կեռածայր, մագիլներով բզկտիչ
Ան տիեզերքը ամբողջ քանդեց, փշրեց քիչ առ քիչ...

Ինչպես ասում են՝ մնացյալը՝ լռություն:

Ահա այս դեպքն է եղել Թեքեյանի հավատի փորձաքարը, և դրանից հետո տարիներ շարունակ «մտքի ամբողջ պրկումներով» փորձել է վանել «Անոր» կերպարը, որ ներկա էր իր մեջ անընդհատ: Նա, ում հետ կռիվ տվեց՝ ազգային ցավին ի տես, Նա, ում իր անձնական դրամայի միակ մեղավորը կարծեց, պիտի հայտնվեր անվերջ, պիտի երևար ակամա խորանթեղ կայծկլտոցով, սրտում խեղդվելով հանդերձ՝ հասներ լեզվի ծայրին ու դառնար Տե՛ր, Տե՛ր, Տե՛ր... Կրկնում է բանաստեղծը աստվածուրացության ամենահետին ու աստվածահայտնության ամենափառահեղ պահերին: Տե՛ր: Թերևս ինքն էլ Մանդելշտամի նման ասել է մի օր. «Господи, сказал я по ошибке, сам того не думая сказать»[11]:

Պայքար է եղել, ինքնամարտություն՝ արյունոտ ու հյուծիչ, հավատը շողացել է ու խույս տվել, ո՛չ կարողացել է ուրանալ, և ո՛չ էլ հավատալ մինչև վերջ: Այս հոգեմարտի բանաստեղծական վկայությունն է «Թրթռում» քերթվածը.

Թերևս ալ չե՛ս պահանջեր, ով Լույս անհուն և անհաս,
Որ խաղաղիմ՝ գտնելով կամ մերժելով Քեզ իսպառ.
Կնախընտրես, որ ըլլա միշտ որոնում մը ներկաս
Եվ ժամանումս Քեզի ըլլա շլացք մը անճառ...

Սակայն ի՛նչպես, Աստված իմ, տըվիր շընորհդ ոմանց,
Ամեն վայրկյան, ամեն տեղ Քեզ ըզգալու և ինձի՝
Խեղակորույս մագնիսին միայն թրթռո՛ւմը անանց...(1927 թ.)

---

[11] **Осип Мандельштам**, Стихотворения, проза, записные книжки, из книги "Камень", Ереван, 1989 г., ст. 163.

Այս պարագայում թերևս այնքան էլ կարևոր չէ, թե երբ է եղել Թեքեյանի «դարձը», քանի որ Աստված միշտ ներկա է եղել իր մեջ. անխղելի, անխզելի ներկայություն: Կարևոր չէ, իհարկե, նաև այն տեսանկյունից, որ Թեքեյանի բոլոր գրքերը հյուսված են աստվածամարտության և հայտնության, կասկածի ու հույսի քերթվածներով, ներկայությամբ. Նրա պոեզիայի զգալի մասը «ի խորոց սրտի խոսք ընդ Աստծո» է: Եվ չկա ոչ մի օրինաչափություն, որ մեզ իրավունք տա ասելու. ահա այս թվականից դարձի է եկել կամ այս օրից նորից մինչև աքաղաղի կանչելը երեք անգամ հրաժարվել է ուրանալ:

Ի դեպ մագնիսի սիմվոլը Թեքեյանի պոեզիայում պիտի հայտնվի նաև մեկ տարի անց՝ 1928-ին, «Եռանկյունը» հնչյակում, որը նրա կենսափիլիսոփայության բանաստեղծական խտացումն է. մարդուց՝ միկրոտիեզերքից են ելնում ու դարձյալ մարդում են վերադառնում աշխարհի բոլոր ճամփաները ու տարամետ գաղափարները: Դեպի բնություն, դեպի Արարիչը, բայց, միևնույն է, մարդը մնում է մարդ՝ իր մարդկային ցավով, կարծրացած, ճաքած անոթի խորքում տվայտող մեղսական ու լուսամետ իր հոգով.

Երբեմն մարդն է, որ գիս իբրև մագնիս կքաշե
Ու բնությունը երբեմն և լոկ երբեմն ալ Աստված...
Մեկեն զզված, մյուսեն խոնջ և երրորդեն մերժված՝
Այս եռանկյան մեջ անվերջ կվազվզեմ ես, բաշե՜...

Ու կմնամ նորեն մոտն ամենեն շատ մարդ անկյան,
Ո՛չ կմտնեմ անոր մեջ, կհարմարիմ իր չափին,.
Եվ կկարծեմ, թե անկե կելլեն, անոր մը հանգին
Մյուս անկյուններն հորինող ուղիղ գիծերն անսահման:

Թեքեյանի աստվածերգությանը բնորոշ է իր իսկ որակումով գլխատառով Թրթռումը հենց: 1929-ին Ա. Տատրյանը նամակով Թեքեյանին հայտնում է վանական դառնալու իր որոշումը: Բանաստեղծը խորհուրդ չի տալիս[12] ավելացնելով. «Տես, թե այս խորհուրդներես ինչ կրնաս առնել: Սա՛ ալ հայտնեմ, որ անոնք կուզան մեկե մը, որ հավատքին պետքն ու քաղցրությունը կզգա, ուրիշներու մոտ զայն խորապես կհարգե, բայց որ իր հաշվույն, զայն կանուխ կորսնցնելե ետք, քանի մը տարի առաջ հրճվանքով զգաց անոր իրեն մոտենալը, բայց ան կամ ինք մնացին ճամբան, ու հիմա գրեթե հույս չունի, որ զայն ամբողջովին պիտի գրկե իր մեջը...»[13]: Ի դեպ առիթն օգտագործելով հիշենք, որ Թեքեյանը, շատ բարձր գնահատելով Ստ-

[12] Թեքեյանը Տատրյանին խորհուրդ չի տալիս վանական դառնալ, բայց նա ոչ թե վանականության է դեմ առհասարակ, այլ Տատրյանի՝ վանական դառնալուն: Թեքեյանը դեմ է եղել կուսակրոնության վերացմանը:

[13] Վ. Թեքեյան. Նամականի, խմբագրումը և ծանոթագրությունները՝ Ավետիս Գ. Սանջյանի, հրատարակություն Թեքեյան մշակութային միության, 1983 թ., էջ 306:

յանից, այնուամենայնիվ ներքին «վեճ» է ունեցել Նրա հետ՝ մեծ երգիծաբանի անհավատ լինելու պատճառով:

Պարզամտություն կլինի կարծելը, թե իր արձակ «Աղոթքը» Թեքեյանը գրել է աստվածահայտնության հազվագյուտ ներշնչանքի պահին, վայրկյանի ազդեցության տակ, քանի որ, ինչպես ինքն է վկայում, «Աշխարհիս վրա կան մարդիկ, որ կհավատան, մարդիկ կան, որ չեն հավատար: Ես անոնցմե եմ, որ կհավատան: Հիմա՞ միայն կհավատամ և մի՞թե այսօր սկսա աղոթել: Կրնամ ըսել, որ կյանքիս մեջ օր մը չէ եղած, որ չաղոթեմ»[14]:

Աղոթքը ևս ներքնազոր կարողություն է, աղոթքի պահանջը ինքնին շատ բան է վկայում: 1924-ին գրված չափածո «Աղոթքում» բանաստեղծը աղոթքի շնորհ է աղերսում Տիրոջից.

Միմիայն դուն, իմ անցավոր, ախտավոր
Սերերու տեղ ինձ կրնաս
Բարձունքներու ներշնչել սերը հզոր
Եվ ցողել գութդ վըրաս...

Բայց այս շընորհն, այս բախտը իմն է արդեն,
Ինձ կթվի, Աստված իմ,
Որ աղոթքիս լուսաստիճան սանդուղեն
Համբորեն քեզ կմատչիմ...

«Հրաշալի Հարություն» ժողովածուում տեղ գտած «Այսչափ եսքը» քերթվածում Թեքեյանը փառաբանում է Արարչին՝ իրեն «այսչափ եսքը» մաքուր սեր շնորհելու համար և երազում աստվածապարզև նորահայտ սիրո մեջ «վվալ իմ հոգիիս ժանգը հին»:

Թեքեյանական աստվածերգության մեջ, սակայն, շատ հաճախ բանաստեղծական խոհը հատում է անձնականության սահմանը.

Շնորհ ու վայելք ես երբեք ունեցածես ավելի
Չխնդրեցի ինձ համար և միայն Քեզ դիմեցի
Խորութենեն իմ ցավիս, այլոց ցավին համար մերթ...(«Որոնում», 1925 թ.)

Նրա աստվածամարտության մի եզրը, իրոք, մարդ արարածի կամ ազգային ճակատագրի սևն է, իսկ մյուսը՝ անուրանալիորեն իր «խոշոր ցավը», որ «Հեծեծանքի» է փոխվում.

Ինձմե ի զատ ի՞նչ օրհնյալ, ի՞նչ բախտավոր են մարդիկ.

[14] «Մամուլի մեջ տպված և անտիպ երկեր և նամակներ Վ. Թեքեյանեն», հավաքեց և ծանոթագրեց դոկտ. Վաչե Ղազարյան, Պեյրութ, 1987 թ., էջ 60:

Հետին աղքատն ալ երբեմն իր պզտիկ զանձն է գտած,
Զիս անոր և ամենուն նման ըրե՛, ով Աստված...

Փոքրուց սիրազուրկ այս մարդը ցմահ սիրազուրկ մնալու արմատացած համոզմունք է ունեցել՝ ինչ-որ տեղ էլ հենց ինքն իրեն դատապարտելով մենակության: Մենասիրությունը, ավելի ճիշտ՝ մարդախուսությունը տարիների հետ պիտի բնավորություն դառնար, դառնար իր երկրորդ եսը: Իր «անպատեհ ծնունդի»[15], անսեր-անօրրով մանկության համար Թեքեյանն ըմբոստացել է «բախտին դեմ դրուժան»: Տարբեր տարիների գրված բանաստեղծություններում բողոքը պարբերաբար ուղղվում է Աստծո դեմ՝ թե «զիս զրկեր էր Աստված», «ոչ ոք ինձ չափ կրեց անգթությունը երկնի» ...

Բայց սիրտս հաճախ, շատ հաճախ միմիայն ցավ մ'է ինծի,
Իր պատճառեն պարպված՝
Ցավ տարածուն, վաղնջական հարված‌ի,
Զոր տված է ինձ Աստված («Սիրտս»):

Նրան մնում է «հետին մուրացկանի պես» աշխարհից խնդրել սիրո իր օրաբաժինը և «չգտած ոչ մեկ տեղ՝ պիտի գնամ աղբյուսին՝ Ավելցուկներ ժողվելու անոթությանս դարման»: Եվ նորից ու նորից՝ ցավագնորեն անհույս համոզմունքը. «Ողբերգությունն այս անհուն պիտի տևե ա՛լ այսպես»:

Աստվածամարտությունը ձուլվում է ինքնամարտությանը՝ ավելի անողոք և նույնքան անհույս՝ մարդու մեղսականության համոզմունքով.

Իմ արյունիս մեջ սիրո շիթ մը դրած էր Աստված,
Ես զայն տիղմով շաղեցի ու կչանամ ալ իզուր
Պղծութենեն անջատել իր իսկությունը մաքուր («Սեր»):

«Թշվառական, ի՞նչ ըրիր... ըսե, երկինքդ ի՞նչ ըրիր»,-գրում է 1924-ին «Երկինք կորուսյալ» բանաստեղծության մեջ:

Իր սերը մեղքի բաժակի հատակին է գտնում նա, ավաղ, ու երբ շուրջը բարձրանում է մեղքերի պատը, սիրազուրկ «խեղճ մարդը» ծաղրում է սիրո աստվածային

[15] Մի շատ տխուր պատմություն է դա, արկածով, «դիպվածով ծնված» տղայի պատմությունը, որը դժբախտություն էր ունեցել 40-ամյա մոր հինգերորդ զավակը լինելու: Կեսարացիների հնոց ադաթով չափահաս զավակներ ունեցող կնոջ համար ամոթ էր զավակ ունենալը, իսկ այդ անցանկալի էակին սիրելն էլ ամոթների ամոթն էր, և «հետևաբար մայրերը վերապահ կըլլային երիտասարդ մոր մը խանդաղատանքը ցույց չտալով իրենց պզտիկին հանդեպ»,- գրում է Թ.-ի կենսագիրը՝ Ա. Ալպոյաճյանը, և ավելացնում, որ դա եղել է Թեքեյանի «կյանքին առաջին դառնությունը, որ գուցե մինչև վերջ իր ազդեցությունը ունեցած է» (թիվ 8 ծանոթագրություն, էջ 2):

բնությունը ... եթե Աստծո հավիտյանը նա նույնքան է ապրում, որքան հավիտյանները սիրո և

Եթե Աստված այնքան չար, այնքան վայրագ, վատ է, որ
Պահ մը առաջ զգվանքին համար ունի լոկ քրքիջ,
Եթե անոր ալ անցած տեղն է ավեր ու արյուն,
Այո՛, այո՛, սերն ունի աստվածային բնություն...:

Եվ սրանից մինչև աստվածուրացություն մի քայլ կա միայն՝ «գիտեմ գաղտնիք մ'ահավոր.- այս աստվածն է սուտ աստված», որ խաբում է մարդուն, և որին խաբում է մարդը, ու այս հավիտենական զույգը՝ «դիմակաթափ, ծաղրադեմ» պիտի ավարտվի երկուստեք մահով և նշանավորվի մարդկային սրտից աքսորված «թուն Աստծո» վերադարձով և նոր մարդու ծնունդով:

Լ. Ասմարյանը ճիշտ է նկատել. Թեքեյանի աստվածերգությունը Եղեռնից հետո նոր ուժով է բորբոքվում աստվածամարտության կրակով: Բանաստեղծը 1916-ին իրար ետևից գրում է «Խնդանք, եղբայրներ», «Պիտի չսենք Աստուծո», «Աղամամութ» քերթվածները, որոնք մերթ Աստծո «ժանտ երեսին» խնդալու կոչ են, մերթ Աստծուց դժոխքը ժառանգելու խնդրանք («չէ՞ որ զայն լավ կճանչընանք,- հեգնում է բանաստեղծը և ավելացնում,- և թուրքերուն հատկացուր արքայությունդ անբավ) ու մերթ էլ սրտակեղեք ավաղում.

Այնքան երազ, այնքան ճիգ, այնքան տաժանք ու տանջանք
Զու՞ր են եղեր, այնպես չէ՞, ով ահավոր դուն Աստված,
Որուն սակայն մենք այնքան, այնքան էինք հուսացած...

Այս տողերի հեղինակը 1918-ին կգրի «Պիտի մոռնանքը» Երկիր վերադառնալու և նրա սրտի զարկը լսելու հույսով, երբ կսկիծի հետ հայրողիք մոռանան նաև իրենց հոգիներն այրող Անելությունը, «մարդոց չարիքը», «աստծո չարիքը», կարողանան «նորեն երգել, սիրել անարգել» ու առանց չհավատալով, չհամարձակվելով հավատալ՝ կաղերսի.

Սակայն, ո՛վ Տեր, մոտեցուր այն առավոտն, որ նորեն
Պիտի կրնանք քեզ օրհնել հոգիներուն մեր խորեն...

Թեքեյանական աղոթքների շարքում առանձնանում է «Դառն աղոթքը», որով Աստծուց ազգապահ ուժ ու կորով է խնդրում անկարող ոխ ու վրեժի փոխարեն: Վերընձյուղման հավատով է գրված նաև «Արդյոք ծոռ՞ն է» քերթվածը:

Ինչպես ինքն է վկայում՝ ողջ կյանքի ընթացքում չի դադարել «աղոթել». կապը միշտ եղել է՝ հոգեբուխ աղոթքի, աստվածամերժ բողոքի, աստվածամարտ ցասումի կամ ներման աղերսի տեսքով:

Թեքեյանական աստվածերգության մեջ կան Նարեկացու ոգով ու շնչով գրված բանաստեղծություններ՝ մեղսամաքրման ներթաքույց հույսով, աստվածամետ երկյուղած վերմղումներով («Դուն այս հույսն ինձ կներես հիմա, Տե՛ր)...

Եվ կթվի ինձ արդեն, թե գուբն ուրիշ ոչինչ էր,
Բայց թե մարմինս խավար, և թե հոգիս այժմ ահա,
Իր բանտն իր հետ քաշելով, առ Քեզ տակա՛վ կամբառնա...
(«Գուբը», 1924):

1925 թվագրված «Կզգամ» քերթվածում բանաստեղծական մտահայտնությամբ տեսնում է Աստծո ձեռքը՝ իրեն երկարած, և իր հին հավատի հրով ողողվելու տենչը՝ դարձյալ հազիվ պլպլուն հույսով ակաղձուն («թե լքված չե՛մ վերջապես, թե սերդ զիս կհոգա») ավելի որոշակի է դառնում:

«Ո՛վ ծնող արևներուն բյուրավոր», «ո՛վ դիտող խորատես», «Դուն՝ արև պայծառ», «ո՛վ Լույս անհուն և անհաս», «ո՛վ Վարդապետ, հավերժական Լիություն». ահա Թեքեյանի «խոսք ընդ Աստծոյի» կոչականները:

Դարձյալ 1924-ին գրված «Երբ կխորհիմ»-ում չգոյության սարսափից և ոչնչության վիհից բանաստեղծին հասնում է նույն տարտամ հույսը՝ երկնաքույր խաղաղությամբ պարուրելով սիրտը.

- Իյնալու տեղ կելլեմ թերևս, ու իր բեռեն ազատ հոգիս՝
Գիրկեդ մեկնած, թերևս, ո՛վ Տեր, պիտի գրկիդ մեջ ընդունիս...

Աստվածաշնչյան նահապետների պես Թեքեյանն էլ մի օր պիտի ասի՝ «Ահա ե՛ս, ով Տեր», ու նորից նույն պատկերը՝ խավարչուտ վիհը, «դողացող, խպնող ճիգը զուր», և նորից ու նորից Թրթռումը՝ մի քիչ թաքնված.

Նայե՛ մարմինիս՝ այրվելու մոտ ծառ,
Նայե՛ հոգիիս՝ մարելու մոտ կայծ,
Եվ ինձի օգնե հիմա, ով Աստված,
Կամ զիս սուզելով անըսպառ խավար
Քաոսին մեջ լուռ քո տիեզերքին,
Կամ հասցնելո՛վ զիս լույսիդ վճիտ:

«Որոնում» հնչյակը նույնպես «շատ աղոտ մի լույսի», շատ աղոտ մի հույսի չափածո պատմությունն է՝ «Գիտեմ, թե կաս Դուն, ով Տեր և ինձ երբեմն երևցար Եվ որոնումս հիմա քո ապացույցդ է արդեն» տողով կնքված, բայց զարմանալի մի հանգուցալուծումով. ո՞րն է պատճառն այսօր Աստծուն որոնելու... Բանաստեղծի պատասխանը՝ «Գուցե խոցե՛ն պիտի զիս վաղը քու չար ոգիներդ»: Գուցե սա դարձյալ թեքեյանական այն մտքի այլագոյացումն է, ըստ որի մեղսագործման պահին, դրանից հետո մարդն ավելի է մոտենում Աստծուն.

Սակայն՝ սոսկո՛ւմ և հրա՛շք՝ մեղքեն ալ դուն կհառնես
Եվ ավելի ինծի մոտ անոր մեջն ես, ով Աստված («Հառաչանք», 1925)

Նույն բանաստեղծության մեջ նա Արարչին թշնամի-բարեկամ է անվանում, որը ե՛ւ պատիժն է, ե՛ւ վարձքը, մե՛րթ ընծայվում է՝ որպես հաց, մե՛րթ կարծրանում՝ իբրև վեմ:

Թեքեյանական աստվածերգությունում կան նաև քերթվածներ, որոնք սաղմոսերգուի ճաքած շուրթերից են եղել ասես: Ահա «Հեծեծանքը», որով Թեքեյանը նախաստեղծ մեղքի համար էլ է ծնկածալ «մեղա» ասում.

Մեղա՛ հոգվույս, երիկամացս խորեն.
Մեղա՛, ով Տեր, սկզբնական իմ մեղքիս...

Ու հաջորդում են մեկը մյուսից կատարյալ պատկերներ՝ սաղմոսերգուի գրչին արժանի. «Ժայռերու մեջ զիս հող մ'ըրիր արգավանդ, Եվ այդ հողին շիթ մը անձրև գլացար», «Շնորհներուդ համար անոթ մը ընտիր Զիս շինեցիր ու լեցուցիր զայն, ավա՛ղ, Բայց հարվածով մը զայն հետո ճեղքեցիր»: Աստված սիրածուփ մի սիրտ է ընծայել իրեն, սիրո պալատ, որն իր անսվաղ մնացած սիրո համար բանտ է դարձել: Այս հեծեծանքը անհուն տառապանքով ոգված մեղայականն է մի մարդու, «ում գլխուն արդեն կձյունե», և ծնկները «արդեն, արդեն կդողան...»:

1929-ին Թեքեյանը գրում է իր «Ծվարումները»՝ շոշափելով Քրիստոնեության հետ հավերժապես կապվող հարցեր, որոնք արդեն քսան դար է, ինչ եղել և մնում են հավատի պատրաստ շատ ու շատ հոգիների գայթակղության քարն ու սայթաքման եզրը: Ինչո՞ւ է մարդը մարդուն ոսոխ, ինչո՞ւ է ոտնակոխ լինում տկարը, եղբայրը զարնվում եղբորից, և ինչո՞ւ բոլորն էլ օրհնված սափոր չեն՝ «լեցուն բարության գինիով հզոր», ինչպե՞ս է, որ դարերի հետ շատացել են միայն Չարիքն ու Թշվառությունը, Սերը պարտվում է Մահի դեմ, ու մարդու հոգին սպառել է ինքն իրեն: Աստծո պատասխանն անփոփոխ է. լսվում է մեղմ ու խիստ մի ձայն.

-Բայց դուն, գոնե դուն կըրնա՞ս ըլլալ այն,
Զոր անհունաթիվ ու պայծառաթև
Քո շուրջդ գտնել կցանկաս միայն:

Մարդը՝ արարչագործության պսակը, միակն է, որ մեծագույն շնորհ է ստացել՝ ունենալու իր մեջ Աստծո Սիրուց մի կայծ և մտքի ուժը՝ բոլոր ուժերից հզոր ու նաև Աստծուն նմանվելու, առ Աստված հառնելու, կատարելակերպվելու ձգտումը: Կամ գուցե՝

Թե իմ կամքս է, որ մարդն ինձ բարձրանա
Իր իսկ կրքերու զոհակույտին վրա:

Թեքեյանական վերջին «Օվարումը» Բարձրյալ աղբյուրի մեջ շուտով սուզվելու կոիղձով, արդարության գործը Աստծուն հանձնելու և «սիրո հացին խմոր» լինելու կոչով է պսակվում:

«Սուրբ տեղեր» վերնագրով քերթվածը Աստծո հավերժական ներկայության և որոնմաշող կարոտի դրոշմն ունի: Մի տեսակ համատարած լքվածություն, անամոք մենություն կա այն վայրերում, որտեղով անցել է Նա ու… գնացել: Կա մի համակ սպասում իր հարատևության մեջ մի պահ քարացած.

Խոկն Աստուծո դեռ կծփա, կծըխա,
Ամպի ծվեն, կայծակի բոց մը ինչպես,
Այս հովտին մեջ, այս լեռներուն կողին վրա…

Հին հպումով գետը կերթա փրփրադեզ,
Մինչ Ծովն ալ է կարծես սուրբի աչք մը բաց,
Աչք մ՚երկնապիշ, իր արցունքին մեջ սառած…

Թեքեյանի աստվածերգության մեջ ամենակատարյալն անշուշտ «Գալիլիականն» է՝ սուրբ երկրի, հողի, Նրան հպված օդի, Նրան իր գիրկն առած երկնքի դեմ երկյուղած խոնարհումով գրված.

Գալիլիական այս հընաշող աստղերուն
Ներքև հոգիս կսարսռա այս գիշեր…
Հոս էր ուրեմն, որ շրջեցավ Սե՛րն անհուն,
Երկիրն ամբողջ, երկինքն անգամ դյութող Սեր…

Նրա աստվածերգության ամենակարևոր պահը, իր իսկ որակած հավերժական թրթռումն է, իսկ Աստված իր համար Սեր է նախ և առաջ, համակ Սեր, սեր անհուն, ու («Տեր, եթե դուն իմ ալ շրթունքս բանաս») Թեքեյանը օրհնում է Աստծուն նախ՝ իրեն մարդ ծնելու և Տիրոջ անհուն և անհաս լույսը տեսնելու, ապա՝ տատասկների ու ժայռերի միջից սիրո ծաղիկը գտնելու և ի վերջո՝ ոլոր-մոլոր ուղիներով Աստծուն հասնելու շնորհի համար: Այս քերթվածը իր խորքում պահում է այդ փոքրիկ հույսը: Եվ այս ամենի հետ, այս ամենից հետո մեկ այլ տեղ դարձյալ՝ օրհնություն ու փառք.

Օ՛հ, Քեզի փառք, գոհություն և օրհնություն, ո՛վ Աստված…
Գալարեցիր եթե զիս տենչանքներուս մեջ անեղ,
Անոնց անհուն կսկիծեն հետո տվիր վայելել
Երջանկությունն ստեղծման՝ (տաղերու մեջ դաշնակված):

Թեքեյանի աստվածաբանության մեջ թերևս սա ամենակարևոր կետն է՝ արարման մեջ, արարման միջոցով՝ աստվածանմանության, կատարելակերպման շնորհը՝ սիրո պայծառությամբ կնքված: Նա մայրերին արվեստագետներ է կոչում, ո-

րոնց գեղարվեստական գործերը իրենց զավակներն են: Ու կրկին խորքում սերն է: Եվ իզուր չէ, որ «Զավակս» քերթվածում անզավակ մարդու իր տառապանքը խորապես աստվածաշնչյան հոգեբանական մեկնություն է ստանում.

Բայց դուն, անհուն զավկի սեր, ինչպե՞ս իմ մեջս ինկար
Անապատին մեջ ինկած ազնիվ հունտի մը նման...

Այս բանաստեղծական պատկերը ներքին աղերսով կապվում է Հիսուսի «Սերմնացանի առակի» հետ՝ աստվածային խոսքի անմահության համեմատության եզրը դարձնելով կյանքի բնական հերթագայության, սերնդափոխության խորհուրդը:

Իր չունեցած զավակի կարոտը, սերը, մանկությունից սրտի խորքում փայփայած այս մարդը ինքն իր մեջ մեռած, հանգած լինելու ցավագին համոզմունքը գերեզման է տարել հետը՝ կյանքում անվերջ որոնելով բնական ու այնքան մարդկային «անմահությունը». «Երբ ես ծռիմ, ան բարձրանար քովս ի վեր... ու նո՛ր արև՝ աչքին մեջ աչքըս զգցվեր...»:

Թեքեյանին Աստծո դեմ է հանել նաև ահա ա՛յս ցավը.

Զավկի մը շնորհն անգամ, ով Տեր, զլացար
Ինծի ընդմիշտ, և այդ մասունքը սիրույս
Արգիլեցիր փականքներու տակ անհույս,
Եվ զիս իմ մեջս սպաննեցի՛ր չարաչար...

Օտար տղոց աչվըներուն, հոգվույն մեջ
Դողդղագին պիտի տղա՛ս որոնեմ,
Եվ անծանոթ՝ պիտի մեռնի՛մ անոնց դեմ...

Իր փնտրած սերերից, իր խնդրած սերերից և իր կորցրած սերերից ամենացավագինը թերևս անապատի մեջ ընկած այս «ազնիվ հունտը»՝ «զավկի սերն» է եղել՝ «Սեր, որ ինծմե դեպի ինծ կըներ շրջան մը անծայր»: Բնության աստվածադիր կարգի, բնական հերթագայության անծայր շրջանի մասնիկը լինելու փափագը, արարման մեջ ու արարման միջոցով յուրովի անմահանալու, սիրելով սիրվելու, սեր սերմանելու իղձը Թեքեյանը ինչ-որ տեղ կապում է նաև «զավկի շնորհի» հետ:

Չունեցած զավակի կարոտը կրկնապատկում է սիրազուրկ մարդու իր տառապանքը, ու իրեն մնում է միայն երջանկությունն ստեղծման՝ «տաղերու մեջ դաշնակված...»: Բանաստեղծության խորքում սակայն սերն է կրկին, սիրո կարոտը, այնպես որ սահմանումի ուժ կարող է ստանալ Թեքեյանի այն միտքը, ըստ որի «Ամեն աղվոր բանի խորը սերն է, բանաստեղծություն-սեր: Բնությունը աղվոր է. բնությունը բանաստեղծությամբ և արվեստով ստեղծված է. բնությունը ստեղծող սերը աստ-

վածային սեր մըն է. ուրեմն Աստված կա, բանաստեղծ-արվեստագետ Աստված մը»[16]:

Աստծո գոյության՝ սիրո կռվանը փաստորեն ամենազորեղն է ըստ Թեքեյանի: «Ամեն սեր Աստուծմե կուգա ու Աստուծո կերթա,- գրում է Թեքեյանը Ա. Անդրեասյանին 1934-ին,- այդ ճամբուն վրա երկու վերջին հանգրվաններն են ազգության և մարդկության սերերը... Սերն ըլլալով սիրողին կողմե անմահության տենչը սիրվածին՝ կարելի չէ լավ սիրել այդ մեծ էակները՝ ազգ և մարդկություն (մեզ ա՛նչափ պարփակող իրենց մեջ, որ անոնցմով մեզ ալ հավերժացած կզգանք) առանց հավիտենության աղբյուրին՝ Անմահին հավատալու»[17]:

Իր արձակ «Աղոթքում» նա բերում է նս մի կռվան. «Այս աշխարհիս մեջ այնքան անիրավություններ կան, և այնքան խեղճ է մարդս, որ մեր ներսը գտնվող արդարության զգացումը և մեծության զգացումը մեզի կսորվեցնեն, թե այս աշխարհը անցք մը չէ միայն, կամուրջ մը... Ներդաշնակության, տիեզերական կարգ, ամենակարող զորություն մը ու ամենագետ իմացականություն մը այս մեծ շինվածքին ճարտարապետն է եղած»[18]: Բայց դարձյալ գալիս է մի պահ, երբ

Եվ հույսը հիմա ու տենչանքն անգամ
Հիմա նըվաղեր, մոտ են մարելու,
Եղեր է աշխարհն ալ պատ ահարկու...

Գիշեր ու ցերեկ Աստծուն փնտրել ու... հոգնել է ինքը.

Բայց ի փոխարեն հիմա կհավտամ
Մինակ մեծ սիրույն զիս ծնող հողին,
Որ պիտի զիս վաղն ընդունի կրկին...:

1940-ին 62-ամյա Թեքեյանը գրում է «Դեպի Քեզ» հնչյակը, որի խորագիրն ինքնին խոսուն է. նույնն է ճանապարհը, նույնն է հասցեն՝ դեպի քեզ և նորից՝ «մի քանի խեղճ քայլ հեռուեն...»: Եվ թրթռումն էլի կա՝ անհույս որոնման տեսքով.

Եվ կըսեմ անհույս, որ եթե կաս իսկ,
Ով Աստված, Դուն, և ես նավ անտեր
Ի զո՛ւր կորոնեմ Քեզ իբրև խարիսխ...

Գուցե դարձյալ իր «ծուլությո՞ւնն» է պատճառը, որ անզոր մանուկի պես ընկնելուց հետո չի կանգնում կրկին: Սակայն այս անգամ կյանքի վերջում Թրթռումը հրաշքով փոխվում է հոգեխոնարհ հավատի.

---

[16] «Բանաստեղծության և արվեստին վրան», Զվարթնոց, 1929 թ., թիվ 6-7, էջ 243-244:

[17] Նամականի, էջ 370:

[18] Տե՛ս թիվ 14 ծանոթագրությունը:

Ես՝ Ճկուղի մեջ. Դու՝ արև պայծառ,
Ինչպե՛ս ուրանալ Քեզ կրնամ, երբ ե՛ս
Պետք է բարձրանամ ու գամ մինչև Քեզ...

Ուշարժան է նաև այն , որ բանաստեղծը գրեթե միշտ գլխագիր է դիմում Տիրոջը, որն իր համար ոչ թե սոսկ արդարության, մաքրության, լիության, կատարելության մարմնավորում է, այլաբանական մի կերպար, այլ, ինչպես համոզվեցինք իր տաղերի քննությունից, միանգամայն իրական, հուսացված, փառաբանված, ինչպես Աստվածաշունչն է որակում՝ Կենդանի Աստված, որին նա դիմում է անանձնական, համամարդկային խոհի եզերքից, աստվածային սիրո հորդումով:

Թեքեյանի «Հաշվեհարդարը» իր հոգեաշխարհի, բանաստեղծական աշխարհի ամենադիպուկ բնութագիրն է: Քրիստոնեությունը Թեքեյանի արյան մեջ է՝ հյուսված իր եսի հենքաթելերին և գուցե եսից էլ անդին: Ու եթե նրա աստվածերգությունը մինչնիսկ մնար «Հաշվեհարդարի» անսահման սահմաններում, Քրիստոնեական Սեր-Աստծո պատկերը միանգամայն որոշակի կլիներ, և միանգամայն անիմաստ՝ Թեքեյանի հավատի հարցի վիճարկումը: Ո՞րն էր կյանքից իրեն մնացածը՝ «ինչ որ տվի ուրիշին, տարօրինա՛կ, ա՛յն միայն», «խանդաղատանք մը ծածուկ», «օրհնություններ անիմաց»...:

Ինչ որ տվի ուրիշին, վերադարձավ անուշցած
Ու զորացած՝ հոգիիս մեջ մնալու հավիտյան...

սա մեծարենցյան անանձնական սիրո, անանձնական ուրախության երկվորյակն է՝ գեղարվեստորեն նույնքան կատարյալ ու հմայիչ:

Ինչ որ տարավ Սերն ինձմե, չկորսնցուց զայն Աստված,
Տվավ ինձ ետ ու ըրավ կյանքս անով միշտ բուրյան...:
..........................................................................................
Ու չեմ ըսեր՝ «ինչ մնաց», ի՞նչ կմնա հողին տակ
Եղեգներեն դյուրաթեք, կաղնիներեն հաստաբուն.
Արևն ըմպած ըլլալու մխիթարանքը անհուն:

Սա համակերպում չէ և ոչ էլ մխիթարություն՝ առ ի չգոյե լավագույնի: Ծածուկ խանդաղատանքի, անիմաց օրհնությունների, անշահախնդիր, անմնացորդ սիրո ու նվիրումի երգն է սա, ամենաիսկական մի խոնարհում աստվածային կարգի, խաղաղ ու իմաստուն գոյության առաջ:

# ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

*ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ*

## ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ «ՀԱՅՈՑ ԻՐԱՎՈՒՆՔ» ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Հայոց իրավական մտածողության տարրերը սկիզբ են առել հայ ժողովրդի պատմության ասպարեզ մտնելու պահից և ուղեկցել նրան մինչև մեր օրերը: Հայաստանի տարբեր գավառների սովորութային բազմաթիվ յուրօրինակություններ, որոնք արտացոլված են ժողովրդի կյանքում և զանազան ծեսերում, այսօր էլ գրավում են ազգագրագետների ուշադրությունը: Հայոց ազգային իրավունքի մի յուրօրինակ շերտ պահվում է սովորույթի և բարոյական կաղապարների ձևով ժողովրդական մտածողության մեջ[1], որի վերհանումը կօգնի Հայոց իրավունքի հուշարձանների լիակատար ուսումնասիրությանը, կխթանի ազգային կառույցների համակարգի լիակատար ուսումնասիրությանը:

Իրավունքը մարդկության պատմության զարգացման ընթացքի հետ առաջացած այն գիտելիքներից է, որը փոխազդեցության միջոցով անցել է քաղաքական ու պետական սահմանները և ծառայել հասարակության շահերին: Իրավունքի հուշարձանների ուսումնասիրությունը թույլ է տալիս հետևել հասարակության շերտավորման և տարբեր դասերի պարտականությունների (հաճախ՝ արտոնությունների)

---

[1] Հայոց իրավունքի այդ շերտի ուսումնասիրությունը հետազոտողների ուշադրությունը գրավել է դեռ ԺԹ դարում: Այդ բնագավառում արժեքավոր ուսումնասիրություններ են թողել Գ. Խալաթյանը (Ուրագիր հայ ազգագրութեան և ազգային իրաւաբանական սովորութիւնների, Մոսկուա 1887), Կ. Կոստանյանը (Պսակ և տուայր. «Ազգագրական հանդէս», 13, էջ 131-138), Խ. Սամուէլեանը (Հայ սովորութական իրաւունքը, Թիֆլիս 1911) և ուրիշներ:

ամրագրման գործընթացին, բարոյական նորմերի ձևավորմանը, քրեորեն հետապնդելի արարքների սահմանմանը, պատիժների չափերի համակարգմանը:

Անտիկ քաղաքակրթության շրջանից Հայաստանի տարածքում պահպանված վիմագիր արձանագրություններում (ուրարտերեն, արամեերեն, հունարեն, լատիներեն) վկայված մոտեցումները որոշակի պատկերացումների արտացոլում են, որոնցից շատերն հաստատագրված են հարևան ժողովուրդներից հասած իրավական հուշարձաններում (օր.՝ Ավեստա, հունա-հռոմեական օրենսդրություն և այլն): Անփոխարինելի են հայ մատենագրության վկայությունները Ե-Ը դարերում Պարսկաստանի, Բյուզանդիայի ու Արաբական խալիֆայության տիրապետության տակ գտնվող Հայաստանի կառավարման համակարգի մասին: Այնուամենայնիվ, դրանց նշանակությունը որքան էլ մեծ է ստրկատիրության և վաղ ավատատիրության ժամանակաշրջանի Հայաստանի իրավական պատկերացումների ուսումնասիրության տեսանկյունից, չի կարող փոխարինել օրենքների սիստեմատիկ շարադրանքին, որոնք հայոց մատենագրության մեջ հայտնվում են Եկեղեցու կանոնական ժողովածուների շրջանառության մեջ մտնելու պահից:

Երկրի բյուզանդական մասի կյանքում, մինչև Ը դարը, հասարակական հարաբերությունները կարգավորելու համար օրենսդրական նախաձեռնությամբ հանդես էին գալիս բյուզանդական կայսրերը, որոնք իրենց մի շարք նովելներով փորձում էին ձևափոխել ժառանգական և ամուսնական փոխհարաբերությունները Հայաստանում[2] և այդ տեղական սովորություններն ու օրենքները հարմարեցնել բյուզանդական օրենսդրությանը: Նույն մտահոգությամբ իրավական գործունեություն էին ծավալել նաև Սասանյան արքաները, որոնք Հայաստանի պարսկական մասի ներքին կառուցվածքը փորձում էին հարմարեցնել սեփական իրավական պատկերացումներին: Մեզ է հասել նաև Սասանյան Իրանի իրավական պատկերացումների ողջ համակարգը ներկայացնող Սասանյան Դատաստանագիրքը[3]: Մինչև Է դարը թե՛ Իրանը, և թե՛ Բյուզանդիան փորձում էին Հայաստանի կառավարման համակարգը ենթարկել սեփական պետական կառույցներին:

Միջնադարյան Հայաստանում Եկեղեցու գաղափարախոսական հիմքը Աստվածաշունչն էր, ուր արձանագրված բարոյախրատական նորմերը կազմում էին այն օրենքը, որոնցով առաջնորդվում էր միջնադարյան հասարակությունը: Իզուր չէ, որ այլակրոն հեթանոսներին, գրադաշտականներին և նույնիսկ մուսուլմաններին ու բոլոր նրանց, ում խորթ էին Աստվածաշնչի ճշմարտությունները, հայ միջնադարյան հասարակության (ավելի ճիշտ՝ մատենագրության) մեջ անվանում էին

---

[2] Տե՛ս Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, с. 185-190.

[3] Այս հուշարձանի հրապարակումը և ուսումնասիրությունը տե՛ս **А. Г. Периханян**, Сасанидский судебник "Книга тысячи судебных решений", Ер., 1973, **А. Г. Периханян**, Общество и право Ирана в Парфянский и Сасанидский периоды, Москва, 1983.

«անօրեն»: Ի հակադրություն նրանց, կրոնի, հավատի, դավանանքի ու ճշմարիտ
բարոյական նորմերի հիմնական հոմանիշ է դառնում «օրենքը», որի սկզբունքները
քրիստոնյա հասարակության մեջ բխեցվում են Աստվածաշնչից: Մեր նախնիները
հասարակության բարոյական նկարագիրը ապահովող պարտադիր օրինաչափ
աղբյուր էին համարում այդ հուշարձանի առաջին հինգ գրքերը՝ Հնգամատյանը,
որի ռոլինակը, ըստ հինկտակարանային ավանդույթի, Մովսես մարգարեն է: Հին
ու Նոր Կտակարաններում ամփոփված իրավական նորմերի ամբողջությունն է, որ
Մխիթար Գոշը բնութագրում է. «...Աւրէնքն եւ Աւետարանն իբր մոռացեալ զբնաւո-
րական աւրէնսն յիշեցուցանեն»[4]:

Հայոց միջնադարյան եկեղեցական իրավունքի վրա իր ազդեցությունն է թողել նաև Տիեզերական Եկեղեցու կանոնական գրականությունը և հռոմեական ու բյուզանդական քաղաքացիական օրենսդրությունը: Քրիստոսի խաչելությանը հաջորդող առաջին դարերում միջերկրածովյան տարածաշրջանում ցրված տարբեր համայնքներում ստեղծվում էին կանոնական բազմաբնույթ ժողովածուներ, որոնք կանոնադրության դեր էին կատարում քրիստոնյաների համար: Հետագայում դրանց մի մասը, դարերի միջով անցնելով, հղկվեց և դարձավ բոլոր քրիստոնյա ժողովուրդների սեփականությունը: Կանոնական այդ ժողովածուներից ժամանակի ընթացքում ձևավորվեցին Առաքյալներին և նրանց աշակերտներին վերագրված կանոնախմբերը, որոնց նշանակալի մասը մեզ է հասել Մերձավոր Արևելքի գրեթե բոլոր քրիստոնյա ժողովուրդների լեզուներով: Դրանցից մի քանիսը Ե դարից սկսած թարգմանվել են նաև հայերեն և կազմում են Հայոց կանոնագրքի անքակտելի մասը: Տիեզերական Եկեղեցում գործածության մեջ եղած կանոնախմբերի մյուս խումբն էլ կրել է Եկեղեցու Սուրբ հայրեր Բարսեղի, Կղեմեսի, Եփրեմի, Դիոնեսիոս Աթենացու (Արիսպագացի) և այլոց անունները: Դրանք ևս լայն տարածում են ստացել Հայաստանում և Տիեզերական Եկեղեցու տեղական ժողովների կանոնախմբերի հետ միասին ենթարկվել հետևողական խմբագրության: Ավելի անխաթար վիճակում են մեզ հասել Տիեզերական ժողովների կանոնների բնագրերը, որոնցից միայն առաջին երեքի (Նիկիա, Կ.Պոլիս և Եփեսոս) կանոնախմբերն են վավերացվել և ընդգրկվել Հայոց Եկեղեցու կողմից շրջանառության մեջ դրված կանոնական ժողովածուների մեջ:

Ը դարում Արաբական խալիֆայության կողմից գրավված Հայաստանը երկար ժամանակ ստիպված էր մնալ այդ պետության քաղաքական և իրավական դաշտի սահմաններում: Այս հանգամանքը ստիպում էր հայկական հասարակության կա-

---

[4] Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, աշխատասիրությամբ Խոսրով Թորոսյանի, Երևան 1975, էջ 1:

ռավարման նորմեր համարեցնել մուսուլմանական շարիաթի սկզբունքներին[5], որի բազմաթիվ սկզբունքներ սերում են Մովսիսական իրավունքից: Հովհաննես Օձնեցի Կաթողիկոսի իշխանության տարիներին Հայոց Եկեղեցին հնարավորություն ստացավ ամրապնդել իր ինքնուրույնությունը բյուզանդականից: Ը դարի առաջին կեսին եկեղեցական կանոնների մինչ այդ շրջանառության մեջ եղած ժողովածուն նոր խմբագրության է ենթարկվում, ուր արձանագրվում են Հայոց եկեղեցական ծեսի ամենակարևոր առանձնահատկությունները: Իր շատ թե քիչ լիակատար տեսքով մեր տրամադրության տակ ունենք Հայոց Կանոնագրքի միայն հիշատակված ժողովածուն: Արդեն Ժ դարի վերջին այն արդեն ընդարձակվել էր և ուներ շուրջ 40 կանոնախումբ[6]: Սկզբնաղբյուրների անուղղակի վկայություններով պարզվել է նաև, որ Անանիա Մոկացին (Ժ դ.) և Մխիթար Գոշը (ԺԲ դ.) օգտագործել են Կանոնագրքի ընդարձակված այս խմբագրությունը[7]: 1098 թ. ընդօրինակված Կանոնագրքի հնագույն ձեռագրում (Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի թ. 131 մատյան) հիշատակվածի վրա ավելացված է շուրջ 17 նոր կանոնախումբ և Հայոց Կանոնագրքում դրանց թիվը հասել է 57-ի: Կանոնագիրք Հայոցը այս տեսքով ողջ միջնադարի ընթացքում դիտվել է իբրև իրավաբանական ակտերի պաշտոնական ժողովածու, որի կանոնները բազմիցս օգտագործվել են նաև քաղաքացիական օրենսգրքերում, հաստատագրվել վիմագիր արձանագրություններում: Հետևապես, մեզ հասած Կանոնագրքի այսօրվա խմբագրություններն իրենց վրա կրում են նաև Բագրատունյաց դարաշրջանի կնիքը:

Բագրատունյաց Հայաստանում տեղի ունեցող հասարակական նոր շրջադարձի արգասիք են Շիրակավանի ժողովի (862 թ.) տասնհինգ կանոնները: Ի հակադրություն Կանոնագրքի, այս որոշումների Է կետում գրեթե նույնությամբ շարադրված է Քաղկեդոնի վարդապետությունը՝ առանց այդ ժողովի հիշատակության[8]: Միաժամանակ կան կետեր, որոնք վերահաստատում են Հայոց ծեսի և դավանանքի մի քանի կարևորագույն դրսևորումներ («Որ խաչեցար» և այլն): Բագրատունյաց դարաշրջանի Հայաստանում կողք կողքի գործում էին հայ առաքելական և քաղկեդոնական եկեղեցական համայնքներ, որոնց հաշտեցնելու խնդիրն էր իր առջև դրել այդ ժողովը: Հայոց եկեղեցական կազմակերպությունը Բյուզանդական Եկեղեցուն ենթարկելու կայսերական ծրագրի շուրջ կողմերի միջև վիճաբանությունները դադա-

---

[5] Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան. VIII-IX դդ. մահմեդական իրավունքը՝ վաղ միջնադարյան Հայաստանի ուսումնասիրման աղբյուր. ՊԲՀ, 1976, հ. 2, էջ 75-87:

[6] Կանոնագիրք Հայոց. Բ (Աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի), Երևան, 1971, էջ ԺԷ-ԺԹ:

[7] Տե՛ս Կանոնագիրք Հայոց. Բ, էջ ԻԹ:

[8] Գ. Անանեան, Զաքարիա Հայոց Կաթողիկոսի և Աշոտ իշխանաց իշխանի թղթակցությունը Փոտ Պատրիարքի և Նիկողայոս Ա Պապի հետ. Վենետիկ, 1992, էջ 50 (Հայագիտական մատենաշար «Բազմավէպ», 35):

րեցին միայն ԺԱ դարի սելջուկ-թյուրքական ռազմարշավներից հետո: Բագրատունիների դարաշրջանում և դրանից հետո Հայաստանի տարածքում երկաբնակների ստվար բանակի[9] գոյության մասին է խոսում նաև քաղկեդոնական հայ մատենագրության գոյության փաստը[10], որի շրջանակներում գիտական արժեք է ստանում ԺԳ-ԺԴ դարի եզակի ձեռագրով վկայված 14 տիտղոսների նոմոկանոնի (Կ.Պոլսի օրթոդոքս եկեղեցու կանոնագիրք) հայերեն թարգմանությունը[11]: Մեզ հասած ձեռագրում բացակայում են Փոտ Պատրիարքի միջամտությունները, որն էլ մեզ թույլ է տալիս ենթադրել, որ երկի թարգմանությունը կատարվել է Թ դարում կամ դրանից առաջ: Հայ քաղկեդոնականների միջավայրի արգասիք է նաև Բաչկովոյի վանքի (գտնվում է Պլովդիվի մոտ) ԺԱ դարում գրված կանոնադրություն-սահմանքը, որի հայերեն տարբերակի մասին ակնարկ կա երկի հունարեն բնագրում[12]: Այս հուշարձանների գոյության փաստն ընդլայնում է մեր պատկերացումները Բագրատունյաց դարաշրջանի իրավական դաշտի և կանոնական հուշարձանների մասին:

Քաղաքացիական օրենսդրության հուշարձաններ Բագրատունյաց դարաշրջանից մեզ չեն հասել: Այդ հարցին, հայ իրավունքի պատմությանը նվիրված իր ակնարկում, անդրադարձել է գերմանացի բանասեր Ժ. Կարստը: Նրա կարծիքով Բագրատունյաց շրջանի թագավորական իրավունքի բաղկացուցիչ մասն է կազմել կամ նմանատիպ մի հուշարձանի վրա է գրվել Մխիթար Գոշի Դատաստանագրքի «Յաղագս թագաւորաց դատաստանի եւ որք ընդ ձեռամբ նոցա» հատվածը[13]: Իր ենթադրություններում Ժ. Կարստն ավելի առաջ է գնացել՝ ենթադրելով, որ արդեն Բագրատունիների դարաշրջանում քաղվածաբար թարգմանվել են Ասորա-հռոմեական Դատաստանագիրքն ու Էկլոգան: Ներսես Ակինյանը և նրան հետևողները ապացուցված չեն համարում այս ենթադրությունը, քանի որ Մխիթար Գոշը և Ներսես Լամբրոնացին (հիշատակված Դատաստանագրքերի ԺԲ դարի թարգմանիչը) այդպիսի քաղվածական թարգմանության ծանոթ չեն[14]: Ն. Ակինյանը զարգացնում է այն տեսակետը, ըստ որի Բագրատունյաց թագավորությանը հավանաբար պետք չեն եղել իրավունքի հուշարձաններ, քանի որ գոյություն ուներ պետու-

[9] **А. Арутюнова-Фиданян**, Армяно-византийская зона, Москва, 1994, с. 78-92.

[10] **Ն. Ակինեան**, Սիմէոն Պղնձահանեցի եւ իր թարգմանութիւնները վրացերէնէ, Վիեննա, 1951, էջ 225-262 (Ազգային մատենադարան, հտ. ՃԿԴ):

[11] Այս երկի միակ ամբողջական ընդօրինակությունը պահպանվում է Վենետիկի Մխիթարյան գրադարանում և կրում է 1661 թվահամարը: Տե՛ս **Ս. Ճեմճեմեան**, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Զ, Վենետիկ 1996, էջ 345-354:

[12] **А. Арутюнова-Фиданян**, Типик Григория Пакуряна, Ереван, 1978, с. 121.

[13] J. Karst, Grundriß der Geschichte des armenischen Rechtes. I.-Sonderabdruck aus der "Zeitschrift für vergleichende Rechtswissenschaft", XIX Bd., Stuttgart, 1906, S. 17-18.

[14] **Ն. Ակինյան**, Ակնարկ մը հայ իրաւանց պատմութեան վրայ եւ Յ. Կարստի նոր երկասիրութիւնները, ՀԱ, 1907, էջ 361:

թյուն, որն իրականացրել է իր քաղաքացիական իրավունքը՝ հեռանելով սովորութային նորմերից: Իհարկե այս տեսությունը չի կարող դիմանալ քննադատության: Բագրատունյաց թագավորության հարևան Բյուզանդիայում, որն ամեն կերպ ձգտում էր նվաճել Հայաստանը, այս դարաշրջանում իրավունքը հասնում է նորանոր հաջողությունների[15]: Լինելով Բյուզանդական քաղաքակրթության ծիրում, Բագրատունյաց Հայաստանը ևս անտարբեր չէր կարող մնալ այդ շարժմանը: Տարոնի իշխանության, Վասպուրականի, Անիի և Կարսի թագավորությունների կտակների հիման վրա հանձնումը կայսրությանը խոսում է այն մասին, թե որքա՛ն խոր էր թափանցել Բյուզանդական օրենսդրությունը Հայաստան:

Այնուամենայնիվ դա չի նշանակում, թե Հայաստանում դադարել է օրինաստեղծ գործունեությունը: Հայոց արարողակարգի կանոնականացման կարևոր հուշարձան է Մաշտոց Եղվարդեցի Կաթողիկոսի (897-898) ստեղծած Մաշտոց ժողովածուն, որով Եկեղեցին կարգավորում է եկեղեցական պաշտամունքի և ծիսական գործունեության բոլոր հիմնական խնդիրները:

Բագրատունիները փորձեցին ստեղծել միավորված իշխանությունների մի լայն համակարգ, որի հիմնական սկզբունքը նախարարական տների տեղական իրավասությունների ընդլայնումն էր: Ցավոք այս գործընթացը չհասավ իր տրամաբանական վախճանին, Բագրատունյաց թագավորության կործանումով կանգ առավ պետական նոր կառուցվածքների առաջացումը Մեծ Հայքի տարածքում: Այնուամենայնիվ, այդ ժամանակներից մնացած մի շարք քաղաքական հաստատություններ կարողացան ցույց տալ իրենց կենսունակությունը դարերի ընթացքում: Մինչև ԺԹ դարը պահպանվեցին բազմաթիվ իշխանական տներ (հատկապես՝ Արցախում), որոնք մնացին Հայաստանում ազատագրական պայքարի հիմնական կրողները: Ցավոք, Բագրատունյաց շրջանի քաղաքացիական իրավունքի նորմերը գրառման չարժանացան, և մեր պատկերացումները Հայոց իրավունքի այս փուլի մասին սահմանափակվում են պատմիչների հաղորդած աղքատիկ տեղեկություններով և սա-

[15] Մակեդոնյան կայսրության կառավարման շրջանը բյուզանդագետների կողմից բնութագրվում է իբրև բյուզանդական իրավունքի Վերածննդի դարաշրջան: Այս ժամանակներում են ստեղծվում Էկլոգայի նոր խմբագրությունները (Ecloga privata, Ecloga privata aucta, Ecloga aucta, Ecloga ad Prochiron mutata), Պրոխիրոնը, Էպանագոգան և այլն: Նոր մեկնությունների են արժանանում Հուստինիանոսի ժամանակներում ստեղծված իրավունքի հուշարձանները, մանավանդ՝ Corpus Juris-ի, Նովելների և Digeste-ների մեկնությունը. 60 գրքերի մեջ ի մի է հավաքվում հռոմեական իրավունքի նորմերի ողջ զինանոցը, որն իրավագիտական գրականության մեջ Բասիլիքներ անունն է ստացել: Այս ժամանակներից է սերում նաև Լևոն կայսեր 113 նովելների համառոտ ժողովածուն: Այս շրջանում նոր հաջողությունների է հասնում նաև բյուզանդական եկեղեցական կանոնական իրավունքը: Հայտնի է Սիմեոն Լոգոթետի Կանոնական ժողովածուն (Syntagma canonum'), Փոտ Պատրիարքին վերագրված Նոմոկանոնի 14 տիտղոսների նորովի խմբագրված ժողովածուն (Տե՛ս N. van der Wal et J. H. A. Lokin, Historiae iuris Graeco-Romani delineatio (Les sources du droit byzantin de 300 à 1453), Groningen 1985, p. 78-97.

կավաթիվ վիմագիր արձանագրություններով: Հատկանշական է, որ, գրավոր քաղաքացիական օրենսդրություն չավանդած այս պետության կործանումից մեկ դար հետո, հայոց հասարակության մեջ մեծ նախանձախնդրություն է նկատվում քաղաքացիական իրավունքի հուշարձանների ստեղծման բնագավառում: Հայոց իրավունքի գրավոր այդ հուշարձանների (մանավանդ՝ Մխիթար Գոշի Դատաստանագրքի) բազմակողմանի ուսումնասիրության ընթացքում, հատկապես թագավորական տան իրավունքների և պարտականությունների բաժնում, ի հայտ են գալիս իրավական սկզբունքներ (գահաժառանգման բնագավառում), որոնցով հավանաբար առաջնորդվում էին Հայաստանում մինչև ԺԱ դարի առաջին կեսը:

Բագրատունյաց Հայաստանի քաղաքացիական իրավունքի ուսումնասիրության կարևորագույն սկզբնաղբյուր են նաև վիմական արձանագրությունները, որոնցից մի քանիսով վանքերին էին զիջվում պետության կողմից հավաքվող որոշ հարկատեսակներ, հաստատվում են եպիսկոպոսական նոր թեմերի սահմանները՝ թագավորի, իշխանների, երբեմն Ղ կաթողիկոսի հրամանով (տե՛ս Կոթայ վանքի 901 թ., Մաքենացոց վանքի 901 թ., Վանևանի 903 թ., Քարակոփի վանքի 910 թ., Մրենի 1031 թ. և այլն)[16].

Հայոց հնագույն, նախարարական կարգը վերականգնելու միտումով ստեղծվում էին բազմաթիվ գահնամակներ ու զորանամակներ, ուր հաստատագրվում էին տարբեր նախարարական տների դիրքը հասարակության կյանքում: Այդ հուշարձանների հնագույն ընդօրինակությունները մեզ են հասել Ժ-ԺԱ դարերից, սակայն պահպանված նյութը թույլ է տալիս ենթադրել, որ դրանք կազմվում էին հին վավերագրերի վրա, որոնց հետքերն առկա են Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու և Սեբեոսի Պատմություններում, նախամուսուլմանական Իրանի և Բյուզանդական կայսրության քաղաքական կառուցվածքում:

Բագրատունիների դարաշրջանի հայկական պետությունն իր կառավարման ձևով և կառուցվածքով արմատականորեն տարբերվում էր վաղ (Արշակունյաց թագավորություն) և զարգացած (Կիլիկյան թագավորություն) ֆեոդալիզմի դարաշրջանի հայկական պետական միավորումներից: Բագրատունյաց շրջանում գերակայի և ստորակայի միջև իրավական փոխհարաբերությունները կարգավորվում էին «դաշինս ուխտի», «միաբանութեան ուխտ» և նմանաբնույթ գրավոր պայմանագրերի միջոցով[17]: Հասարակական համաձայնության արդյունք է «թագավոր ամենայն տանն Հայոց» տիտղոսը, որը շրջանառության մեջ է մտնում Ժ դարի Բ կեսից: Բագրատունյաց շրջանում ստորական պարտավորվում էր ենթարկվել գերակային իբրև

[16] Կ. Կոստանեանց, Վիմական տարեգիրք, ՍՊբ. 1913:

[17] Ռ. Մաթևոսյան, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Եր., 1990, էջ 52-4: Հեղինակը բերում է սկզբնաղբյուրների վկայություններ (տե՛ս նաև նույն տեղում, էջ 192): Այս նույն կառուցվածքը գործում է նաև Վասպուրականում (տե՛ս Ռ. Մաթևոսյան, էջ 72):

«որդի առ հայր», իսկ գերական (հաճախ՝ թագավորը) պարտավորվում էր «հայրենի խնամքով սիրել զնա»: Եթե ստորակա ավատատերերի նկատմամբ Բագրատունի թագավորը «հայր» էր և «հայրագլուխ», ապա թագավորական ընտանիքի անդամների (իր եղբայրների և մերձավոր ազգակիցների) նկատմամբ՝ «ազգապետ»[18]: Թ-ԺԱ դդ. պատմությունից հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ արքաները «ուխտը» խախտելու համար պատժում էին իրենց ստորակային. Աշոտ Երկաթը կուրացրեց Սահակ Սևադային և «Ուտի» գավառի կառավարիչ Մովսեսին (Հովհ. Դրասխ., էջ 303-4, 314), Վանանդ գավառի հայրենատերերի խռովությունը ճնշեց Աշոտ Ա-ի եղբայր սպարապետ Աբասը, իսկ նրանց կալվածքները բռնագրավվեցին հարքունիս (Հովհ. Դրասխ., էջ 144): Մյուս կողմից էլ, հավատարիմ ծառայությունն ուղեկցվում էր պատիվներով և կալվածքների նվիրատվությամբ: Գերակա-ստորակայական փոխհարաբերությունների այս կանոնակարգված շղթան վերընթաց աստիճաններում ձուլվում էր «թագավորների ընտանիքի» տիեզերական համակարգի հետ, որն իր ողջ բազմազանությամբ ներկայացված է Ժ դարի բյուզանդական մատենագիր և կայսր Կոստանդին Ծիրանածնի «Արարողությունների» գրքում[19]:

[18] Նույն տեղում, էջ 55-56, որ. Կարսի Աբաս և Կյուրիկյան Գուրգեն թագավորները իշխում էին «հրամանաւ ազգապետին»՝ Գագիկ Ա-ի: Հովհաննես-Սմբատը Կյուրիկյան Դավիթ Անհողինի «ազգապետն» էր (տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, Վաղարշապատ, 1898, էջ 10, 84):

[19] Տե՛ս Կոստանդին Ծիրանածին (թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Հրաչ Բարթիկյանի), Բյուզանդական աղբյուրներ, Ա, Երևան, 1970, էջ 151:

*ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ*

# ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼՅԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Հայ մեծատաղանդ կոմպոզիտոր և խմբավար Մակար Եկմալյանը (1856-1905) Սանկտ Պետերբուրգի կոնսերվատորիայի սանն է: Այստեղ նրա ուսումնառությունը տևել է սովորականից շատ ավելի՝ մոտ մեկ տասնամյակ՝ 1879-ից մինչև 1888-ը (ներառյալ), և դա ունի իր հիմնավոր պատճառները, որոնց մենք կանդրադառնանք ստորև:

Դեռևս վաղ մանկության տարիներին, Էջմիածնի (Վաղարշապատի) Ժառանգավորաց դպրոցում սովորելիս, Եկմալյանը երգել և սիրել է հայրենի եկեղեցական երգերը: Հետագայում, երբ մեծագործ Կաթողիկոս Գևորգ Դ-ն Կ. Պոլսից Էջմիածին է հրավիրում հայ հմուտ երաժշտագետ, շարականագետ և հայկական նոտագրության խոշոր գիտակ Նիկողայոս Թաշճյանին՝ հայ հոգևոր երաժշտության գանձերը գրի առնելու, նրա ղեկավարությամբ Մակար Եկմալյանը հետզհետե վարժվում և հմտանում է հայկական ձայնագրության մեջ և իր ժրաջան մասնակցությունն է բերում հայոց Պատարագի երաժշտության գրառմանը (1874 և 1878), ապա նաև Շարակնոցի (1975) և Ժամագրքի (1977) գրառմանը և հրատարակմանը:

Կաթողիկոս Գևորգ Դ-ն, գնահատելով և խրախուսելով երիտասարդ Եկմալյանի բեղմնավոր աշխատանքը, որոշում է նրան որպես դպրապետ ուղարկել Ռուսաստանի մայրաքաղաք՝ Հայ Եկեղեցու ծառայողներին հայկական ձայնագրություն սովորեցնելու և տարածելու նպատակով: Պետերբուրգում, այդ նոր միջավայրում, Եկմալյանի մեջ շուտով հղանում է եվրոպական երաժշտության տեսություն ուսումնասիրելու միտքը, որի անհրաժեշտությունը Եկմալյանը գնալով ավելի ու ավելի է գիտակցում: 1877-1878 թվականներին, սակայն, Պետերբուրգում գտնվելու առաջին իսկ ամիսներից սկսած, Եկմալյանը եղել է սուր կարիքի և նեղության մեջ, քանի որ Էջմիածնից ստացել է ժամանակավոր և շատ չնչին մի ռոճիկ, որի մի մասը ստիպված էր օգտագործել իր մասնավոր դասատուներին վարձատրելու համար: Եկմալյանը հասել էր խոր հիասթափության և ստեղծված դժվարին դրությունից ելք էր որոնում: Սրբազան Հայր Վահրամ Մանկունին հասցեագրած իր նամակներում նա խիստ գանգատվում է իր «խղճալի ապրուստից», պատմում իր կրած զրկանքների

մասին և խնդրում է «մի փոքր օգնություն Սուրբ Աթոռից», որպեսզի կարողանա մի կերպ պահպանել իր գոյությունը:

Եվ ահա երիտասարդ Եկմալյանը, որ դեռևս անհաղորդ էր եվրոպական երաժշտությանը (էլ չենք ասում, որ համարյա չէր տիրապետում ռուսերենին), իրեն ճանաչող և համակրող հայրենակիցների օգնությամբ (մասնավորապես Շուշանավոր մանկավարժ Գաբրիել Պատկանյանի խորհրդով) փորձ է անում գտնել Պետերբուրգի կոնսերվատորիայում ազատ ունկնդիր դառնալու հնարավորությունը:

Եկմալյանի Պետերբուրգում ապրած տարիների և մասնավորապես նրա ուսման մասին մեզ հասած և պահպանված տվյալները դժբախտաբար շատ աղքատիկ են և կցկտուր, ուստի մեզ առանձնապես ուրախացրեց լատիշ կոմպոզիտոր Յազեպ Վիտոլի (1863-1948) լեհերենից ռուսերեն թարգմանված և 1969 թվականին հրատարակված հուշերի գիրքը, որտեղ հեղինակը մտաբերում է Պետերբուրգի կոնսերվատորիայի իր ընկերոջը՝ Մակար Եկմալյանին, որի հետ նա նույն դասարանում է սովորել: Վիտոլը իր գրքում ընդամենը մի էջ է նվիրել Եկմալյանին, բայց դա մեզ հասած վավերագրական շատ կարևոր և արժեքավոր մի վկայություն է հայ կոմպոզիտորի մասին: «Եկմալյանը,- գրում է Վիտոլն իր գրքում,- կոնսերվատորիայում սովորում էր ոչ լիակատար պաշտոնական կերպով: Էջմիածնի արքեպիսկոպոսը (խոսքն այստեղ Խորեն արքեպիսկոպոսի՝ Նար-Պեյի մասին է - Ալ. Թ.) նրան ուղարկել էր, որպեսզի ծանոթանա եվրոպական երաժշտությանը, պատրաստվի Հոգևոր Ճեմարանում եվրոպական երաժշտություն ավանդելուն»:

Յազեպ Վիտոլը Եկմալյանին ներկայացրել է որպես իր առաջին մտերիմ դասընկերը, թեև վերջինս յոթ տարով մեծ է եղել նրանից: «Մեր շրջանում,- շարունակում է պատմել Վիտոլը,- Եկմալյանը «սպիտակ ագռավ» էր՝ անկեղծ ու բարեսիրտ, ոչ առանց երեժշտական տվյալների, որոնք սակայն արտահայտվում էին ոչ արևմտաեվրոպական երաժշտության առումով: Իր վանքի ապագա ռեգենտը իր հայրենիքում դաստիարակվել էր մեկ-երրորդական տոներ ունեցող երաժշտությամբ, այդպես էր նա երգում հայկական երգերը, այդպիսին էր տոների բաժանումը նաև նրա ժողովրդական նվագարանների վրա, և պետք է վկայեմ, որ մեր օրերի համար դա հնչում էր շատ ընդունելի, նույնիսկ գրավիչ: Մենք հաճույքով էինք լսում նրա թառի նվագը (թավական մեծածավալ կիթառատիպ նվագարան՝ խոր, թավշյա ռեզոնանսով (ձայնանդրադարձմամբ)):

Այնուհետև Վիտոլը հիշում է տնային պարապմունքները, մտաբերում է նաև իր մյուս դասընկերոջը: «Կոնսերվատորիայի իմ մյուս ընկերը,- գրում է նա,- պրոֆեսոր Ռոտեյնի դասարանում սովորող Էրնստ Օրիդերն էր: Քաղաքի «Վասիլևյան կղզում» գտնվող նրա լայնարձակ բնակարանում (Էրնստի հայրը գեներալի չին ուներ) մենք Եկմալյանի հետ մեկտեղ պատրաստում էինք հարմոնիայից, սոլֆեջիոյից և այլ առարկաներից մեզ տրված առաջադրանքները»:

Հայ հոգևոր իշխանությունների միջնորդությամբ 1879-ի սեպտեմբերից Եկմալյանը դառնում է Պետերբուրգի կոնսերվատորիայի անվճար ուսանող: Նա սկսում է

պարապել ուժեղացված ծրագրով, աշխատում է օր ու գիշեր՝ խորապես գիտակցելով, որ միայն անդադրում տքնությամբ պետք է կարողանա հաղթահարել իր գիտելիքների պակասը: Նա մեծ ուշադրություն է նվիրում երաժշտական-տեսական առարկաներին (հարմոնիա և պոլիֆոնիա), մանավանդ դաշնամուրային ամենօրյա նվագին, որին տիրապետելու առաջին իսկ քայլերը կատարում է դաշնակահար Պ. Գուտիցկու դասարանում: Եկմալյանը մի քանի տարի մասնակցել է կոնսերվատորիայի ուսանողական երգչախմբի պարապմունքներին: Նրան մշտապես հետաքրքրել են երաժշտության պատմության և էսթետիկայի դասերը, որոնց ծրագրերը ուսանողից պահանջում էին տևական և համբերատար աշխատանք:

Երաժշտա-տեսական առարկաներից կոնսերվատորիայում Եկմալյանն աշակերտել է Յու. Իոգանսենին, Ա. Լյադովին, կոմպոզիցիայի դասարանում սկզբնական տարիներին՝ Ն. Սոլովյովին, ապա՝ ավելի ուշ՝ մեծահռչակ Ն. Ռիմսկի-Կորսակովին (1885-1887 թթ.):

Իր արտակարգ աշխատասիրության, ջանասիրության և տոկունության շնորհիվ Եկմալյանը ուսման առաջին իսկ ամիսներից հասնում է շատ շոշափելի և հուսադրող արդյունքների: Նրան հաջողվում է տարեց-տարի աճել, իրականացնել նորանոր մտահղացումներ, մասնավորապես ակտիվացնել իր աշխատանքը հայրենի ժողովրդական մեղեդիների մշակման մեջ: Դրանում նրան բարեկամաբար օգնել և խրախուսել են ոչ միայն կոնսերվատորիայի դաստիարակները, այլև ռուս երաժշտության այնպիսի նշանավոր դեմքեր, որպեսիք էին Անտոն Ռուբինշտեյնը և Միլի Բալակիրևը:

Եկմալյանի ուսուցիչները և առաջին հերթին՝ Ռիմսկի-Կորսակովը ուշադիր հետևել են նրա պարապմունքներին, նպատակամետ ուղղություն տալով Եկմալյանի ստեղծագործական նախաձեռնություններին և որոնումներին:

Գնալով ավելի նկատելի է դառնում, որ Եկմալյանը ձգտում է լայնացնել հայրենի երաժշտության ժանրային սահմանները, աշխատում է նպաստել ազգային երաժշտական լեզվի զարգացմանը և ազգային երաժշտական արվեստի հաղորդակցմանը եվրոպական բազմաձայն երաժշտության ձևերին:

Ստեղծված բարենպաստ այդ պայմաններում, այսպիսով, հայրենի երաժշտության հարստությունների խոր և հիմնավոր ուսումնասիրությունը դառնում է երիտասարդ Եկմալյանի ամենակարևոր խնդիրը: Ժամանակը փոխում է երիտասարդ Եկմալյանին, նկատելիորեն փոխվում են նրա երաժշտական մտահորիզոնը և աշխարհայացքը, նորովի դրսևորվում են նրա դեմոկրատական հայացքները հայ երաժշտության ուսումնասիրման ընթացքում: Ռուսները, որ մշտապես անչափ սիրել են իրենց հայրենի ժողովրդական երգերը, միաժամանակ և մեծ հարգանքով են վերաբերվել այլ ժողովուրդների մեղոսին, նրանց երգաստեղծության հարստություններին: Ռիմսկի-Կորսակովը՝ Եկմալյանի ուսուցիչը, իր բոլոր աշակերտներին սեր է ներարկել ժողովրդական մելոսի, նրա հարուստ և շատ ուսանելի ավանդույթների հանդեպ: Այդ մասին է գրում նրա աշակերտներից մեկը՝ կոմպոզիտոր Մ. Ֆ. Գնե-

սինը: «Ռիմսկի-Կորսակովը,- ասում է նա,- զարմանալի հետաքրքրություն էր ցույց տալիս ժողովրդական մեղեդիների նկատմամբ..որ դասարան էին բերում տարբեր ազգությունների պատկանող իր աշակերտները: Նա հաճույքով էր խոսում այդ մեղեդիների առանձնահատկությունների մասին, հոգատար կերպով օգնելով դրանց մշակմանը և այդ աշխատանքում խրախուսելով և՛ ռուսներին, և՛ ուկրաինացիներին, և՛ լատիշներին, և՛ էստոնացիներին, և՛ հայերին, և՛ հրեաներին»[1]:

Ռիմսկի-Կորսակովն աշխատել է Եկմալյանի ուշադրությունը մասնավորապես ուղղել հայ երաժշտության լադային կառուցվածքի ուսումնասիրման վրա: Լուսաբանելով այդ հարցը, երաժշտագետ Կարինե Խուդաբաշյանը հետևյալն է նշել. «Դեռևս կոնսերվատորիայում ուսանելու տարիներին Եկմալյանին զբաղեցնում է Պատարագի բազմաձայն մշակման հարցը, ուստի նա հիմնավոր կերպով պետք է յուրացներ եկեղեցական երգասացության մշակման մեթոդները ընդհանրապես, ինչպես նաև մշակեր իր սեփական սկզբունքները դրանում, որովհետև հայ եկեղեցական երաժշտությունը մեծապես տարբերվում է եվրոպականից: Կասկած չկա, որ արևելյան և մասնավորապես հայկական երաժշտության լադային կառուցվածքի նկատմամբ ուշադիր և զգուշավոր վերաբերմունքը Եկմալյանի մոտ ծագել է բնական լադային հարմոնիայի 19-րդ դարի խոշորագույն գիտնականներից մեկի՝ Ռիմսկի-Կորսակովի հետ սերտորեն շփվելու հետևանքով: Բնական լադային հարմոնիան հենց այն էր, ինչ հարկավոր էր Եկմալյանին՝ որպիսին նա կարողացավ ոչ միայն խորապես ընկալել, այլև ստեղծագործորեն զարգացնել»[2]:

Բացի հայոց Պատարագի հինավուրց մեղեդիների մշակումից, ուսանողական տարիներին Եկմալյանն ստեղծում է հայրենասիրական մի շարք խմբերգեր, հորինում ռոմանսներ ու երգեր[3], որ գրված էին Ռ. Պատկանյանի, Մ. Պեշիկթաշլյանի և այլոց բանաստեղծական տեքստերով, դաշնամուրային նոկտյուրն և մի սիմֆոնիկ նախերգանք, որ հավանաբար դիտվել է որպես փորձնական կարգի ուսումնական առաջադրանք:

---

[1] М. Ф. Гнесин, Мысли и воспоминания о Н. А. Римской-Корсакове, Москва, 1956, стр. 208.

[2] Карине Худабашян, Армянская музыка на пути от монодии к многоголосию, Ереван, 1977, стр. 148.

[3] Եկմալյանի արխիվում պահպանված և մեզ հասած երգերն ու խմբերգերը (մշակումներ ու ինքնուրույն գործեր) հրատարակվեցին մեծ ուշացումով՝ 1970 թվականին առանձին ժողովածուով, որ վերնագրված էր «Մակար Եկմալյան. խմբերգեր և մեներգեր»: Ժողովածուն կազմել են Շարա Տալյանը, Մ. Մուրադյանը և Ռ. Աթայանը, խմբագիրն է Ռ. Աթայանը: Ժողովածուն պարունակում է 48 ստեղծագործություն, որոնցից 45-ը հրատարակվել է առաջին անգամ:

Եկմալյանի մեներգերի և խմբերգերի մասին ավելի մանրամասն տե՛ս Կ. Խուդաբաշյանի մենագրության մեջ՝ "Армянская музыка на пути от монодии к многоголосию" (1977), Ն. Թահմիզյանի «Մակար Եկմալյան» գրքույկում (1981) և Ռ. Աթայանի ծավալուն հոդվածում՝ տպագրված «Պատմաբանասիրական հանդեսի» 1981 թվականի № 1–ում և № 2-ում:

1887-ից Եկմալյանն սկսեց աշխատել դիպլոմային մեծակտավ աշխատանքի վրա:

Մինչ այդ Եկմալյանը մասնակցել է «Քնարիկ մանկական» ժողովածուի նախապատրաստմանը, որ լույս տեսավ 1887-ին, որտեղ զետեղված էր 27 մանկական երգեր: Ժողովածուն կազմել էր Ղազարոս քահանա Հովսեփյանը, իսկ երգերը ներդաշնակել և խմբագրել էր Եկմալյանը: Ժողովածուի անվանաթերթում նշված էր. «Երգեր, պարերգեր և աղոթքներ փոքրահասակ երեխաների համար»: Ժողովածուի առաջաբանում հիշատակվել են այն աղբյուրները, որոնցից առնվել են երգերը: Հիմնականում աշխարհիկ երգերից կազմված այս ժողովածուն կարևոր ձեռնարկ էր դպրոցական երգեցողության համար:

1888 թվականի մայիսի 28-ին Եկմալյանը ավարտական քննություն է հանձնում Պետերբուրգի կոնսերվատորիայում: Նա հանդես է գալիս իր հորինած «Ուրզայի թափառումները» կանտատի կատարմամբ, որ գրված էր ըստ Մորից Հորնի հեքիաթի՝ սիմֆոնիկ նվագախմբի, երգչախմբի և մեներգիչների համար: Նվագավարում էր ինքը՝ կանտատի հեղինակը, որին լայն հնարավորություն էր տրված իր ավարտական ստեղծագործությունը բեմ հանելու կատարողական պատշաճ մակարդակով: Դա հայ երաժշտության պատմության մեջ տվյալ ժանրում գրված առաջին ստեղծագործությունն էր: Եկմալյանի կանտատի ամբողջական ձեռագիրը չի պահպանվել և մեզ է հասել նրա մի պատկերը միայն: Ինչպես իրավացիորեն նշել է անվանի երաժշտագետ Ալեքսանդր Ծահվերդյանը, այդ ստեղծագործությունը թեպետ և զուրկ է ազգային ոճի որևէ նշանից, միաժամանակ ունի գրավիչ այնպիսի արժանիքներ, որոնք վկայում են երիտասարդ հեղինակի եվրոպական ռոմանտիկական երաժշտության արտահայտչական հնարավորությունների օրգանական և գիտակցված տիրապետման մասին, դրսևորում պատկերավոր լիրիկական ապրումներ հաղորդելու, բնության պատկերներ նկարելու նրա կարողությունը:

1940 թվականին, երբ ես դեռ սովորում էի Լենինգրադի պետական կոնսերվատորիայում, ինձ հաջողվեց Լենինգրադի մարզային պատմության արխիվում գտնել Մակար Եկմալյանի ավարտական դիպլոմի պատճենը՝ ստորագրված կոնսերվատորիայի տնօրենի՝ Ա. Ռուբինշտեյնի, Եկմալյանի ուսուցիչների՝ Ն. Ռիմսկի-Կորսակովի, Ն. Սոլովյովի, Յու. Իոգանսենի, Ա. Լյադովի, Լ. Սակետտիի և այլոց կողմից: Դիպլոմը վկայում էր, որ «Մակար Գրիգորի Եկմալյանը Պետերբուրգի կոնսերվատորիայում սովորելով պրոֆեսորներ Ռիմսկի-Կորսակովի, Սոլովյովի և Իոգանսենի դասարաններում, 1888-ի մայիսին ավարտեց իր երաժշտական կրթության դասընթացը՝ ըստ սահմանված ծրագրի և ավարտական քննությամբ ի հայտ բերեց հետևյալ առաջադիմությունը. մասնագիտորեն ուսումնասիրելու համար ընտրված գլխավոր առարկայից՝ կոմպոզիցայի տեսությունից՝ «լավ» և երկրորդական (պարտադիր) առարկաներից՝ դաշնամուրային նվագ՝ «հույժ բավարար», գործիքավորումից՝ «լավ», և երաժշտության պատմությունից՝ «շատ լավ»: Գիտական կրթության

մասին ներկայացրել է Ամենայն Հայոց Պատրիարքական Մայր Աթոռ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի ավարտական վկայականը...

Մակար Եկմալյանին շնորհվում է ազատ արվեստագետի կոչման դիպլոմ»:

Կոնսերվատորիայում սովորելուն զուգընթաց Եկմալյանը դեռևս 1881-ից ստանձնում է Պետերբուրգի հայոց եկեղեցու երգչախմբի ղեկավարությունը, որի հետ նրա կատարած համբերատար աշխատանքը ցանկալի արդյունքներ տվեց, արժանանալով համընդհանուր ուշադրության: Եկմալյանի ղեկավարած այս երգչախումբն է առաջին անգամ հնչեցրել հայ եկեղեցական մեղեդիների եկմալյանական բազմաձայն մշակումների առաջին նմուշները, որոնք կատարվել են հայոց եկեղեցական տոների և կիրակնօրյա ժամերգությունների ընթացքում: 1887-ին, սակայն, Եկմալյանը ստիպված է լինում հրաժարվել եկեղեցական խմբավարի պաշտոնից, որը թելադրված էր կոնսերվատորիայի ավարտական քննությանը լրջորեն նախապատրաստվելու հույժ անհրաժեշտությամբ: Այսպիսով, ավարտական տարում նա նորից նյութական միջոցներ չուներ, ուստի պետք է փորձեր վերականգնել իրեն անցյալում տրված թոշակը: Այդ կապակցությամբ Եկմալյանը դիմում է ուղղում Հայոց Եկեղեցական Խորհրդին (1887-ի դեկտեմբերին), խնդրելով իրեն թոշակ նշանակել 1888-ի հունվարից առ 1-ը հուլիսի, որպեսզի կարողանա, ինչպես ինքն է գրում «շարունակել և ավարտել կրթությունը կոնսերվատորիայում»:

Եկմալյանի դիմումին ընթացք տալու համար Եկեղեցական Խորհուրդը հարցում է ուղղում կոնսերվատորիային և արքունական կապելլային, խնդրելով կարծիք տալ Եկմալյանի մասին: Արքունական կապելլայի ղեկավարը՝ Միլի Բալակիրևը, հարցմանը իր դեկտեմբերի 16-ի գրությամբ պատասխանում է այսպես. «Սույնը ներկայացնող Մ. Գ. Եկմալյանը ցույց է տվել իր օգտակարությունը տեղիս հայոց եկեղեցում՝ կազմելով եկեղեցական երգչախումբ, որն իր ղեկավարությամբ կիրակնօրյա և տոնական ժամերգությունների ժամանակ կատարում էր Հայոց Եկեղեցու հնօրյա երգեցողությունը՝ իր ներդաշնակմամբ և Աստծո տաճարին պատշաճող վեհությամբ: Հետևաբար ես անձամբ խիստ օգտակար եմ գտնում պարոն Եկմալյանին հնարավորություն տալ՝ ավարտելու իր երաժշտական կրթությունը տեղիս կոնսերվատորիայում, քանի որ կարևոր գիտելիքների տիրապետման հետ միաժամանակ կավելանա նրա բերած օգուտը ի փառս Ս. Եկեղեցու և նրա արժանահարգ ծիսակատարության» (տե՛ս «Էջմիածին» հանդեսի 1970 թ. № 10):

Եկեղեցու Խորհրդի հարցմանը արձագանքել էր նաև կոնսերվատորիայի տնօրենը՝ Անտոն Ռուբինշտեյնը, տեղեկացնելով, որ ուսանող Եկմալյանը կոնսերվատորիայում իր ավարտական քննությունը պետք է հանձնի 1888-ի մայիսին, և որ ամենայն հավանականությամբ այն հաջող կանցնի[4]: Եկմալյանի մշակած հոգևոր երաժշտությունը ժամանակին լսել և բարձր է գնահատել կոմպոզիտորի վաղեմի

[4] Այսպիսով Եկմալյանի խնդրանքը ի վերջո բավարարվում է և Եկեղեցական Խորհրդի որոշմամբ նրան հատկացվում է թոշակ՝ չորս ամիսների համար:

ընկերն ու բարեկամը՝ լեզվաբան Ստեփան Մալխասյանցը, որը սովորել է Պետերբուրգի համալսարանում և այն ավարտել է 1889-ին: Հանդես գալով Եկմալյանին նվիրված մի հոդվածով, որ տպագրվել է «Մշակ»-ի 1892 թվականի № 44-ում, նա վկայել է, որ «պարոն Եկմալյանը եռաձայն մշակած ունի մեր ամբողջ Պատարագը... Ներքոստորագրյալս մի քանի անգամ Պետերբուրգում լսել եմ այդ շարադրությունը՝ երգված միայն 10-12 հոգուց բաղկացած խմբով: Կարող եմ խոստովանել, որ ես զմայլվելով լսեցի պարոն Եկմալյանի կազմած Պատարագի արարողությունը, որտեղ բուն եղանակները անվթար պահպանված լինելով՝ ներկայացված են եվրոպական կանոնավոր ներդաշնակությամբ, համաձայն եղանակի ոգուն, մի պայման, որին չի հաջողել հասնել եվրոպացի երաժշտապետերին: «Սուրբ-սուրբը», «Տեր ողորմյան», «Հայր մերը» մինչև այժմ էլ հնչում են ականջիս»:

Անկարելի է շրջանցել Եկմալյանի խմբավարական արվեստի նկատմամբ ժամանակակիցների ունեցած հիացական վերաբերմունքը, որպիսին դրոշմված է Պետերբուրգի հայ համայնքի ներկայացուցիչների 1889-ին գրած նամակներում (հրատարակվել են «Էջմիածին» հանդեսի 1970-ի № 10-ում): Դրանք վկայում են, թե որքան խորն է եղել Եկմալյանի ղեկավարած երգչախմբի հեղինակությունը Պետերբուրգի հայության մեջ, ընդգծում էր Եկմալյան խմբավարի բացառիկ ծառայությունը հայ եկեղեցական երաժշտության բարձրարվեստ կատարման մեջ:

Ահա մի հատված պետերբուրգյան հայ համայնքի ներկայացուցիչների առաջին նամակից՝ գրված 1889-ի հոկտեմբերի 13-ին. «Անցել է բավական երկար ժամանակ այն օրից, երբ մենք՝ հայ հասարակությունս, զրկված ենք մնացել այն քաղցր ու հոգեզմայլ երգեցողությունից, որ մեզ տալիս էր երաժիշտ Եկմալյանի կազմած խումբը, որը յուր տեսակի մեջ աննման էր և բոլորովին նոր բան՝ ամբողջ հայության մեջ: Մենք լսում էինք մի երգեցողություն, որ հատուկ է միայն լուսավորյալ ազգերին և ճաշակը զարգացած հասարակության: Երբ օտարները մտնում էին մեր եկեղեցին, սքանչանում էին լսելով այդ երգեցողությունը և յուրյանց արժանավորյալ հարգն էին մատուցանում հայ ժողովրդյան: Բայց այժմ, ցավոք սրտի, պետք է խոստովանել, որ այդ օրվանից հետո մեր երգեցողությունը նման է մի կատարյալ քաոսի»: Նամակը եզրափակվում է Եկմալյանին նորից հրավիրելու թախանձագին խնդրանքով: Նամակը ստորագրել են Պետերբուրգի հայության ներկայացուցիչները՝ թվով 23 հոգի, որոնց մեջ՝ Հ. Տեր-Ստեփանյանցը, Ք. Բաշինջաղյանը, Ս. Հովսեփյանը, Գ. Միրիմանյանցը, Ս. Ախշարումյանցը, Ա. Լիլիպարյանը, Կ. Փարեմուզյանը, Կ. Լիսինյանցը և այլ անձիք:

Հաջորդ նամակը՝ գրված նույն թվականի հոկտեմբերի 22-ին, կրկին այդ նույն հարցն է շոշափում, բայց այս անգամ նամակի հեղինակների թվում, բացի Տեր-Ստեփանյանցից, նշված են նոր ստորագրություններ, ինչպիսիք են Գենիբեկովը, Բաղդասար Գոճյանը, Տիգրան Տեր-Մաթևոսյանը, Հուսիկյանը, Գ. Աստվածատրյանը, Հ. Գաբայանցը, Ալ. Սարիբեկյանը և այլք (թվով 26 ստորագրություն): Պետերբուրգի հայության բնիկ ծխականները այստեղ անհրաժեշտ են համարել նորից

դիմել Հայոց Եկեղեցական Խորհրդին, նրա ուշադրությունը կրկին հրավիրելով հայոց եկեղեցում հնչող տգեղ և աններդաշնակ երգեցողության վրա:

«Ահա երկու տարի անցավ այն օրից,- գրում են նրանք,- երբ մենք ամենայն բավականությամբ և խոր տպավորության տակ ամեն կիրակի հաճախում էինք եկեղեցի՝ լսելու այն քաղցր ու ներդաշնակ երգեցողությունը, որ պատրաստել էր պ. Եկմալյանը: Բայց դժբախտաբար ոչնչացավ այդ գեղեցիկ խումբը և հրավիրվեցան գործին անհմուտ և անանուն խմբապետներ, որոնք չկարողացան արդարացնել յուրյանց պարտականությունը, աղավաղեցին եկեղեցվո երգեցողությունը ամենատգեղ եղանակներով»: Նամակի ստորագրողները խոնարհաբար խնդրում են անպայման ընդառաջել իրենց նվիրական ցանկության իրականացմանը և նորից հրավիրել Եկմալյանին որպես խմբավար աշխատելու:

Ավարտելով կոնսերվատորիան, Եկմալյանը, սակայն, որոշում է մնալ Պետերբուրգում և ավարտի հասցնել Պատարագի մեղեդիների մշակման գծով իր վաղուց սկսած աշխատանքը, որի նախնական արդյունքները արդեն արժանացել էին Պետերբուրգի հայ հասարակության ջերմ հավանությանը: Նա Պետերբուրգում մնում է ևս երեք տարի, բայց այս անգամ էլ Եկմալյանի նյութական դրությունը նորից վատանում է և, չնայած դրան, նա եռանդով առաջ էր տանում իր աշխատանքը, անհրաժեշտության դեպքում ստանալով իր հեղինակավոր բարեկամների աջակցությունն ու խորհուրդները: Նրանց թվում էր մեծահամբավ Միլի Բալակիրևը, որի ղեկավարած արքունական կապելլայի համերգները մշտապես հիացրել և հրապուրել են Եկմալյանին[5]:

Պետերբուրգյան հայության մշակութային առօրյայում ամենահիշարժան իրադարձություններից մեկը 1889-ի տարեմուտի երեկոն էր, որ տեղի ունեցավ դեկտեմբերի 30-ին՝ նշանավոր Մարիինյան թատրոնում: Դրա կազմակերպմանը եռանդուն մասնակցություն է ունեցել Եկմալյանը, որն առաջին անգամ հանդիսականների դատին է հանձնել իր նոր հորինած սյուիտը, որի կատարմամբ հանդես է եկել ռուս երիտասարդ երգիչներից կազմված երգչախումբը (խմբավարը հեղինակն էր): Երեկոյի ծրագրում, բացի Եկմալյանի սյուիտից, ներկայացվեց «Վա՜յ իմ կորած հիսուն ոսկին» վոդևիլը: Համերգին իրենց մասնակցությունը բերեցին նաև Պետերբուրգի կոնսերվատորիայում սովորող տաղանդավոր երգչուհիներ Նադեժդա Պապայանը և Մագթաղինե Գենջյանը: Դա մի անմոռանալի երեկո էր, որ արտակարգ բավականություն է պատճառել բոլոր հանդիսականներին:

---

[5] Ի դեպ, ասենք, որ Բալակիրևը իր հայ բարեկամուհի Սալոմե Լայանային (Լալայանին) ուղղած նամակներից մեկում (գրված 1897-ի նոյեմբերի 15-ին) ուրախությամբ է նշել Եկմալյանի Պատարագի հրատարակման փաստը, մատնանշելով նաև, որ Պատարագի մեղեդիների մշակման աշխատանքում նա Եկմալյանին «որոշ ցուցումներ է տվել»: Բալակիրևը հայոց Պատարագը համարել է հետաքրքրական և նշանակալի նորույթ, որ «մոտեցնում է հայ եկեղեցական երգեցողությունը ռուս եկեղեցական երաժշտության բնույթին» (տե՛ս Ալ. Թադևոսյանի «Էջեր հայ-ռուսական երաժշտական կապերի պատմությունից», Երևան, 1977, էջ 35):

Եկմալյանի սյուիտը, բաղկացած յոթ կտորից, աչքի ընկավ հայրենասիրական և ժողովրդական երգերի խղճամիտ ընտրությամբ, դրանց գեղեցիկ համակցմամբ, արժանանալով ներկաների բուռն հետաքրքրությանը: Սյուիտի առաջին համարը «Ողջույն տվեք իմ հայրենյաց կիսակործան տաճարներուն» երգն էր, որ կարծես դարձավ ամբողջ ստեղծագործության բնաբանը: Նրան հաջորդեցին «Ցոթն օր, յոթ գիշեր» և «Մտեր էս էգին» ժողովրդական արտահայտիչ երգերը, ապա՝ Պետրոս Ղափանցու հորինած տաղը՝ «Առավոտյան քաղցր ու անուշ»-ը, որին հաջորդեց «Ձայն մը հնչեց Էրզրումեն» առնական երգը: Սյուիտի նախավերջին համարը անպաճույճ ժողովրդական երգ էր, որ վերնագրված էր «Ոլոր-մոլոր կուրն էր գալիս»: Սյուիտը եզրափակում էր հայրենասիրական ջերմ շնչով գրված «Կեցցե Զեյթուն» հնչեղ ու զվարթ քայլերգը: Եկմալյանի այս սյուիտում արտացոլվեց կոմպոզիտորի տաղանդի ուժը, նրա գեղարվեստական ճաշակը և ստեղծագործական վարպետությունը:

Մակար Եկմալյանը միշտ էլ հպարտությամբ է նշել, որ ավարտել է Պետերբուրգի կոնսերվատորիան, որ եղել է մեծահամբավ Ռիմսկի-Կորսակովի աշակերտը: Եվ ինչպե՞ս նա կարող էր չհպարտանալ դրանով, մոռանալ այն ամենը, ինչ նա ստացավ պետերբուրգյան ուսումնառության տարիներին, ինչը նրան դարձրեց հիմնավոր կրթություն ստացած հասուն երաժիշտ, որ համարձակորեն ստեղծագործական ասպարեզ մտավ՝ զինված մասնագիտական խոր ու հարուստ գիտելիքներով: Պետերբուրգը Եկմալյանին հնարավորություն տվեց գիտականորեն խորապես ըմբռնել և բացահայտել հայրենի երաժշտության ինքնատիպությունը. այդ հիման վրա նա կարողացավ մշակել իր սեփական սկզբունքները և հաջողությամբ կիրառել դրանք հայոց Պատարագի հինավուրց մեղեդիների մշակման ամբողջ ընթացքում: Եկմալյանի Պատարագը հանդիսացավ նրա գլուխգործոցը, նրա ամբողջ ստեղծագործության գլխավոր արդյունքը, որ կարևոր և շրջադարձային մի խոշոր առաջքայլ էր նախակոմիտասյան շրջանի հայ երաժշտության պատմության մեջ: Եկմալյանն իր Պատարագը հրատարակեց երեք տարբերակով (1896)՝ արական եռաձայն խմբի, արական քառաձայն խմբի և խառն քառաձայն խմբի համար: Երեքն էլ լիարժեք տարբերակներ են, որոնց մեջ հստակորեն արտացոլված են հայոց ազգային եկեղեցական հինավուրց մեղեդիների բազմաձայն մշակման մեջ Եկմալյանի ցուցաբերած անվիճելի պրոֆեսիոնալիզմը, նրա բարձր ճաշակը ընտրված բազմազան նյութի հետևողական մատուցման մեջ:

Բազմաձայն այդ Պատարագը, հյուսված հիմնականում հոմոֆոն-ակկորդային սկզբունքով, աչքի է ընկնում իր ամբողջականությամբ, ընտրված մեղեդիների և նրանց տարբերակների բազմազանությամբ, հարմոնիկ պլանի պարզությամբ ու հստակությամբ: Եկմալյանն այստեղ մեզ է ներկայանում երգչախմբի հնչողական հնարավորությունների և միջոցների իր փայլուն իմացությամբ, որը հնարավորություն է տվել նրան հետևողականորեն պահպանել շարադրանքի ոճը՝ հարազատ մնալով ընտրված նյութի ազգային ոգուն:

Եկմալյանի Պատարագում ձայնեղանակային ընդհանուր զարգացումը հետևողական առաջընթաց մի գիծ է գոյացնում հնչողության փոքր-ինչ մռայլ, միգապատ տեղանքից մինչև առավել պայծառ, լուսաշող ոլորտները: Ներդաշնակված Պատարագի երեք տարբերակներից վերջին երկուսը կապված են առաջինի ոճով այնպես, որ դրանց հիմքը եռաձայն արական խմբի համար գրված առաջին տարբերակն է: Եվ իրոք, Եկմալյանը մեծ զգուշություն է հանդես բերում Պատարագը ներդաշնակելիս. գիտակցաբար խուսափելով իր տիրապետած արտահայտչական միջոցները հայ երաժշտության մեջ մեքենաբար ներմուծելուց, բավականանալով նրանցով միայն, որոնց կիրառումը անխաթար կպահեր մայր եղանակների ոճն ու ոգին»[6]

Այսպիսով, Եկմալյանը նոր ճանապարհ հարթեց և նոր նախադրյալներ ստեղծեց մեր ազգային պրոֆեսիոնալ երաժշտության հետագա վերելքի համար:

[6] Տե՛ս Ն. Թահմիզյան, Մ. Եկմալյան, Երևան, 1981, էջ 74-75:

# ԱՐԺԵՔԱՎՈՐ ՎԱՎԵՐԱԳԻՐ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ 1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## (ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՆԱՄԱԿԸ ՊՐՈՖԵՍՈՐ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԻՆ)

1920-ական թվականները Հայ Եկեղեցու բազմադարյան պատմության ամենածանր և ծանր ժամանակաշրջաններից են: Վերջին մի քանի տարիներին որոշ փորձեր են կատարվել այդ թվականների Հայ Եկեղեցու պատմության վավերագրերը հրատարակելու[1] և առանձին ուսումնասիրություններ գրելու[2] ուղղությամբ: Այնուհանդերձ, դեռևս բավականին աշխատանք կա կատարելու, և թեման սպասում է իր անկողմնակալ ու ներհուն ուսումնասիրողին: Այս առումով յուրաքանչյուր նորահայտ վավերագիր մեծ հետաքրքրություն է ներկայացնում և արժանի է առանձնակի վերաբերմունքի: Այսու ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում Հայ Եկեղեցու ականավոր գործիչներից մեկի՝ Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանի (1865-1939)՝ պրոֆ. Ն. Ադոնցին ուղղված նորահայտ նամակը, որը թվագրվում է հենց 1920-ական թվականների կեսով:

Մեսրոպ արքեպս. Տեր-Մովսիսյանը տարբեր տարիներ եղել է Գևորգյան ճեմարանի վերատեսուչ, Էջմիածնի մատենադարանապետ, Վրաստանի, Աստրախանի և Պարսկա-հնդկաստանյան թեմերի հոգևոր առաջնորդ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ: Նա դասավանդել է Գևորգյան ճեմարանում, հանդիսացել Հայաստանի համալսարանի հիմնադիրներից, եղել պատմագրական ֆակուլտետի պրոֆեսոր և առաջին դեկան: Նշանավոր և անկրկնելի է նաև նրա հայագիտական ժառանգությունը, որը հիացմունք, զարմանք և պատկառանք է պատճառում: Հատկապես նշելի է նրա հեղինակած՝ ամբողջ աշխարհի հայերեն ձեռագրերը ներկայացնող «Հայերեն ձեռագրերի ընդհանուր ցուցակ» անտիպ մնացած վիթխարի աշխատությունը[3]:

---

[1] Հատկապես կառանձնացնեինք բազմահատորյան Ս. Բեհբուդյանի աշխատասիրությամբ լույս տեսած Հայ Եկեղեցու այդ շրջանի պատմությանը վերաբերող հատորաշարը՝ «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության» (1921-1938 թթ.), հատ. Ա, Երևան, 1994, հատ. Բ. «Խորեն Ա. Մուրադբեկյան Կաթողիկոս Ամենայն Հայոց», Երևան, 1996, հատ. Գ. «Արտակ եպիսկոպոս Սմբատյանց (Տաուշեցի)», Երևան, 1997: Տե՛ս նաև Ա. Մանուկյան, Հայ Առաքելական Եկեղեցու բռնադատված հոգևորականները 1930-1938 թթ. (ըստ ՊԱԿ-ի փաստաթղթերի), Երևան, 1997:

[2] Ստ. Ստեփանյանց, Հայ Առաքելական Եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Երևան, 1994 և այլն:

[3] Մեսրոպ արքեպս. Տեր-Մովսիսյանի կենսագործության և հայագիտական վաստակի ընդհանուր

1920-ական թվականների սկզբներին խորհրդային կառավարության վարած հետևողական հակաեկեղեցական քաղաքականության պատճառով Ս. Էջմիածինը և ընդհանրապես Հայ Եկեղեցին հայտնվեցին չափազանց անմխիթար վիճակում: Դրությունն էլ ավելի էր բարդանում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի (1912-1930) խոր ծերության և բազմիցս կրկնվող հիվանդությունների պատճառով: Կաթողիկոսական իշխանության թուլացումից անմիջապես փորձեցին օգտվել եկեղեցական զանազան «բարենորոգչական» հոսանքները, որոնք պետական հովանավորությամբ Էջմիածնից սկսեցին խլել նրա եկեղեցիներն ու մատուռները, անգամ փորձեցին ներթափանցել Մայր Աթոռ և Սինոդ: Այս ճակատագրական պահին է, որ Մայր Աթոռի վեց առավել հեղինակավոր արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ կաթողիկոսին առաջարկում են ստեղծել Գերագույն Հոգևոր Խորհուրդ, որը միասնաբար կվարեր կաթողիկոսարանի գործերը և միասնաբար կընդդիմանար ներքին և արտաքին բռնաճնշումներին:

Հրատարակվող նամակը, որ շոշափում է այս խնդիրները, հասցեագրված է նշանավոր պատմաբան, Ս. Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Նիկողայոս Ադոնցին (1871-1942): Ն. Ադոնցը իր գործունեության տարբեր շրջաններում միշտ էլ մոտ է կանգնած եղել Հայ Եկեղեցուն: Երկար տարիներ շարունակ նա եղել է Ս. Պետերբուրգի Հայկական եկեղեցական խորհրդի անդամ ու ապա՝ նախագահ: Բազմիցս նյութապես օժանդակել է Գևորգյան ճեմարանի, Մայր Աթոռի, Երևանի և մյուս թեմական դպրոցների գործունեությանը[4]: 1920 թ. գարնանից հայտնվելով վտարանդիության մեջ, նա գործուն մասնակցություն է ցուցաբերել փարիզահայ եկեղեցական կյանքին, հնարավորության սահմաններում աշխատել է օգտակար լինել Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, միջոցներ հայթայթել նրա ֆինանսական անմխիթար վիճակը ինչ-որ չափով թեթևացնելու համար: Ահա նման առաջարկությամբ է, որ Ն. Ադոնցը դիմել է Մեսրոպ արքեպս. Տեր-Մովսիսյանին, որի պատասխանն էլ հրապարակվող սույն վավերագիրն է:

Նամակի բնագիրը, որ պահվում է Բեյրութի Համազգայինի գրական պահոցում գտնվող պրոֆ. Ն. Ադոնցի թողոնում (պահարան I, գզրոց Ե, Ա-8), հրապարակվում է առանց միջամտությունների: Անհրաժեշտության դեպքում մեր կողմից լրացված բառերն առնված են < > մեջ:

*ՊԵՏՐՈՍ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

---

Նկարագիրը տրված է Գ. Տեր-Վարդանյանի «Մեսրոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյան» արժեքավոր աշխատության (Երևան, 1999) մեջ:

[4] Ն. Ադոնցի գործունեության այս և մյուս կողմերի, նրա հայագիտական մնայուն վաստակի արժեքավորումը տե՛ս մեր «Նիկողայոս Ադոնց» ուսումնասիրության մեջ («Նիկողայոս Ադոնց, Հայկական հարց», Երևան, 1996, էջ 5-24):

1925 թ. 2 յունիսի
ի Ս. Էջմիածին

Սիրելի Ադոնց,

Քանի՜ տարիներ են անցել: Նամակդ անակնկալ էր եւ ինձ յուզեց: Ծերունիներս[1], մանաւանդ մեր կացութեան, ապրում են յիշողութիւններով: Չէ՞ որ մեր կեանքն արդէն անցեալին է պատկանում: Քո նամակը յիշողութիւնների շարան առաջ բերեց: Քո մասին տեղեկութիւններ ունէի. «կարծեմ», «լսել եմ», «տեսել եմ» եւ ահա քո նամակը. կատարեալ հաստատիացում՝ Ադոնցը ապրում է Պարիզի լաւագոյն թաղում[2], քաջառողջ է, կապուած գիտութեան հետ[3] եւ մտահոգուած է մեր հինաւուրց հիմնարկութեան վիճակով[4]: Անհամբեր կը սպասեմ, թէ երբ պիտի գրես զբաղմունքներիդ մասին[5]:

---

[1] Նամակի գրության պահին Մեսրոպ արքեպս. Տեր-Մովսիսյանը 60 տարեկան էր:

[2] 1920-ական թվականների առաջին կեսին Ն. Ադոնցը Փարիզում բնակվում էր նախ Montmartre և ապա՝ Colonel թաղամասերում (տե՛ս Վիեննայի Մխիթարյանների դիվան, Ն. Ադոնցի ֆոնդ, Ն. Ադոնցի նամակը հայր Ն. Ակինյանին և այլոց): Հետաքրքիր է նշել, որ Ավ. Իսահակյանը կնոջը՝ Սոֆյա Իսահակյանին 1926 թ. փետրվարի 25-ին հղված նամակում հարկ է համարել չեշտելու, թե ծանոթ շատ հայերի տները «ծակեր են, մութ, զզվելի: ... Լավ տուն ունի Ադոնցը» (տե՛ս Ա. Իսահակյան, Երկերի ժողովածու 6 հատորով, հատ. 6, Երևան, 1979, էջ 225):

[3] Տարագրության առաջին տարիներին (1922-1925 թվականներին) Ն. Ադոնցը հրապարակում է «Քրդերի ներթափանցումը Հայաստան» անգլերեն հոդվածը (տե՛ս «The New Armenia», New York, 1922, vol. 14, № 1, էջ 4-6 ), «Հայոց եկեղեցու Հայսմավուրքը» [տե՛ս «Revue de L' Orient Chretien»(=ROC), Paris, 1924 t. IV (XXIV), էջ 211-218 ], «Ս. Գրիգոր Լուսավորիչի հարցումը և Եզնիկը» [տե՛ս նույն տեղում, Paris ,1925-1926, t. V (XXV), էջ 309-377 (առանձին մենագրությամբ՝ Փարիզ, 1927)] ֆրանսերեն ուսումնասիրությունները, «Մաշթոց և նրա աշակերտները ըստ օտար աղբյուրների» մենագրությունը (Վիեննա, 1925), «Քննական նշմարներ Եզնիկի մասին» հոդվածաշարը (տես՝ «Բազմավեպ», 1925, էջ 196-200, 294-298, 366-371, 1926, էջ 69-72, 108-113) և այլն:

[4] Ակնարկը վերաբերում է Մայր Աթոռին և ընդհանրապես Ս. Էջմիածնին: 1923-1925 թթ. Փարիզում բնակվող մի խումբ ազգային-մշակութային գործիչներ (Ավ. Ահարոնյան, Ն. Ադոնց, Ար. Ղուկասյան, Ս. Վրացյան, Ա. Համըմյան և ուրիշներ) հանձնախումբ են ստեղծում Մայր Աթոռին ֆինանսական օժանդակություն ցույց տալու նպատակով:

[5] Այդ շրջանում Ն. Ադոնցի գիտական հիմնական զբաղմունքների արդյունքների մասին կարող են գաղափար տալ «Հայրենիք» ամսագրի 1926-1927 թթ. համարներում տպագրված «Հին Հայոց աշխարհայացքը», «Քաղաքական հոսանքները հին Հայաստանում», 1927 թ. «Հանդես ամսօրեա»-ում լույս տեսած «Կորյունի մասին» հոդվածաշարն ու հատկապես «Հայոց եկեղեցու տոներն ու սրբերը» ֆրանսերեն ծավալուն ուսումնասիրությունը (տե՛ս ROC, 1927-1928, t. VI (XXVI), էջ 74-104, 225-278):

Նամակդ կիսապաշտօնական է: Ստացած երեկոն հաւաքւեցինք՝ Խորէն[6], Մեսրոպ[7], Բագրատ[8], Գարեգին[9] եւ Գիւտ[10] եպիսկոպոսներովս (Զաւէն Սրբազանը[11] մայիսի 18-ի գիշերը կաթուածահար մեռաւ), Գերագոյն Խորհրդի[12] անդամ-

---

[6] Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանին, հետագայում Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորեն Ա (1873-1938), եղել է Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ (1908-1924), Հայրապետական լիազոր ներկայացուցիչ (1921-1930), Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղակալ (1923-1930), միաժամանակ՝ Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող և լուսարարապետ: 1930 թվականից՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս:

[7] Խոսքը վերաբերում է Մեսրոպ արքեպս. Տեր- Մովսիսյանին:

[8] Բագրատ արքեպիսկոպոս Վարդազարյան (1869-1938), եղել է Պարսկա-Հնդկաստանյան թեմի առաջնորդ (1901-1910), Գևորգյան ճեմարանի վերատեսուչ (1910-1914), Շամախու թեմի առաջնորդ (1916-1921), Հոգևոր Սինոդի նախագահ (1924-1928): Անհիմն բռնադատվել ու գնդակահարվել է 1938 թվականին [տե՛ս Ա. Մանուկյան, Հայ Առաքելական Եկեղեցու բռնադատված հոգևորականները 1930-1938 թթ. (ըստ ՊԱԿ-ի փաստաթղթերի), էջ 50-59]:

[9] Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան, հետագայում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Ա (1867-1952), եղել է Ս. Էջմիածնի վանքի մատենադարանապետ (1896-1906), Գևորգյան ճեմարանի վերատեսուչ (1905-1906,1916-1917), «Արարատ» ամսագրի խմբագիր (1901-1908, 1918-1919), Ղրիմի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ (1927-1934), Եվրոպայի Հայրապետական պատվիրակ (1934-1938), Ամերիկայի թեմի առաջնորդ (1938-1943), Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս (1943-1952):

[10] Գյուտ եպիսկոպոս Տեր-Ղազարյան (1877-1927), եղել է «Արարատ» ամսագրի պատասխանատու խմբագիր (1916-1918), Եղբայրական օգնության Գլխավոր կարգադիր հանձնաժողովի փոխնախագահ (1916-1917), Մայր Աթոռի տպարանի վարչության նախագահ (1917-1919), Մայր Աթոռի դիվանապետ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ (1924-1927): 1927 թվականի հուլիսի սկզբներին Պետքաղվարչությունը քաղաքական անհիմն մեղադրանքներով ձերբակալել է նրան, բայց մի քանի օր անց, հուլիսի 18-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոսի միջնորդությամբ ազատ է արձակվել [տե՛ս «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության» (1921-1938 թթ.), կազմեց՝ Ս. Բեհբուդյան, էջ 116]: Սակայն դեկտեմբերի 1-ին խորհրդավոր պայմաններում մահացել է վանքի իր բնակարանում: Ենթադրվում է, որ նրան սպանել են հատուկ ծառայությունների գործակալները (տե՛ս Ստ.Ստեփանյանց, Հայ Առաքելական Եկեղեցին ստալինյան բռնատիրության օրոք, էջ 59-61):

[11] Զավեն եպիսկոպոս Բաբայան (1876-1925), եղել է Ղարաբաղի թեմի առաջնորդ, Ս. Հռիփսիմե վանքի վանահայր (1917), Կարինի, Դերջանի և Երզնկայի հոգևոր տեսուչ (1917-1918), Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ (1924-1925):

[12] Խոսքը վերաբերում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահության ներքո գործող Հայոց համաեկեղեցական-վարչական բարձրագույն մարմնին՝ Գերագույն Հոգևոր Խորհրդին: Այն ստեղծվել է Գևորգ Ե Կաթողիկոսի 1924 թ. հունվարի 1-ի Կոնդակով՝ «Գերագոյն Հոգ<ևոր> Խորհուրդ Հայոց Սուրբ Էջմիածնի կազմեալ կայ ընդ նախագահութեամբ Մերով ի վեցից փորձառու արքեպիսկոպոսաց եւ եպիսկոպոսաց» (տե՛ս «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության», գիրք Բ, կազմեց Ս. Բեհբուդյան, էջ 166-167): Հետաքրքիր է, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը և հատուկ ծառայությունները չափազանց բացասաբար են վերաբերվել Գերագույն Հոգևոր Խորհրդի գործունեությանը, որի ապացույց կարող է լինել ՀՍԽՀ Կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահ Ա. Կարինյանի՝ «Գերագույն Խորհուրդը Խորհրդային Հայաստանի դեմ» գրպարտչական ելույթը (տե՛ս «Խորհրդային Հայաստան» օրաթերթ, Երևան, 1927, № 217): Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ն ստիպված է եղել 1927 թվականի հոկտեմբերի 7-ին հատուկ բողոք-հերքում հղել ՀՍԽՀ Կենտգործկոմին, որտեղ շեշտել է, թե

ներով, կարդացինք եւ երկար վշտացած եւ մասամբ դառնացած զրուցեցինք: Ինքնահաւանութիւնը արատ է, հաւաքուածներս ազատ չենք այդ արատից. վշտացած հարցնում էինք, մի՞թէ այդ հինգ անունները. թէ՛ իբրեւ անհատներ, թէ՛ մանաւանդ համերաշխ մի խորհրդի մէջ համախմբուած, ի վիճակի չեն պատուար եւ պատնէշ լինելու ամենատեսակ յարձակումների եւ զրախօսութիւնների դէմ: Մարդիկ ցանկանում են օգնել Էջմիածնի վանքին, բայց կասկած կայ, թէ ինչպէս անել: Քանի որ քո միջոցով ներկայ վարչութեան ձեւի մասին նոր տեղեկութիւններ են պահանջւում եւ հաւատացած, որ այդ տեղեկութիւն պահանջողները, անշուշտ, Հայոց Եկեղեցու բարեկամներ են, գրեմ Էջմիածնի վերջին տարիների անցուդարձի համառօտ պատմութիւնը. իմանալով, որ ասածներս նորութիւն չեն լինելու:

Նորընծայ Գրիգորիս Սրբազանը[13] ամիսներ ապրեց մեր մէջ. Էջմիածնի նախկին վիճակին քաջածանօթ, իր պատրաստութեամբ եւ ազատ որեւէ կանխակալ կարծիքներից, պէտք է բաւարարէր ամենքին: Նոր բան չպիտի ասեմ. նամակս թերի է մնալու: Իրական կացութեան լաւագոյն նկարագրութիւնը լսեցէք Գրիգորիս Սրբազանից:

Մօտ երկու տարի առաջ[14], հեռուն չգնամ, կաթողիկոսը ծանր հիւանդացաւ: Միաբանութիւնը իր ունեցած վերջին դրամը ծախսեց նրա ապաքինման համար: Կաթողիկոսի հիւանդութիւնը, նրա ութսունամեայ հասակը[15], ցարական Պոլոժենիայի[16] ոչնչացումը, մի քանի ներքին եւ արտաքին ծանր պատճառներ[17] Եկեղեցու

---

«Էջմիածինը իր եկեղեցական-վարչական կազմակերպությամբ, հատկապես իմ նախագահության ներքո գործող Գերագույն Հոգևոր Խորհուրդը չի եղել երբեք Խորհրդային Հայաստանի դեմ, այլ ընդհակառակը. միշտ եղել է և է օրինապահ, կոռեկտ և բարյացակամ Խորհրդային Հայաստանի և մեր կառավարության վերաբերմամբ» [«Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության» (1921-1938 թթ.), էջ117]:

[13] Գրիգորիս եպիսկոպոս Պալաքյան (1879-1934), եղել է Կ. Պոլսի պատրիարքարանի քարտուղար, Մանչեստրի, Լոնդոնի և Մարսելի հոգևոր առաջնորդ: Եվրոպայի Հայոց հայրապետական պատվիրակ: 1924 թ. Ս. Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ի կողմից օծվել է եպիսկոպոս:

[14] Այսինքն՝ 1923 թվականին:

[15] Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսը ծնվել է 1847 թվականին, հետևաբար՝ 1923 թվականին նա 76 տարեկան էր:

[16] Պոլոժենիե - Ռուսաստանյան կայսրության տարածքում Հայ Եկեղեցու կանոնադրությունը: Հաստատվել է 1836 թվականին և գործել մինչև 1917 թվականի վերջերը:

[17] Նկատի ունի 1922-1923 թվականներից Հայ Եկեղեցի ներթափանցած «Ազատ եկեղեցական եղբայրություն» շարժումը, որի ղեկավարներն էին Բենիկ վարդապետ Եղիազարյանը, Մեսրոպ ավագ քահանա Մնոյանը և ուրիշներ: Շարժումը հովանավորվում և ֆինանսավորվում էր Խորհրդային Հայաստանի հատուկ ծառայությունների կողմից: Նրանք հրատարակում էին «Ազատ Եկեղեցի» շաբաթաթերթը (1924-1928): Իշխանությունների հովանավորությամբ ազատ եկեղեցականները Երևանում, Թիֆլիսում և այլուր գրավեցին մի շարք եկեղեցիներ, որտեղ իրենց անջատողական գաղափարներն էին տարածում հավատացյալ ժողովրդի մեջ: 1926 թ. հունիսի 14-ին Գևորգ Ե Կաթողիկոսը հատուկ

կացութիւնը անտանելի էին դարձրել: Չկար Սինօդ[18], դիւանը կառավարւում էր գրագիր Արմենակի (երեւի յիշում ես նրան) եւ մի շաթիրի ձեռքով: Երկու փորձ եղան կացութիւնը բարուքելու: Բժիշկները յայտարարեցին եւ գրաւոր տուին եպիսկոպոսներիս, որ կաթողիկոսի հիւանդութիւնը վտանգաւոր է, որ նրան բոլոր գործերից հեռու պիտի պահել, երկար ժամանակ՝ նաեւ առողջանալուց յետոյ: Եպիսկոպոսներս խորհրդակցութեամբ Խորէն արքեպիսկոպոսին տեղապահ[19] ընտրեցինք[20], Բագրատ, Գարեգին եւ Գիւտ եպիսկոպոսներին անդամներ Սինօդի: Բոլորիս ներկայութեամբ, իմ միջնորդութեամբ, կաթողիկոսը անկողնու մէջ համաձայնեց եւ ստորագրեց համապատասխան կոնդակներ: Երկու ամիս անց՝ 1923 թ. ապրիլին, հիւանդը լաւացաւ, ի մեծ ուրախութիւն միաբաններիս եւ մինչդեռ սպասում եւ հաւատում էինք, որ լաւագոյն կազմի խորհրդակցութեամբ եւ գործակցութեամբ գործերն առաջ կ'տարին, ծերունի կաթողիկոսը այդ անհնար դարձրեց եւ քաօսային դրութիւնը աւելի ծաւալեց: Նոյն տարւայ վերջը երկու-երեք ամիս անընդհատ նոր խորհրդակցութիւններ գումարեցինք, մասնակցութեամբ բոլոր միաբանների (չէր հրաւիրւում միայն նախկին Բենիկ վարդապետը[21]): Եզրակացութիւնն էր՝ Ընդհանուր եկեղեցական <համա>գումար հրաւիրելը դժւար է. Եկեղեցին այդ վիճակում պահելն անհնար. կազմել մի Հոգեւոր Գերագոյն Խորհուրդ՝ կաթողիկոսի նախագահութեամբ, որ վարի Եկեղեցու բոլոր գործերը՝ կաթողիկոսի հրատարակած կոնդակով հաստատուած: Հանգամանքների պատճառով աշխարհական կարող* անդամներ հրաւիրել չէինք կարող, ուստի <որոշեցինք> ժամանակաւորապէս բաւականանալ միայն եպիսկոպոսների կազմով. պարտաւորացնելով, որ նրանցից եւ ոչ մէկը հրաժարւելու իրաւունք չունենայ: Այս միակամ եւ միաձայն որոշումն ինձ յանձնարարւեց ծանօթացնել կովկասահայ առաջնորդներին եւ քաղաքների սակաւաթիւ ազգային-եկեղեցական խնդիրներով հետաքրքրւող հայ մարդկանց եւ ստանալ նոցա հաւանութիւնն ու կարծիքները: Եպիսկոպոսական կազմը,

---

կոնդակով «Ազատ եկեղեցական եղբայրություն» հայտարարեց Հայ Եկեղեցուց անջատված և նզովեց այն, իսկ Բենիկ վարդապետին էլ կարգալույծ արեց:

18 Սինոդ - Ամենայն Հայոց Կաթողիկոսին կից բարձրագույն հոգևոր անձանց եկեղեցական-խորհրդակցական մարմին, որ ստեղծվել է «Պոլոժենիե»-ի համաձայն (1837 թ.): Վերացվել է Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից անմիջապես հետո:

19 Ճիշտը՝ «Հայրապետական տեղակալ»-ն է:

20 Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը Հայրապետական տեղակալ է ընտրվել 1923 թ. մարտի 4-ի կաթողիկոսական կոնդակով: Նույն կոնդակով նա նշանակվել է Ս. Սինոդի նախագահող (տե՛ս «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության», գիրք Ա. Խորեն Ա Մուրադբեկյան Կաթողիկոս Ամենայն Հայոց, էջ 152):

21 Բենիկ վարդապետ Եղիազարյան (1867-1948). եղել է Ղարաբաղի թեմական դպրոցի տեսուչ (1899-1903), Գանձակի առաջնորդական փոխանորդ (1903): «Ազատ եկեղեցական եղբայրության» պարագլուխներից (տե՛ս նաև ծան. 17):

* Ընդգծումը նամակագրինն է (Պ. Հ.):

ունենալով վաւերացրած թղթերը, Ներկայացաւ. 1924 թ. յունվարի 1-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ խնդրեց իր համաձայնութեամբ վաւերացնել այդպիսի մի նոր մարմին. այլապէս միաբանութիւնն իրան անպարտ կ'ճանաչի:

Կաթողիկոսը համաձայնեց եւ հրատարակեց առ այդ 1924 թ. յունվ<արի> 1-ի հ<ամար> 1 Կոնդակը[22] եւ գործավարութեան հրահանգ: Հարկ եմ համարում քեզ ցոլելու, որ համաձայնութիւնն առանց դժկամութեան չէր, որ մինչեւ օրս էլ արտայայտւում է որոշ բանբասանքների ձեւով եւ պատճառ ծառայում անիրազէկ եւ յաճախ չարամիտ անձանց կողմից յայտնելու կամ քննադատելու Գեր<ագոյն> Հոգ<եւոր> Խորհուրդը: Մտքերի շփոթութիւնը ծաւալւում է բնիկների, գնելների[23] եւ նմանների ջանքերով, որոնց շահասիրութիւններն անհնար էին աստիճանաբար կարգի տակ մտնող եկեղեցական հիերարխիայի մէջ եւ որոնք իրենց կեանքով ու գործունէութեամբ հանրածանօթ, իբրեւ բացասական տիպեր, կեղծում են նոր եւ անզատ Եկեղեցու[24] հիմնադիրներ հանդիսանալով: Գերագոյն Խորհրդի ամեն մի անդամ լաւապէս գիտակցում է, որ այդ անձանց եղոյթը բաւական վնասում է թէ՛ անհատներին եւ թէ՛ մեր հիմնարկութեանը, բայց վիճե՞լ այդպիսիների հետ. ո՞ւմ ուրախացնելու եւ ո՞ւմ միամտացնելու:

Սիրելի Արոնց. հայ ժողովրդի աննկարագրելի տանջանքներին լիուլի մասնակից է եղել Հայ Եկեղեցին եւ այդ բոլոր տանջանքներից հետոյ, մեր ժողովրդին ու Եկեղեցուն բաժին է մնացել իր աւերուած եւ բրիշակ դարձած հայրենիքի մի բեկորը: Խեղճութեան մէջ ընկած մարդուց բոլորն են հաշիւ պահանջում, եւ ամեն ոք իրաւունք է համարում նրան քննադատելու: Մեզ կամենում են օգնել, բայց նախապէս կամենում են իրազէկ լինել, թէ հարուստի փշրանքները աղքատը ի՞նչ կանի: Կուտի': Ո՞վ կարող ես' հաւաստիացրու, որ Գեր<ագոյն> Հոգ<եւոր> Խորհրդի միջոցով ամեն մի օգնութիւն լաւագոյն եղանակով կ'գործադրուի եւ, որ այս պայմաններում Գեր<ագոյն> Խորհրդի շնորհիւ Հայոց Եկեղեցին կատարում է աւելի լաւ, քան կաթողիկոսի միահեծան կամքով, կամ ցարից հաստատուած Սինոդի միջոցով: Սա է իրողութիւնը:

P. S. Յաճախ լինում եմ Երեւանում: Երեկ այնտեղ էի եւ ազատ ժամանակ ունէի: Կառքով պտտեցի քաղաքի զանազան մասերը: Ի՜նչ քաղաք. աւերակների մի կոյտ' տեղ-տեղ ցցուած կանգուն տներով: Բայց չնայած այդ բանին ոգեւորութիւնս իմ հա-

[22] Տե՛ս «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության», գիրք Թ. Խորեն Ա Մուրադբեկյան Կաթողիկոս Ամենայն Հայոց, 166-167:

[23] Չկարողացանք պարզել ով լինելը: Թերեւս ակնարկում է Գնել եպիսկոպոս Գալեմքեարյանին: Արմաշի դպրեվանքի շրջանավարտ (1890 թ.), եղել է Մուշի և Սեբաստիայի թեմերի առաջնորդ: Այցելու հոգևոր հովիվ Ռումինիայի հայոց: Հարել է և տուրք տվել «Ազատ եկեղեցական եղբայրության»:

[24] Տե՛ս ծան. 17:

սակին անհամապատասխան չափեր էր ընդունել: Գերմարդկային ճիգեր են թափում նոր քաղաք շինելու, եւ երբ նա գլուխ հանէի, իսկ այդ անպատճառ կ՚լինի, հայի ստեղծագործական եռանդի լաւագոյն կոթողը կ՚լինի: Մրջիւնի աշխատասիրութեամբ գործն առաջ է տարւում եւ շրջափելի կերպով տեսնում եւ համոզւում էի, որ արտասովոր է հայի եռանդի չափը: Պարիզի մեծ փողոցներից մեկում մի հայ, գրում են, 11.000.000 ծախսում է մի տուն շինելու, որպեսզի մէջը բախտաւոր ապրի: Երեւակայիր, Աղոնց, այդ հայը քնէր, արթնանար եւ վճռէր, թէ ես ցանկանում եմ իմ ժողովրդով բախտաւոր լինել, եւ նա իր մի տան գնով, հազարաւոր տներ եւ ընտանիքներ կ՚բախտաւորացնէր: Ինչո՞ւ մարդկային միտքը այդքան տարրական տրամաբանութեան չի հետեւում: Նամակիս յաւելուածն աւելացրի, որովհետեւ վերջի հայակործան պատերազմից յետոյ[25], երեկ, առաջին անգամ, արտասովոր հաւաստիացումով վերադարձայ Էջմիածնի վանքը, թէ հայը պիտի ապրի եւ նոր խօսք պիտի ասի մարդկութեանը:

Փոստով ուղարկում եմ ուզածդ գրքերը՝ «Տիմոթէոս Կուզ»[26] եւ «Կնիք հաւատոյ»[27]: Իբրեւ նորութիւն քեզ հաղորդեմ. Էջմիածնի ձեռագրերը Մոսկվայից[28] բերուած էին Երեւան[29] եւ մի տարի առաջ՝ Էջմիածնի մատենադարան: Այս մայիս ամսին կնքուած արկղերը՝ 10 տարի փակ մնալուց հետոյ, բացւեցին եւ միանգամայն անվնաս դասաւորւեցին իրենց երկաթե պահարաններում: Ձեռագրերի քանակն է 4.660[30], չհաշւած պարսկերէն ձեռագրերը, իսկ նորագոյն ժողովածուն պարունակում է 1.930 օրինակ: 1.050 օրինակ էլ գտնւում են Երեւանի թանգարանում, որ դարձեալ պիտի բերվին, ընդամենը՝ 7.640 ձեռագիր: Արդեո՞ք հնար չէիր ունենալ մի 2000 ռուբլու նուէր գտնել, որ երկաթե պահարանների պակասը շինել տայինք: Իմ շինել տուած պահարանները դժբախտաբար չեն բաւարարում: Այս էլ քեզ գրեմ, որ

[25] Նկատի ունի Առաջին համաշխարհային պատերազմը (1914-1918 թթ.):

[26] Տե՛ս «Տիմոթէոսի Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի»: Ի լոյս ընծայեալ աշխատութեամբ Կարապետ ծ. վրդ-ի և Երուանդ վարդ-ի, Էջմիածին, 1908:

[27] Տե՛ս «Կնիք հաւատոյ Ընդհանուր Սուրբ Եկեղեցւոյ յուղղափառ և ս. հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց, յաւուրս Կոմիտաս Կաթողիկոսի համահաւաքեալ»: Հրատարակութիւն Կարապետ եպիսկոպոսի, Էջմիածին, 1914:

[28] Էջմիածնի ձեռագրերը և Մայր Աթոռի թանգարանի նյութերը Մոսկվա էին ուղարկվել 1915 թ. փետրվարին: Ձեռագրերի ոդիսականի մասին տե՛ս Ա. Սիմոնյանի ուշագրավ հոդվածը՝ «Էջմիածնի թանկարժեք ձեռագիրները Առաջին մեծ պատերազմի ընթացքին» («Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1966, № 6, էջ 70, հմմտ. նաև «Հայրենիք», 1946, № 4, հուլիս-օգոստոս, էջ 86-87):

[29] Ձեռագրերը Երևան են հասել 1922 թ. մայիսի 10-ին:

[30] Էջմիածնի բոլոր ձեռագրերը դեռևս 1912 թվականին մի միասնական համարագրությամբ դասավորել էր ինքը՝ Մեսրոպ արքեպս. Տեր-Մովսիսյանը: Թվում է, թե այստեղ նա հիշողությամբ է ներկայացնում ձեռագրերի քանակը, իրականում դրանց թիվն էր 4.586 (տե՛ս Գ. Տեր-Վարդանյան, նշվ. աշխ., էջ 11):

մատենադարանը կառավարում է պետական պաշտօնեաներով[31]. եւ մենք սոսկական այցելուներ ենք: Բայց ինչ որ կայ Հայաստանում եւ ինչ որ շինում է այնտեղ, հայ մարդու համար է եւ այդ պարզ գիտակցութիւնը պիտի ունենայ օտարութեան մէջ գտնուող ամեն մի հայ:

Համբուրիւ բարեւներ քեզ ու բազմաթիւ ծանօթների:

Մեսրոպ արք<եպիսկոպոս>

[31] Այդ թվականներին մատենադարանի տնօրենն էր ձեռագրագետ, բանասեր Ս. Տեր-Հակոբյանը (1881-1938):

*ԱՆԱՀԻՏ ՄՈՒՐԱԴՅԱՆ*

# ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(«Սիոն» ամսագիր)

Հայ լրագրության պատմությանը Երուսաղեմը առնչվում է «Սիոն» ամսագրով, որն իր ուրույն տեղն ունի հատկապես կրոնաբարոյական տեսանկյունից: Այն հրատարակվելուց 70 տարի առաջ՝ 1794 թ., Մադրասում լույս էր տեսել աշխարհում առաջին հայերեն լրագիրը՝ «Ազդարարը», Վենետիկում, Սուրբ Ղազար կղզում, 1843 թվականից լույս էր տեսնում Վենետիկի Մխիթարյան միաբանության պաշտոնաթերթը՝ «Բազմավեպը»: «Սիոնը», հրատարակվելով Երուսաղեմում որպես Հայ միաբանության պաշտոնաթերթ, սկսած 1866 թվականից ասես գալիս էր լրացնելու բնույթով միաբանական ամսագրերի հիանալի շարքը՝ Էջմիածնում 1868 թվականին սկիզբ առած Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Արարատ» ամսագրի և Վիեննայի Մխիթարյան միաբանության պաշտոնական հրատարակության 1887 թվականից լույս տեսնող «Հանդէս ամսօրյա» ամսագրի հետ:

«Սիոնը» լույս է տեսնում 1866 թվականի հունվարից սկսած Երուսաղեմում, Եսայի Պատրիարքի պաշտոնավարության օրոք, և հրատարակվում է 12 տարի շարունակ՝ մինչև 1877 թվականի վերջը: Դա «Սիոնի» հին շրջանն է: Եսայի Պատրիարքը միաբանության մեջ այդ նպատակով ձեռնհաս անձեր չգտնելով՝ թերթը խմբագրելու համար Երուսաղեմ է հրավիրում ժամանակի լավագույնս պատրաստված մտավորական ուժերից մեկին՝ Տիգրան Սավալանյանին, որն իբրև ուսուցիչ և բանասեր ճանաչված էր Սրբոց Հակոբյանց վանքի միջակութային կյանքում: Սավալանյանը հաջողությամբ խմբագրում է «Սիոնի» առաջին երկու տարիները՝ 1866-1867 թթ., այնուհետև այն հաջորդաբար խմբագրել են Գարեգին (Մելքիսեդեկ) Մուրադյանը՝ 1867-1875 թթ., և Սահակ Խապայանը՝ 1875-1877 թվականներին: «Սիոնը» սկսում է հրատարակվել 16 երկսյունակ միջին չափի էջերով:

Ամսագրի ճակատին գրված է՝ «Սիոն ամսագիր, Ազգային, Բանասիրական, Գիտական և Քաղաքական»: Առաջին համարի սկզբում զետեղված է չորս էջանոց մի «Յայտարարութիւն»՝ բացատրելու ամսագրի ուղղվածությունը և նպատակը. «ազատութիւն խորհելու եւ խօսելու»: Այնուհետև նշվում է, որ «Սիոնը» իր ընդունած օրենքների համաձայն սիրո և խաղաղության դրոշակով ընծայում է իրեն ընդհանուր ազգին, ինքն էլ փոխարենը հույս ունի հորդոր, քաջալերանք և ներողամտու-

թյուն իր սիրելի ազգի կողմից բոլոր այն թերությունների հանդեպ, որ անբաժան հարակիցն են ամեն մի նոր հաստատության: Ամսաթերթի հրատարակիչները չեշտում են, որ պիտի խոսեն անխտիր ամեն տեսակի նյութի շուրջ. «որ թե՛ կրթիչ են, և թե՛ զվարճալի»: Թեև կրոնական բնութագրումը նշված չէ ամսագրի գլխագրում, սակայն Ա տարվա վերջին թվի «Ազդարարության» մեջ ասվում է, որ ավելի զարկ պիտի տան կրոնական բնույթի հոդվածներին, քանի որ կրոնական միաբանության պաշտոնաթերթը ամենից շատ այդ թեման պիտի արծարծի: Ա տարվա նյութերը 12 գլուխների են բաժանված՝ Ազգայինք, Այլնայլք, Առակք, Բանասիրական, Բանաստեղծականք, Բարոյականք, Գիտականք, Գրագիտականք, Ժամանակագրականք, Կրոնականք, Պատմականք, Ուսումնականք: «Ազգայինք» բաժնում զետեղված են Ազգային, Պատմական, Ուսումնական-Դպրոցական, Նշխարք Ազգային Պատմության, Եկեղեցական, Երաժշտական, Ուղևորական, Սուրբ Տեղյաց խնդիր և այլ խորագրերով նյութեր:

Սավալանյանը գրում է, որ երկու տարի թերթը խմբագրելուց հետո այն հանձնում է միաբանությանը, ուր արդեն կային այդ գործը վարելու կարող անձինք: Այնուհետև ափսոսանք է հայտնում, որ խոհեմ ձեռքերի չհանձնվեց թերթի խմբագրությունը, որը փոխանակ Սուրբ Աթոռի պատիվը բարձրացնելու՝ «անլուր անարգանքներու անմարսելի թշնամանքներու նշաւակ ըրաւ անոր ցահակալը»[1]:

Թերթելով «Սիոնի» հաջորդ տարիների էջերը, տեսնում ենք, որ դրանք ավելի լեցուն են կրոնական և բարոյական խնդիրներ լուսաբանող նյութերով, ծավալն ավելի ընդարձակ է (24 էջ), քան Ա և Բ տարիներին: Թերևս Տ. Սավալանյանի դժգոհությունը բխում է Գարեգին Մուրադյանին՝ իրենից գերադասելու փաստով, որին հանձնվել էր ամսագրի խմբագրությունը:

Հարկ ենք համարում նշել մի քանի առավել աչքի ընկնող հոդվածներ, որոնք տպագրված են «Սիոնի» էջերում. հին շրջանում՝ 1866-77 թթ.՝ Եփրեմ Կաթողիկոսի «Ցովհաննու Մեկնութեան Յառաջաբանը» (1865:65), Անանիա Շիրակացու «Հարցմունք Թուաբանականքը» (1866:78), Եղիա Տնտեսյանի հոդվածաշարքը ազգային երաժշտության մասին (1866:98, 107), Կատոնի «Յաղագս Բարւոք Կենցաղավարելոյ» հոդվածաշարքը (1866:210, 234)՝ թարգմանված լատիներենից՝ գրաբար, «Դաստիարակութիւն կանանց» հոդվածաշարը՝ ութ հոդված և այլն:

«Սիոն»-ում տպագրված գրքերից են Սամուել Ռաբբու «Գործ ոսկեղինիկը» (1866-1871 թթ.), Մելքիսեդեկ Մուրադյանի «Կրթարան Աւետարանական բանից»-ը՝ ութ տետր (1871-1876 թթ.), Մամբրե Մարկոսյանի «Երկու Խօսք եկեղեցւոյ պաշտօնէից ուղղուած» - ը (1872 թ.) և այլն:

1877 թ. «Սիոն»-ը դադարում է լույս տեսնելուց: Պատճառը, թերևս, Սուրբ Աթոռին պատահած ներքին և արտաքին հարվածներն էին՝ Սուրբ Տեղերի խնդիրը, որն

[1] Սաւալանեան Տիգրան, Պատմութիւն Երուսաղէմի, Երուսաղեմ, տպ. Ս. Հակոբյանց, 1931, հտ. Ա, էջ 1139:

այդ թվականներին վերին աստիճանի բորբոքված էր. մյուս կողմից էլ՝ «ներքին ձախորդությունները» բոլորովին ջլատեցին վանքի ուժերը և մինչև անգամ մեծ պարտքի տակ գցեցին[2]:

Մաղաքիա Օրմանյանը, որոշ չափով թերագնահատելով ամսագրի մակարդակը, նյութերի նվազ քանակը, Երուսաղեմի Աթոռի պատմական հիշատակների և ժամանակակից դեպքերի հանդեպ անուշադրությունը, այսուհանդերձ գրում է. «Ո՞ւր էր, թէ Երուսաղէմ այսօր ալ ունենար իր Սիոն Ամսագիրը, գոնէ պարագայք ներէին նոր Սիոն մը հրատարակել»[3]:

Օրմանյանի իղձը իրականացվում է: «Սիոն»-ը վերստին հրատարակվում է երջանկահիշատակ Եղիշե Պատրիարք Դուրյանի պաշտոնավարության օրոք: Այն վերահրատարակվում է խմբագրապետությամբ Բաբկեն եպս. Կյուլեսերյանի, որն արդեն երկու տարի աշխատում էր վանքում որպես Ընծայարանի և Ժառանգավորաց վարժարանի ուսուցիչ:

Եվ այսպես, «Սիոն»-ի վերահրատարակությունը սկսվում է ամսագրի դադարումից 50 տարի անց՝ 1927 թ. հունվարի 1-ից սկսած՝ համաձայն Եղիշե Պատրիարք Դուրյանի՝ 1926 թ. նոյեմբերի 26 թվակիր պաշտոնագրի, որում Պատրիարքը Բաբկեն եպս. Կյուլեսերյանին է հայտնում իր և միաբանության ուրախությունը, որ, արձագանքելով հասարակության խնդրանքին, Ս. Աթոռի Տնօրեն ժողովը որոշում է վերսկսել «Սիոն»-ի հրատարակությունը առաջիկա 1927 թվականից, և առ այդ կազմված խմբագրական մարմինը միաձայն հավանությամբ նրան է հանձնում խմբագրապետի կարևոր պաշտոնը, և այդ անվերապահ վստահությունը բխում է Հայաստանյայց Եկեղեցու հարազատ վարդապետության և ավանդությունների հանդեպ նրա հայտնի նախանձավորությունից:

Բաբկեն եպս. Կյուլեսերյանը, հանդես գալով խմբագրականով, հույս է հայտնում «Սիոն»-ի ընթերցողներին, որ ամսագիրը կօգնորի Սրբոց Հակոբյանց վանքի մտավոր կյանքի վերածնության գործընթացը, կընթանա առաջադիմական ուղղությամբ, իրենց բնաշխարհից տարագիր մեր եղբայրներին կկազդուրի կրոնի ներշնչումներով, կգուրգուրի մայրենի լեզվի մաքրությունը, կլինի ողջամիտ քննադատ[4]:

Այսպիսով, «Սիոնի» հին և նոր շրջանների միջև կա 50 տարվա բաց: Հարկ է նշել, որ այս երկար տարիների անջրպետը լցված է ազգային, կրթական, եկեղեցական և համաշխարհային այնպիսի փոփոխություններով, որոնք կենսական ազդեցություն թողեցին նաև հայ ժողովրդի վրա:

Հարություն Պատրիարք Վեհապետյանի մահից (1910 թ.) հետո Սրբոց Հակոբյանց Աթոռը թափուր էր: Մյուս կողմից թուրքական կառավարությունը որոշեց վերացնել Պոլսի պատրիարքությունը և խզել Թուրքիայի հայոց հոգևոր կապերը Ս.

---

[2] Լևոնյան Գարեգին, Հայոց պարբերական մամուլը. Ալեքսանդրապոլ, 1895, էջ 283:

[3] «Սիոն», 1927, թիվ 2, փետրվար, էջ 63-64:

[4] Նույնը, թիվ 1, էջ 4-5:

Էջմիածնի Մայր Աթոռի հետ: Այդ նպատակով երեք բարձրագույն Աթոռները՝ Կիլիկիայի, Երուսաղեմի և Պոլսի, միացնելով. Երուսաղեմում ստեղծեց պատրիարքություն՝ մի կաթողիկոսություն Թուրքիայի հայոց համար. և այդ պաշտոնին նշանակեց Կիլիկիայի Սահակ Կաթողիկոսին. սակայն Պոլիսը գրավվեց դաշնակից պետությունների կողմից, վերահաստատվեց նախկին իրավիճակը, և Երուսաղեմի Աթոռը վերստացավ իր նախկին դիրքը՝ թեև դեռ թափուր[5]:

Այս կարևոր իրադարձություններից հետո է, որ Պոլսի նախկին Եղիշե Պատրիարք Դուրյանը 1921 թ. ընտրվեց Երուսաղեմի Աթոռի Պատրիարք՝ ազգային սահմանադրությամբ, անգլիական կառավարության մասնավոր թույլտվությամբ: Պաղեստինի բարձր կոմիսար Սըր Հերբերթ Սամուելի ներկայությամբ Սրբոց Հակոբյանց վանքում կատարվեցին նորընտիր Պատրիարքի գահակալության արարողությունները:

«Սիոնի» վերահրատարակության լուրը խանդավառությամբ ընդունվեց ամենուրեք: Այդ առթիվ ամսագրի խմբագրությանը իրենց ողջույնի խոսքն են հղում Սահակ Բ Կաթողիկոս Խապայանը, Մինաս Չերազը, Վահան Թեքեյանը, Արշակ Չոպանյանը, Գևորգ Սարաֆյանը, Արշակ Ալպոյաճյանը և շատ ուրիշներ: Ամսագրի վերահրատարակման ջերմ փափագողներից է եղել Խրիմյան Հայրիկը, որը որոշակի ֆինանսական օժանդակություն է հայթայթել այդ նպատակով:

Նոր «Սիոնին» ողջունողները եղան հայ գրականության ու մշակույթի ականավոր դեմքերը:

Առաջին համարներից սկսած «Սիոնը» անդրադառնում է հայ հին ու միջնադարյան մատենագիտությանը: 1927-1930 թվականների նյութերը աչքի անցկացնելով տեսնում ենք, որ տպագրվել են հետաքրքիր ուսումնասիրություններ. Եղիշե Դուրյանի «Մանդակունւոյ Ճառերուն մէկ նոր ձեռագիրը», «Նկատողութիւններ Եզնիկի աստուածաշնչական վկայութիւններու մասին»-ը, «Նորագիւտ գլուխներ: Սիրաքի գրքի հին թարգմանութիւնից»-ը, Ֆրեդերիկ Մուրատի «Ս. Եփրեմի Ասորւոյ: Վեշտասան ասացուածք վասն Նիկոմիդիոյ քաղաքին»-ը (Երուսաղեմի Մատենադարանի թ. 326 ձեռագրի մասին), Գառնիկ Ֆնտգլյանի «Կորիւն, Վարք Մաշտոցի»-ն, ուղղեալ եւ լուսաբանեալ»-ը, Վրթանես Քերթողի «Յաղագս Պատկերամարտից»-ը, Մկրտիչ Աղավնունու «Ներսէս Կրակցի»-ն, Բաբկեն եպս. Կյուլեսերյանի «Կիլիկիոյ կաթողիկոսները», Գառնիկ Ֆնտգլյանի «Եփրեմ Խորի կամ Խուրի»-ն, Թորգոմ եպիսկոպոսի «Եսայու հարցումը» (Հին Կտակարանի Եսայի մարգարեի մի հարցման մեկնաբանությունը) և այլն:

«Սիոն»-ի Նոր Շրջանի մեջ տպագրված գրքերից են Բաբկեն եպս. Կյուլեսերյանի «Հայ Եկեղեցի, Ուսումնասիրություններ»-ը (1927-30 թթ.), Մկրտիչ Աղավնունու «Հայկական հին վանքեր եւ եկեղեցիներ Սուրբ Երկրին մէջ»-ը (1927-30 թթ.), Ֆրեդերիկ Մուրատի «Պարապմունք ի Սուրբ Գիրս Նոր Կտակարանի»-ն (1928-30 թթ.):

---

[5] Նույն տեղում:

1930 թվականին ի մի բերելով «Սիոն»-ի Նոր Շրջանի չորս տարվա նյութերը՝ Բաբկեն եպս. Կյուլեսերյանը տալիս է գնահատական: Ըստ նրա, «Սիոն»-ը իր բազմաբովանդակ ուսումնասիրություններով աշխատեց պատկերացնել անցյալի փառքերն ու արժեքները՝ ցույց տալու համար հայ ժողովրդին, որ ինքն անարժեք զանգված չէ, այլ իր գոյությունը պահելու և ապրելու իրավունք ունեցող մի ցեղ, որն ունեցել է իր կշիռը քաղաքակիրթ ազգերի պատմության մեջ և կարող է դարձյալ ունենալ իր կշիռը, եթե հավատարիմ մնա իր հին ավանդություններին՝ օգտվելով նոր ժամանակների ազդակներից:

Թերևս վերոնշյալի վկայությունը «Վէմ» ամսագրի կարծիքն է. «Սիոն»-ը հայագիտական-բանասիրական տեսակետից հետզհետե սկսում է աչքառու տեղ գրավել և շատ կողմերով հիշեցնում է Էջմիածնի երբեմնի «Արարատը»[6]:

«Սիոն»-ի վերահրատարակությունը անհրաժեշտություն էր, քանի որ Երուսաղեմը հարուստ շտեմարան է իր ձեռագրաց մատենադարանով և առավել կարևոր դերը՝ «անոյշ լոյս մը հեղելու բարեպաշտ հոգիներու մէջ»[7]:

[6] «Վէմ», Գ, 1934, էջ 126:

[7] «Սիոն» 1930, էջ 94-96:

*ԱՐՏԱՇԵՍ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ*

# «ԱՐՑԱԽԻ ԳԱՆՁԵՐԸ»

Վերջապես քաղաքակիրթ աշխարհին է ներկայացվում անվանի արցախագետ Շահեն Մկրտչյանի բարձրացույն չափանիշներով կազմված, ձևավորված «Արցախի գանձերը» աշխատությունը՝ հայերեն-ռուսերեն լեզուներով: Առաջ անցնելով ասենք, որ շուտով դրան կհաջորդեն հայերեն-անգլերեն, հայերեն-ֆրանսերեն համարժեքները:

Հայրենասեր ու շնորհաշատ հեղինակի ավելի քան 25 տարվա տքնաջան, պրպտուն աշխատանքի արդյունքն է սույն մեծադիր ( 35x25 սմ չափերով) և մեծածավալ (56 մամով) պատկերագիրքը, որն ընդունակ է լայն հասարակությանը ներկայացնելու Արցախական հայաշխարհի բազմադարյան պատմությունը, մշակույթը և արցախահայերի ազատաքաղձ խոյանքները: Այն հայոց Արցախական աշխարհի հազարամյակների ազատամարտի ու ինքնահաստատման հզոր զենքերից մեկն է՝ որպես հերոսական մաքառումների քարեղեն վկայություն: Հրապարակ հանելով Արցախի գանձերը՝ հեղինակը աշխարհի արդարադատության ատյաններին, եթե այդպիսիները կան, ազդարարում է. «Մենք լռում ենք և թողնում, որ մեր փոխարեն լեզու առած քարերը խոսեն»:

«Արցախի գանձերը» մեծ իմֆորմացիա պարունակող և միաժամանակ ամենահամակողմանի, ամենապատկերավոր ու շքեղ գիրք է Արցախի մասին: Այն հերթական ուսումնասիրություն չէ, տարբեր առիթներով տպագրված նյութերից հավաքված ժողովածու, այլ գիտագաղափարաքաղաքական, բարոյահոգեբանական հզոր լիցքավորում ունեցող, մարտնչող մի գործ է՝ ժամանակի պահանջի պարտադրանքով ընդգծված քաղաքական, ռազմավարական ու դիվանագիտական ենթատեքստերով: Օտար ընթերցողը, որին էլ առաջին հերթին հասցեագրված է պատկերագիրքը, լիովին պատկերացում կկազմի Արցախի ոչ միայն հազարամյակների հերոսական պատմության, եկեղեցական հիասքանչ տաճարների, անկրկնելի խաչքարերի, կիրառական, մանրանկարչական, որմնանկարչական արվեստի, արցախցու կերպարի, այլև ազգային ազատագրական շարժման բուն դրդապատճառների ու նպատակների մասին: Սա առանձնապես կարևոր է մանավանդ այժմ, երբ ղա-

րաբաղյան հիմնահարցի արդարացի լուծման գործընթացում բանակցային բոլոր մակարդակներում: Այս գիրքը հրապարակ է իջել նաև ստի ու կեղծիքի դիմակը պատռելու առաքելությամբ:

Մենք դեռ կանդրադառնանք «Գանձերին»: Անհրաժեշտ ենք համարում միջանկյալ ներկայացնել Շահեն Մկրտչյանին առնչվող որոշ մանրամասներ, որոնք հիմք ու նախադրյալ են հանդիսացել այս արժեքավոր պատկերագրքի արարման ու հրատարակման համար:

Հանգամանքների բերումով Մկրտչյանն իր աշխատանքային գործունեությունը սկսել է որպես թանգարանի աշխատակից: Մի շարք թանգարաններ ստեղծելու հետ մեկտեղ զբաղվել է նաև հայրենի երկրամասի քիչ ուսումնասիրված պատմության, մանավանդ գրեթե չուսումնասիրված պատմաճարտարապետական հուշարձանների հիմնովին հետազոտմամբ: Համառ հետևողականությամբ, հայածանքների ու հետապնդումների մղձավանջը հաղթահարելով նա տարիներ շարունակ չափչփեց Արցախի սարերն ու ձորերը, կիրճերն ու դարավանդները և հավաքեց, մեկտեղեց մի պատկառելի մասն այն ամենի, ինչ ստեղծել է հայի արարիչ ձեռքը, որպես նյութական մշակույթի արտահայտություն: Դրան հաջորդեց Մկրտչյանի երկրորդ խիզախումը. նա կարողացավ մեկը մյուսի ետևից հրատարակել ու գիտական շրջանառության մեջ դնել երկու տասնյակ արժեքավոր աշխատություններ, հանդես եկավ երկու հարյուրից ավելի հոդվածներով, այն էլ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, բուլղարերեն, քրդերեն, նաև ադրբեջաներեն: Սա բացառիկ դեպքերից է, որովհետև և՛ խորհրդային, և՛ հետխորհրդային շրջանում գրել-ստեղծելու համար շնորհք է պահանջվում, իսկ տպագրելու, հասարակությանը ներկայացնելու համար՝ տաղանդ: Այստեղ էլ մարդկանց համոզելու, սիրտ շահելու բացառիկ կարողություններ դրսևորեց Մկրտչյանը:

Հատկապես մեծ մասսայականություն է վայելում նրա «Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները» ծավալուն ուսումնասիրությունը, որը մեկ տասնամյակում ունեցել է չորս վերամշակված, լրացված հրատարակություն՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով, ավելի քան 100 հազար տպաքանակով:

Եթե անձնական համակրանքին ու կողմնակալությանը վերագրենք այն բոլոր գնահատականները, որին արժանացավ գիրքը հայերիս կողմից, մեր քաղաքական գործիչների այն խոստովանությունը, թե «մեր զենքը սկզբնական շրջանում միայն այդ գիրքն էր, որ փայլուն ձևով կատարեց հայկական Ղարաբաղին ճանաչել տալու իր դերը», ապա չենք կարող շրջանցել օտար՝ անկողմնակալ այն բարձր գնահատականները, որոնք նվիրված են արտասահմանում տպագրված «Արցախ» և «Լեռնային Ղարաբաղ» աշխատություններին: Առաջինը տպագրվել է 1992 թ. անգ-

լերեն ու ֆրանսերեն, իսկ երկրորդը՝ 1993 թ. բուլղարերեն լեզուներով: Այլազգի գրախոսներն ըստ արժանվույն են գնահատել մեր հայրենակցի բեղմնավոր աշխատանքը:

«Աշխարհին գրեթե անհայտ Արցախ-Ղարաբաղի մասին գրված Շահեն Մկրտչյանի հրաշալի գիրքը,- գրել է հայտնի արվեստաբան Ջ. Թիերին,- մեզ համար հայտնություն է, միաժամանակ նաև հրճվանք. քանզի մինչ այդ ֆրանսախոս, անգլիախոս ընթերցողներին դեռևս չէր վիճակվել այդքան հարուստ, այդքան կուռ բովանդակությամբ ու խոր ներթափանցմամբ որևէ լուրջ նյութ կարդալ Ղարաբաղի բնիկ հայերի դարավոր պատմության, մասնավորապես այնչափ հարուստ մշակույթի, ինչպես նաև սովետական իշխանության տարիներին նրանց կրած տառապանքների ու զրկանքների վերաբերյալ: Ղարաբաղյան հզոր շարժումը մեծ ուժով ոգևորել է բոլորիս, սակայն մենք այդ երկրամասի մասին գրեթե ոչինչ չգիտենք: Այստեղից էլ գրախոսվող գրքի բացառիկ դերը մեծ նշանակություն է ձեռք բերում»:

Բուլղարական «Պոդկրեպա» թերթը տեղեկացնում է, թե Շահեն Մկրտչյանի բուլղարերեն տպագրված «Լեռնային Ղարաբաղ» աշխատությունը կարդացողը լիովին պատկերացում կկազմի այդ երկրամասի չնաշխարհիկ բնության, հերոսական պատմության ու բարձրարժեք արվեստի մասին: Մենք՝ Բուլղարիայի ընթերցողներս, երախտապարտ ենք տաղանդավոր պատմաբան Շահեն Մկրտչյանին, որ նա մեզ ծանոթացրեց իր հայրենի Ղարաբաղի հետ, որի հմայքը մինչև օրս չէր նկատված բուլղարացիների կողմից: Եվ ապա գրախոսը հեղինակին որակում է «Ղարաբաղի ազգային պատմաբան»:

Չգիտենք, թե ինչ գնահատականի կարժանացնեն այլազգի մասնագետներն ու գրախոսները Մկրտչյանի «Արցախի գանձերը» պատկերագրքին, շտապենք տեղեկացնել, որ արդեն հրապարակի վրա է մի տարողունակ ու բազմաբովանդակ գործ, որն առանց երկմտության կարելի է դասել նմանատիպ հրատարակությունների մնայուն արժեքների շարքը:

Մեզ մնում է հավաստել, որ «Արցախի գանձերը» ոչ միայն պատմագիտական, արվեստաբանական բնույթի, այլև ճանաչողական, քաղաքական երանգով լուրջ աշխատանք է, իրական իմաստով մնայուն մի գանձ՝ արժանի ամենաբարձր գնահատականի: Ճշմարտությունը պահանջում է ասել, որ հեղինակն այն արել է խղճի թելադրանքով, որպես հոգեկան պահանջ ու նաև պարտքի, հարգանքի տուրք իր հայրենի երկրամասին՝ նրա բազմադարյան գանձերը համգամանորեն ներկայացնելու առաջադրանքով: Այն մի համապարփակ աշխատանք է, որ կոչված է վերականգնելու ժողովրդի պատմական հիշողությունը, կոփելու նրա կամքը, բորբոքելու հայրենիքի նկատմամբ հպարտության վեհ զգացմունքը: Միաժամանակ կոչված է ռազմի դաշտում հաղթանակած, նոր անկախ պետականություն հռչակած արցախ-

ցիներին համախմբելու, զոտեպնդելու, նրա ազատաբաղձ ոգին բարձրացնելու, հույս ու հավատ ներշնչելու համար:

Սույն պատկերագիրքը միաժամանակ Արցախի պատգամախոսն է, Արցախը և արցախցիներին աշխարհին ներկայացնելու ընծայագիրը, որը գիտաքարոզչական բնագավառում լուրջ անելիքներ ունի:

«Արցախի գանձերը» պատկերագրքի տեքստային մասը բաղկացած է ծավալուն առաջաբանից, Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական օրհնությունից, հայտնի հրապարակախոս Զորի Բալայանի ջերմ գնահատականից, տպագրության ծախսերը հոգացած Տիգրան Կարապետյանի մասին հեղինակի դրվատանքից և «Վերջաբանի փոխարեն» ամփոփիչ խոսքից: Զետեղված են չորս քարտեզ, շուրջ 500 պատկեր, որոնցից 350-ը գունավոր, տասնյակ եզակի պատմական վավերագրեր, սև ու սպիտակ լուսանկարներ: Բանիմացորեն արված նկարատակերի բացատրություններից զատ, տրված են առավել կարևոր հուշարձանների պատմական ամփոփ տեղեկություններ: Շրջանառության մեջ են դրվել նոր, դեռևս չհրապարակված նյութեր: Ըստ որում, պատկերագրքում տեղ են գտել Արցախի պատմական բոլոր գավառների՝ սկսած Ծամխորից մինչև Արաքս, Ուտիքից մինչև Սյունիք տարածքի առավել նշանակալից կոթողները, ազատագրված տարածքներում հրաշքով պահպանված վանական, եկեղեցական տաճարներ, բազմաթիվ խաչքարեր, Հյուսիսային Արցախի հայաթափված բնակավայրերը և նրանց հուշարձանները: Պատկերագրքում տեղ են գտել նաև հայկական գորգարվեստի արցախյան դպրոցի ավելի քան 25 գորգերի, կապերտների, խուրջինների, արծաթագործական իրերի լուսապատկերները, երկրամասի գրչատներում արարված երեք տասնյակից ավելի մանրանկարներ, Դադիվանքի բացառիկ արվեստով որմնանկարներ և, իհարկե, ԼՂՀ վարչաքաղաքական գունավոր քարտեզը, պետական խորհրդանիշները և այլն և այլն:

Անչափ տպավորիչ այս պատկերագիրքը սիրով ու հպարտությամբ դիտվող, կարդացվող մեծարժեք հրատարակություն է, Արցախի հին ու նոր պատմության, բազմաձյուղ մշակույթի, ծառ ու ծաղկի, հող ու ջրի, նրա հազարավոր հուշարձանների հանրագումար:

Պատկերագրքի հաջողվածությունը, անշուշտ, պայմանավորված է նաև այլ գործոններով, որոնցից կթվենք մի քանիսը:

Անկնհայտորեն երևում է, որ հեղինակը դաշտային-հավաքչական ծավալուն աշխատանք է կատարել և իր ձեռքի տակ եղած հարուստ նյութերից ընդգրկել է գլխավորը, հիմնականը և, գիտական պատշաճ մակարդակով դասդասելով, դրանք տեղադրել պատկերագրքում:

Հեղինակը տիրապետում է հուշարձանները, բարձրաքանդակները, որմնանկարները, վիմագրությունները խոսեցնելու դժվարին արվեստին, առավել ևս՝ բազմաբնույթ նյութերի գեղագիտական դիտարկումների տեխնիկային:

Նա բանիմացորեն հաղթահարել է այնպիսի մի դժվարություն, ինչպիսին է սահմանափակ ձև ու չափի մեջ ներկայացնել մի ամբողջ երկրամասի հազարամյակների պատմությունը, մշակույթն իր նշանակալից ճյուղերով:

Հեղինակը թեև հարազատ է մնացել նյութերը մատուցելու պատմական հաջորդականությանը, բայց նաև աչքաթող չի արել գեղարվեստական, արվեստաբանական ոչ պակաս յուրահատուկ գործոնները, և ստացվել է ներդաշնակորեն միահյուսված, մեկը մյուսով պայմանավորված միասնություն:

«Արցախի գանձերի» տեքստային մասն ամբողջովին հայրենասեր հեղինակի ճիչն ու պոռթկումն է: Կրակոտ լեզուն, հրապարակախոսական շունչը, փաստերն ու փաստարկները, սահմանափակ ծավալում մեծ բովանդակություն ապահովելու կարողությունն ավելի տպավորիչ է դարձնում պատկերագիրքը: Ի դեպ, առաջաբանի հայերեն ու ռուսերեն տեքստերը մեկը մյուսի սոսկ կրկնությունը չեն: Եթե ռուսերենում փորձ է արվում ապացուցելու, որ Արցախը հայկական երկրամաս է, հայերենում դրա կարիքը չի եղել:

«Գանձերում» Արցախը ներկայացվում է որպես հայ հայրենիքի անքակտելի մաս, որպես հայկական մշակութային տարածաշրջանի օրգանական շարունակություն, հայ ժողովրդի պատմության մեջ կարևոր տեղ գրաված մշակույթի օջախներից մեկը:

Վերջակետից առաջ, այնուամենայնիվ, չենք կարող չասել նաև, որ իր ճանաչողական, ճշմարիտ գիտական արժեքի և դրանից բխող քաղաքական հնչեղության հետ միաժամանակ, «Արցախի գանձերը» պարտք ու պարտավորություն է պարտադրում արցախագիտությանը: Շահեն Մկրտչյանը կարողացել է մեկտեղել Արցախի հիմնականում քրիստոնեական մշակույթի մի մասը միայն, իսկ հազարավոր նմուշներ դեռևս սպասում են իրենց մեկտեղողին ու հետազոտողին: Հեղինակը կարողացել է ի մի բերել մի մասը այն ամենի, ինչ գտնվում է հողի երեսին, բաց երկնքի տակ: Մինչդեռ առայսօր անձեռնամխելի է մնացել հողի ընդերքը, ուր անթեղված են հազարամյակների քաղաքակրթության վկաները:

Այսօր արդեն տեսանելի ու շոշափելի ճշմարտություն է, որ Ադրբեջան դարձած Արևելյան Անդրկովկասը, նրա մաս կազմող Արցախի հետ հայի բնական հայրենիքն է եղել այն հեռավոր ժամանակներից, երբ հայ ժողովուրդը առանձնացավ հնդեվրոպական նախամայր հանրությունից որպես ինքնուրույն էթնիկական միավոր: Վկայությո՞ւն է հարկավոր: Վկան՝ մարդկային արարչագործ ձեռքերի հետքերը պահած Ազոխի քարանձավը: Վկան՝ անտիկ շրջանի հունահռոմեական քար-

տեզներում տեղ գտած Գիշ ամրոցը: Վկան՝ շումերաաքադական էպոսում ներկայացված մեր հեռավոր նախնիների աստվածային պանթեոնի մայր աստվածությունը՝ Տուտուն, որն այսօր էլ հայոց լեզվում ամենօրյա գործածական բառ է, արևմտահայ խոսվածքում մեծ մայր, տատիկ, Ղարաբաղի բարբառում՝ դանդաղաշարժ, թուլակամ կին իմաստներով:

Ընդամենը մեկ բառ, որը պատռում է դարերի մշուշը և տեսանելի դարձնում պատմական իրականությունը: Ո՞վ գիտե, միգուցե լեզվական նյութից բացի Արցախի հողն էլ իր ընդերքում պահած լինի շումերական ժամանակների հայոց գիրը, և հնագիտական պրպտումներով մի օր լույս աշխարհ գա այն: Չէ՞ որ շումերական էպոսում Արատտայի մասին բավականին հարուստ տեղեկություններից է նաև այն, որ Արատտայի գերագույն քուրմը սուրհանդակին հանձնեց

Բառերը լուսե աղյուսի տեսքով:

Ահա թե ինչու «Արցախի գանձերը» ինքն իրենով ոչ միայն շատ բան է ասում ու հաստատում, այլև պարտավորեցնում է արցախագիտությանը:

# 60-ԱՄՅԱԿ



Լրացավ Հայ Եկեղեցու բազմավաստակ հոգևորականներից մեկի՝ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի ծննդյան 60 և քահանայագործության 40-ամյակները: Այս բազմաօժտված և բոլորանվեր հայ հոգևորականի մասին միայն կարելի է ասել հետևյալը՝ իր թույլտվությամբ դիմելով իրեն.

Սիրելի՛ Սրբազան Հայր.

Ձեր 40-ամյա աստվածընծա ծառայության ընթացքում, լինի սփյուռքում, թե հայրենիքում, ճանաչվել ու ընդունվել եք որպես նվիրյալ կրոնավոր-մտավորական: Վարչական ու կազմակերպական տարբեր պաշտոններ եք վարել, եղել եք ճեմարանի տեսուչ, թեմակալ առաջնորդ, 1700-ամյակի տոնակատարությունների կրոնական հանձնախմբի վարիչ-տնօրեն, երբեք չեք դավաճանել Ձեր ստեղծագործ էությանը, նաև գրչով ծառայել եք ազգային-կրոնական մշակույթի զարգացմանը: Ձեր գրչին պատկանող տարբեր գրվածքները, հայերեն լինեն դրանք, թե անգլերեն, նվիրված են եղել Հայոց Եկեղեցու պատմությանն ու նվիրապետությանը, հայ միջնադարյան մշակույթին: Թարգմանական աշխատանքներն ու նոթագրություններն իրենց գրավիչ, անմիջական ոճով մեծ հետաքրքրությամբ են ընթերցվել: Մեծ է դրանց ճանաչողական արժեքը:

Հայ մշակույթի նկատմամբ Ձեր սերն ու սրտացավ վերաբերմունքն է այն մղիչ ուժը, որով պայմանավորված է Ձեր հովանավորչական գործունեությունը: Որքա՜ն երախտապարտ են Ձեզ հայ գիտական մտքի այն բոլոր մշակները, որոնց աշխատանքի պտուղները լույս են տեսել Ձեր աջակցությամբ՝ Ձեր խնայած միջոցներով: Որքա՜ն երախտապարտ են Ձեզ այն բոլոր կարիքավոր ուսանողներն ու զոհված ազատամարտիկների ընտանիքները, որոնց հովանավորությունն եք ստանձնել՝ ղեկավարելով «Մեծն Ներսես» բարեսիրական ցրասենյակը:

Ողջ աշխարհի ապագայի հայորդիները երախտապարտ են լինելու Ձեզ այն աշխատանքի համար, որ իրագործում եք Փարիզում հաստատված «Հայրենիք և մշակույթ» կենտրոնի գործունեության շրջանակում ի նպաստ հայոց հուշարձանների պահպանմանն ամբողջ աշխարհում և խոնարհված եկեղեցիների նորոգմանը հայրենիքում:

Առանձնահատուկ սիրով են հիշվում Ձեր կազմակերպած ուխտագնացությունները դեպի Արևմտյան Հայաստան: Այդ նախաձեռնությունը տասնամյակներում քողարկված ազգային բաղձանքի մարմնացումն էր ուխտի բոլոր մասնակիցների համար, իսկ տեսաժապավենի օգնությամբ ականատես բազմահազար հայրենակիցների համար՝ հեռակա հաղորդակցման հնարավորություն ազգային սրբությունների հետ:

Ազնիվ մտավորական, գրող, բարերար, հրատարակիչ,- ահա ոչ լրիվ, բայց խոսուն այն մակդիրները, որով ամեն մի հայ հպարտությամբ բնութագրում է Ձեզ: Եվ որքա՜ն կշահեր հայ իրականությունը, եթե ամեն մի հայ աշխարհական, թե հոգևորական, իր կարողությունների չափով իբրև օրինակ վերցներ Ձեզ, առաջնորդվեր Ձեր կերպարով:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է Ձեր ծննդյան 60 և քահանայագործության 40-ամյակները՝ մաղթելով Ձեզ քաջառողջ կյանքի տարիներ և հետագա ստեղծագործական հաջողություններ:

*«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Փետրուարի 4-ին, կիրակի.- Դ. կիրակի զկնի Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մակար վրդ. Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Ես եմ, մի երկնչիք» (Մատթ. ԺԴ 27) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Փետրուարի 10-ին, շաբաթ.- Սրբոցն Սարգսի զօրավարին եւ որդւոյ նորա Մարտիրոսին եւ չորեքտասան զինուորացն:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սահակ աբղ. Ծաքարյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը քարոզ խոսեց՝ «Ամենասուրբ Երրորդութեան ընտրեալ ծառայ եւ հաւատարիմ» (Շարական) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Փետրուարի 11-ին, կիրակի.- Ե. կիրակի զկնի Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գալուստ վրդ. Դարբինյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Երանի, որ քաղցեալ իցեն արդարութեան» (Մատթ. Ե 6) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Փետրուարի 14-ին, չորեքշաբթի.- Պահք: Տեառնընդառաջ: Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի Տաճարն:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Զարեհ վրդ. Ավետիքյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Այժմ, ո՛վ Տեր, խաղաղութեամբ արձակիր քո ծառային» (Ղուկ. Բ 29) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Փետրուարի 18-ին, կիրակի.- Զ. կիրակի զկնի Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս վրդ. Հովնանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը Նավասարդյան քարոզ խոսեց (տե՛ս էջ 49):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Փետրվարի 20-ին, երեքշաբթի.- Սրբոց Ղևոնդեանց քահանայից:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը: Հրնթացս Ս. Պատարագի Սրբազան Հոր ձեռամբ կատարվեց ճեմարանավարտ չորս սարկավագների՝ Վաղարշակ Ծատուրյանի, Արսեն Բարսեղյանի, Սահակ Գասպարյանի, Արամ Մալխասյանի և Մերժ սրկ. Մայիլյանի քահանայական ձեռնադրությունը:

Ձեռնադրության ավարտին Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Փետրվարի 22-ին, հինգշաբթի.- Սրբոց Վարդանանց զորավարացն մերոց հազար երեսուն եւ վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ Պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ, կատարվեց Հայրապետական մաղթանք:

***Փետրվարի 25-ին, կիրակի.- Բուն Բարեկենդան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նարեկ ծ. վրդ. Պերպերյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Մարտի 4-ին, կիրակի.- Բ. կիրակի Քառասնորդական Պահոց (Արտաքսման):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Տաթև արքեպս. Սարգսյանը քարոզ խոսեց՝ «Շնորհեա մեզ, Տէր, ճաշակել զքաղցրութիւն քոց պատուիրանաց» (Շարական) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Մարտի 11-ին, կիրակի.- Գ. կիրակի Քառասնորդական Պահոց (Անառակին):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ավետիս աբղ. Սահակյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Շահե արքեպս. Աճեմյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*Մարտի 18-ին, կիրակի.- Դ. կիրակի Քառասնորդական Պահոց (Տնտեսին):*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբեղա Նանյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը խավար պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*Մարտի 25-ին, կիրակի.- Ե. կիրակի Քառասնորդական Պահոց (Դատավորին):*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գևորգ աբղ. Սարոյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Թադեոս վրդ. Ջիրեկյանը խավար պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

# "ЭЧМИАДЗИН" ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА

## (Февраль - март 2001)

1. Выступление Его Святейшества Гарегина II, Верховного Патриарха и Католикоса всех армян, на открытии Выставки армянского культурного наследия в Британской Библиотеке, посвященной 1700-летию принятия христианства как государственной религии в Армении, Лондон, 1 марта 2001 г., (с. 3-5).

## ПАТРИАРХАЛЬНЫЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВЕНИЯ

2. Благословение и поздравление Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян учебному заведению Мелконян АББО в Никозии (Кипр), 7 февраля 2001 г., № 131 (с. 6-7).
3. Благословение и поздравление Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян учебному заведению Манукян-Демирчян АББО в Лос Анджелесе, 20 февраля 2001 г., № 134, (с. 8-9).
4. Пожалование патриархальных наград (в течение февраля и марта) ряду служителей Армянской церкви и светским лицам, награждение орденами "Св. Нерсес Шнорали" и "Св. Саак - Св. Месроп", а также благословения и поздравления (с. 10).

## ОФИЦИАЛЬНАЯ ИНФОРМАЦИЯ

5. Аудиенция официальной грузинской делегации, под руководством Государственного министра Георгия Арсенишвили, у Его Святейшества Гарегина II в Святом Престоле, 17 февраля 2001 г. (с. 11).
6. Собрание Конгрегации в Святом Престоле Эчмиадзина, 19-21 февраля 2001 г. (с. 12).
7. Участие Его Святейшества Гарегина II в Национальном Собрании РА на открытии Международной конференции "Церковь, государство, общество и кризис концепции мирового переустройства", организованной Международным фондом Союза православных народов в рамках межпарламентарного европейского Саммита православных, Ереван, 21 февраля 2001 г. (с. 13-14).
8. Официальный визит Его Святейшества Гарегина II в штаб-квартиру Всемирного Совета Церквей в Женеве. Во время этого же путешествия Его

Святейшество побывало в Москве и Лондоне, 23 февраля - 3 марта 2001 г. (с. 14-15).

9. Посещение Святого Престола Эчмиадзина действующим Председателем ОБСЕ Мирчой Джоаной, 28 февраля 2001 г. (с. 15-16).
10. Аудиенция участников Ереванской встречи начальников железных дорог в святом Престоле у Его Святейшества Гарегина II, 6 марта 2001 г. (с. 16).
11. Поздравление Его Святейшества Гарегина II армянским женщинам по случаю 8 Марта, 9 марта 2001 г., (с. 16-17).
12. Аудиенция делегации межправительственной армяно-американской рабочей группы в Святом Престоле у Его Святейшества Гарегина II, 7 марта 2001 г. (с. 17-18).
13. Аудиенция делегации Палаты представителей Кипра, под руководством Председателя Спироса Киприану, в Святом Престоле у Его Святейшества Гарегина II, 17 марта 2001 г. (с. 18-19).
14. Католикос Гарегин II, "Святой Эчмиадзин вдохновил и осветил путь их миссии". Празднование 300-летия основания Конгрегации Мхитаристов в зале Святого Престола, 24 марта 2001 г. (с. 19-20).
15. **Собрания в Святом Престоле**
    а) Очередное собрание исполнительного органа церковной комиссии по 1700-летию, 27 марта 2001 г. (с. 21-22).
    б) Ежегодное собрание руководителей Круглого стола Всемирного Совета церквей, 27 марта 2001 г. (с. 22-23).
16. Заседание Верховного церковного Совета в Святом Престоле Эчмиадзина, 28-30 марта 2001 г. (с. 23-24).
17. Аудиенция руководителей Коммунистических партий России и Украины в Святом Престоле у Его Святейшества Гарегина II, 30 марта 2001 г. (с. 25).

## В СВЯТОМ ПРЕСТОЛЕ И ЕПАРХИЯХ

18. **ДПИР ГАЙК БАРСЕГЯН** - Церемония, посвященная 1550-летию героической Аварайрской битвы, Св. Эчмиадзин, 22 февраля 2001 г. (с. 26-31).
19. **ДЬЯКОН АРУТЮН АРУТЮНЯН** - Пожалование архимандритских титулов в церкви Св. Месропа в Ошакане, 21-22 февраля 2001 г. (Помещены биографии архимандритов Езраса Нерсесяна, Дереника Давтяна и Аршака Хачатряна) - (с. 32-39).
20. Посвящение в сан священников и пожалование клобуков в Кафедральном соборе Св. Эчмиадзина, 18-19 февраля 2001 г. (Помещены биографии аббата Игнатиоса Малхасяна и священников Арутюна Цатуряна, Зенона Барсегяна, Татула Гаспаряна, Гевонда Маиляна) - (с. 40-47).
21. Информация (Официальная церемония принятия Республики Армения в Совет Европы, Страсбург, 25 января 2001 г.; церемонии 2-4 февраля

Межцерковной организации им. Филокцении Католической церкви, посвященные 1700-летию Армянской церкви) - (с. 48).

## РЕЛИГИОЗНАЯ ИНФОРМАЦИЯ

22. Проповедь архимандрита Комитаса Овнаняна в Кафедральном соборе Св. Эчмиадзина, 18 февраля 2001 г. (с. 49-52).
23. Выступление архимандрита Артака Тиграняна на открытии Собрания Конгрегации, 19 февраля 2001 г. (с. 53-54).

## РЕЛИГИОЗНЫЕ ИССЛЕДОВАНИЯ

24. Естественное (божественное) таинство закона и правления в философии истории Ованеса Тероенца (с методологической точки зрения) - (научное исследование) - (с. 55-62).
25. **ЛИЛИТ СЕЙРАНЯН** - От богоборчества до восславления Бога (научное исследование) - (с. 63-78).

## ИСТОРИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

26. **АЗАТ БОЗОЯН** - Каковы памятники "Армянского Права" эпохи Багратидов? (научное исследование) - (с. 79-85).
27. **АЛЕКСАНДР ТАДЕВОСЯН** - Обучение Макара Екмаляна в Санкт-Петербурге (научное исследование) - (с. 86-95).
28. **ПЕТРОС ОГАНИСЯН** - Ценный документ о положении Святого Престола в 1920-тых годах (новонайденное письмо архиепископа Месропа Тер-Мовсисяна профессору Николаю Адонцу) (научное исследование, текст) - (с. 96-104).
29. **АНАИТ МУРАДЯН** - Из истории армянской периодической прессы (Журнал "Сион") - (научное исследование) - (с. 105-109).

## РЕЦЕНЗИИ

30. **АРТАШЕС АКОПДЖАНЯН** - "Сокровища Арцаха" (об исследовании альбоме Шаэна Мкртчяна) - (с. 110-115).

31. 60-летие (60-летие рождения и 40-летие церковной деятельности архиепископа Месропа Ашчяна) - (с. 116-117).
32. Краткие церковные новости. Информация о Святой Службе, проповедях и других церемониях в Кафедральном соборе и Св. Престоле Эчмиадзина в течение февраля-марта 2001 г. (с. 118-120).

# "ETCHMIADZIN"
# OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
## (February - March 2001)

1. Speech of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, at the Opening Ceremony of the Exhibition "Treasures of the Arch" in the British Library, dedicated to the 1700th Anniversary of the Adoption of Christianity as State Religion in Armenia, London, 1 March 2001 (p. 3-5).

## PATRIARCHAL ENCYCLICALS AND BLESSINGS

2. Blessing and Congratulation Message of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, to the AGBU Melkonian School of Nicosia (Cyprus), 7 February 2001, no. 131 (p. 6-7).
3. Blessing and Congratulation Message of His Holiness Gareguin II, Catholicos of all Armenians, to the AGBU Manoukian-Demirchian School of Los Angeles, 20 February 2001, no. 134 (p. 8-9).
4. Patriarchal Orders "St. Nerses Shnorhali" and "St. Sahak - St. Mesrop", as well as Blessing and Congratulation Messages granted in February and March to a number of Armenian Church Prelates and Laymen (p. 10).

## OFFICIAL INFORMATION

5. Audience given at the Holy See by His Holiness Gareguin II to the Georgian Official Delegation headed by State Ministre Gueorgui Arsenashvili, 17 February 2001 (p. 11).
6. Congregation Meeting at the Holy See of Echmiadzin, 19-21 February 2001 (p. 12).
7. Visit of His Holiness to the National Assembly of RA on the Occasion of the Opening Ceremony of the International Conference "The Church, the State, the Society and the Crisis of World Reconstruction Concept", organized by the International Fund of Orthodox Nations Unity within the Frame of the European Interparliamentarian Summit of Orthodoxes, Yerevan, 21 February 2001 (p. 13-14).
8. Official Visit of His Holiness Gareguin II to the Head-Quarters of the World Churches Council in Geneva. During the same Trip His Holiness visited also Moscow and London, 23 February - 3 March 2001 (p. 14-15).
9. Visit to the Holy See of OSCE Chairman-in-Office Mircea Geoana, 28 February 2001 (p. 15-16).

10. Audience given at the Holy See by His Holiness Gareguin II to the Members of the Railway Heads Meeting in Yerevan, 6 March 2001 (p. 16).
11. Message of Congratulation of His Holiness Gareguin II to Armenian Women on the Occasion of the 8 March, 9 March 2001 (p. 16-17).
12. Audience given at the Holy See by His Holiness Gareguin II to the Armeno-American Intergovernmental Working Group, 7 March 2001 (p. 17-18).
13. Audience given at the Holy See by His Holiness to the Delegation of the House of Representatives of Cyprus, headed by Speaker Spiros Kiprianu, 17 March 2001 (p. 18-19).
14. Catholicos Gareguin II, "Saint Echmiadzin has inspired and enlightened their Mission". Celebration of the 300th Anniversary of the Mekhitarists Congregation at the Hall of the Holy See, 24 March 2001 (p. 19-20).
15. **Meetings at the Holy See of Echmiadzin**
    a) Regular Session of the 1700th Anniversary Celebration Ecclesiastical Commission Executive Body, 27 March 2001 (p. 21-22).
    b) Annual Session of the Round Table Heads of the World Churches Council, 27 March 2001 (p. 22-23).
16. Session of the Supreme Ecclesiastical Council at the Holy See of St.- Echmiadzin, 28-30 March 2001 (p. 23-24).
17. Audience given at the Holy See by His Holiness Gareguin II to the Heads of Russian and Ukrainian Communist Parties, 30 March 2001 (p. 25).

## AT THE HOLY SEE AND IN THE DIOCESES

18. **DPIR HAYK BARSEGHIAN** - Ceremony dedicated to the 1550th Anniversary of the Heroic Battle of Avarayr, St.-Echmiadzin, 22 February 2001 (p. 26-31).
19. **DEACON HAROUTIUN HAROUTIUNIAN** - Archimandrites Nomination at the St. Mesrop Church of Oshakan, 21-22 February 2001 (Biographies of Archimandrites Ezras Nersessian, Derenik Davtian and Arshak Khachatrian) - (p. 32-39).
20. Priest Ordination and Mitre Donation at the Cathedral of the Holy See of Echmiadzin, 18-19 February 2001 (Biographies of Abbot Ignatios Malkhassian and Priests Haroutiun Tzatourian, Zenon Barseghian, Tatoul Gasparian, Guevond Mailian) - (p. 40-47).
21. Information (Official Ceremony of the Republic of Armenia Admission to the Council of Europe, Strasbourg, 25 January 2001; Ceremonies of the 2th-4th February of the Inter-ecclesiastical Philoxenical Organization of the Catholic Church, dedicated to the 1700th Anniversary of the Armenian Church) - (p. 48).

## RELIGIOUS INFORMATION

22. Sermon delivered by Archimandrite Komitas Hovnanian at the Cathedral of Saint-Echmiadzin, 17 February 2001 (p. 49-52).
23. Speech of Archimandrite Artak Tigranian at the Opening Ceremony of the Congregation Meeting, 19 February 2001 (p. 53-54).

## RELIGIOUS STUDIES

24. **RIMA A. MIROUMIAN** - The Natural (Divine) Mystery of Law and Government in the Philosophy of History by Hovhannes Teroyents (from the Methodological Viewpoint) - (investigation) - (p. 55-62).
25. **LILIT SEYRANIAN** - From the Battle against God-to-God Praising (investigation) - (p. 63-78).

## HISTORICAL STUDIES

26. **AZAT BOZOYAN** - Which are the Documents of the "Armenian Law" of the Bagratides Period? (investigation) - (p. 79-85).
27. **ALEXANDRE THADEVOSSIAN** - Studying Years of Makar Ekmalian in Saint-Petersburg (investigation) - (p. 85-95).
28. **PETROS HOVHANNISSIAN** - A Valuable Document about the Situation of the Holy See in the 1920-ties (A new-found Letter of Archbishop Mesrop Ter-Movsissian to Professor Nicolas Adontz - (investigation) - (p. 96-104).
29. **ANAHIT MOURADIAN** - Pages from the History of Armenian Periodic Press (the Journal "Sion") - (investigation) -(p. 105-109).

## CRITICAL REVIEW

30. **ARTASHES HACOBJANIAN** - "The Treasures of Artzakh" (On the Research Work-Album of Shahen Mekertchian) - (p. 110-115).

31. 60th Anniversary (60th Anniversary of Birth and 40th Anniversary of Ecclesiastic Career of Archbishop Mesrop Ashjian) - (p. 116-117).
32. Brief Church News. Information about the Holy Masses, Sermons and other Ceremonies held at the Holy See and the Cathedral of Saint-Echmiadzin in February and March (p. 118-120).

# "ETCHMIADZINE"
# ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
## (Février-Mars 2001)

1. Intervention de Sa Sainteté Garéguine II, Patriarche Suprême et Catholicos de tous les Arméniens, a l'inauguration de l'Exposition du patrimoine culturel arménien a la British Library, dédiée au 1700e anniversiare de l'adoption du christianisme comme religion d'Etat en Arméme, Londres, 1er mars 2001 (p. 3-5).

## BENEDICTIONS ET ENCYCLIQUES PATRIARCAUX

2. Message de bénédiction et de félicitation de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, à l'Ecole Melkonian de l'UGAB de Nicosie (Chypre), 7 février 2001, no. 131 (p. 6-7).
3. Message de bénédiction et de félicitation de Sa Sainteté Garéguine II, Catholicos de tous les Arméniens, a l'Ecole Manoukian-Démirtchian de l'UGAB de Los Angeles, 20 février 2001, no. 134 (p. 8-9).
4. Distinctions patriarcales (au cours des mois de février et de mars), remise des ordres "St.-Nerses Chnorhali" et "St. Sahak-St. Mesrop", ainsi que de messages de bénédiction et de félicitation à un certain nombre de prélats de l'Eglise arménienne et de personnalités laïques) (p. 10).

## INFORMATION OFFICIELLE

5. Audience donnée au Saint-Siège par Sa Sainteté Garéguine II à la délégation officielle géorgienne menée par Guéorgui Arsénachvili, Ministre d'Etat, 17 février 2001 (p. 11).
6. Réunion de la Congrégation au Saint-Siège d'Etchmiadzine, 19-21 février 2001 (p.12).
7. Présence de Sa Sainteté Garéguine II à l'Assemblée Nationale de la RA, a l'inauguration de la Conférence internationale "L'Eglise, l'Etat, la société et la crise de la conception de la reconstruction du monde", organisée par le Fonds international de l'Union des nations orthodoxes dans le cadre du Sommet interparlementaire européen des Orthodoxes, Erévan, 21 février 2001 (p. 13-14).
8. Visite officielie de Sa Sainteté Garéguine II à Genève, siège du Conseil mondial des Eglises. Au cours du même voyage, Sa Sainteté a également visité Moscou et Londres, 23 février -3 mars 2001 (p. 14-15).

9. Visite au Saint-Siège d'Etchmiadzine de Mircea Geaona, président en fonction de l'OSCE, 28 février 2001 (p. 15-16).
10. Audience donnée au Saint-Siège par Sa Sainteté Garéguine II aux membres de la séance d'Erévan des responsables des chemins de fer, 6 mars 2001 (p. 16).
11. Message de félicitation de Sa Sainteté Garéguine II aux femmes arméniennes à l'occasion du 8 mars, 9 mars 2001 (p. 16-17).
12. Audience donnée au Saint-Siège par Sa Sainteté Garéguine II à la délégation du groupe intergouvernemental arméno-américain, 7 mars 2001 (p. 17-18).
13. Audience donnée au Saint-Siège par Sa Sainteté Garéguine II à la délégation de la Chambre des Députés de Chypre, menée par son Président Spiros Kiprianu, 17 mars 2001 (p. 18-19).
14. Catholicos Garéguine II, "Saint-Etchmiadzine a inspiré et éclairé le chemin de leur mission". Célébration du 300e anniversaire de la Congrégation des Mekhitaristes à la salle du Saint-Siège, 24 mars 2001 (p. 19-20).
15. **Réunions au Saint-Siège d'Etchmiadzine**
    a) Réunion régulière de l'organisme exécutif de la Commission ecclésiastique du 1700e anniversaire, 27 mars 2001 (p. 21-22).
    b) Réunion annuelle des dirigeants de la Table ronde du Conseil mondial des Eglises, 27 mars 2001 (p. 22-23).
16. Séance du Conseil ecclésiastique suprême au Saint-Siège d'Etchmiadzine, 28-30 mars 2001 (p. 23-24).
17. Audience donnée au Saint-Siège par Sa Sainteté Garéguine II aux dirigeants des Partis communistes de Russie et d'Ukraine, 30 mars 2001 (p. 25).

## AU SAINT-SIEGE ET DANS LES DIOCESES

18. **DPIR HAYK BARSEGHIAN** - Cérémonie consacrée au 1550e anniversaire de la bataille héroïque d'Avarayr, St.-Etchmiadzine, 22 février 2001 (p. 26-31).
19. **DEACON HAROUTIUN HAROUTIUNIAN** - Nomination d'archimandrites à l'église Saint-Mesrop d'Ochakan, 21-22 février 2001 (Biographies des archimandrites Ezras Nersessian, Dérénik Davtian et Archak Khatchatrian) - (p. 32-39).
20. Ordination de prêtres et donation de mitres à la Cathédrale du Saint-Siège d'Etchmiadzine, 18-19 février 2001 (Biographies de l'abbé Ignatios Malkhassian et des prêtres Haroutiun Tzatourian, Zénon Barséghian, Tatoul Gasparian, Guévond Mailian) - (p. 40-47).
21. Information (Cérémonie officielle de l'admission de la République d'Arménie au Conseil de l'Europe, Strasbourg, 25 janvier 2001; cérémonies des 2-4 février de l'Organisation interecclésiastique philoxénique de l'Eglise catholique, consacrées au 1700e anniversaire de l'Eglise arménienne) - (p. 48).

## INFORMATION RELIGIEUSE


22. Sermon prononcé par l'archimandrite Komitas Hovnanian à la Cathédrale de Saint-Etchmiadzine, 18 février 2001 (p. 49-52).
23. Intervention de l'archimandrite Artak Tigranian à l'inauguration de la Réunion de la Congrégation, 19 février 2001 (p. 53-54).


## ETUDES RELIGIEUSES


24. **RIMA A. MIROUMIAN** - Le mystère naturel (divin) de la loi et du gouvernement dans la philosophie de l'histoire de Hovhannès Téroyents (du point de vue méthodologique) - (recherche scientifique) - (p. 55-62).
25. **LILIT SEYRANIAN** - Du combat contre Dieu jusqu'à la louange de Dieu (recherche scientifique) - (p. 63-78).


## ETUDES HISTORIQUES


26. **AZAT BOZOYAN** - Quels sont les documents du "Droit arménien" de l'époque des Bagratides? (recherche scientifique) - (p. 79-85).
27. **ALEXANDRE THADEVOSSIAN** - Les études de Makar Ekmalian à Saint-Pétersbourg (recherche scientifique) - (p. 86-95).
28. **PETROS HOVHANNISSIAN** - Précieux document sur la situation du Saint-Siège aux années 1920 (Lettre nouvellement découverte de l'archevêque Mesrop Ter-Movsissian au professeur Nicolas Adontz) - (recherche scientifique, texte) - (p. 96-104).
29. **ANAHITE MOURADIAN** - Pages de l'histoire de la presse arménienne ( La Revue "Sion" - (recherche scientifique) - (p. 105-109).


## CRITIQUE LITTERAIRE


30. **ARTACHES HACOBDJANIAN** - "Les trésors de l'Artzakh" (Sur la recherche-album de Chahen Mekertchian) - (p. 110-115).

31. 60e anniversaire (60e anniversaire de la naissance et 40e anniversaire de la carrière ecclésiastique de l'archevêque Mesrop Astchian) - (p. 116-117).
32. Brèves nouvelles ecclésiastiques. Information sur les Saintes Messes, les sermons et les autres cérémonies accomplies en février et en mars à la Cathédrale et au Saint-Siège d'Etchmiadzine (p. 118-120).